ԷՀՄԻԱՇՒՆ

1968 թ. III

ՌՆԷ

ԺԴ ՏԱՐԻ

Սեպտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԹԻ

679

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հայ և Անգլիկան եկեղեցիների փոխհարաբերությունը	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ խաղաղության կոչը	7
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ հուշագիր-նամակը Գալուստ Կուլպենկյան հիմնարկության նախագահին	9
ԱՅՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ	12
Շարականք Սրբոյ Խաչի	13
Ներբող ասավածընկալ սուրբ խաչի	14
Խաչը	16
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ— Գալուստ Կուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	17
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ— Գալուստ Կուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Մայր Հայաստանում	26
Հայրապետական նանդիսավոր սուրբ պատարագ Խաչվերացի տոնի առթիվ	30
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	32
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբացումը	34
Դ. ՀԱԿՈԲՅԱՆ— Ներսես Շնորհալին և իր ժամանակաշրջանը	38
Ս. ԲԱՂԻՐՅԱՆ— Հուշեր Կոմիտաս վարդապետի մասին	46
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ— Գլաձորի դպրոցի մեծ մանրանկարիչ Թորոս Տարոնացին	52
Պ. ՇԱՀԲԱԶՅԱՆ— Գեղարվեստական գրականությունը որպես դաստիարակության կարևոր խնդիրներից մեկը	59
Հանգիստ արժանապատիվ Տ. Կարապետ Քահանա Կարապետյանի	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1937 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՎ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ Կահիրեում գումարված Եպիսկոպոսական ժողովը, 1956 թվականի մարտի 8-ին, իր Ը և վերջին նիստում, զբաղվեց «Քրիստոնեական այլ եկեղեցիներու հետ հարաբերություն մշակելու» հարցով: Եպիսկոպոսական ժողովը, կարծիքների փոխանակությունից հետո, ցանկություն հայտնեց, որ «մեր եկեղեցին ևս մասնակցի զուտ կրոնական բնույթ ունեցող համաշխարհային միջեկեղեցական ժողովներուն, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմե նշանակված ներկայացուցիչներով»:

Կահիրեի Եպիսկոպոսական ժողովը առավել ևս ողջունելի մի քայլ: Նա զբաղվեց Հայ եկեղեցու «դավանակից Դպտի, Ասորի, Հարեշ և Հնդիկ-Մալաբար Արևելյան քույր եկեղեցիներու հետ հարաբերության» հարցով: Եպիսկոպոսական ժողովում որոշվեց, որ մինչև 1960 թվականը «նախապատրաստական աշխատանքներ կատարվին սույն եկեղեցիներու հետ համագումար մը ունենալու համար»:

Ուրախությամբ պետք է արձանագրել այն փաստը, որ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, քրիստոնեական սիրո և հարգանքի փոխադարձ ըմբռնումով, շատ սիրալիր և բարեկամական հարաբերություններ է մշակում առնասարակ Օրթոդոքս եկեղեցու և մասնավորաբար Ռուս Պրավոսլավ եկեղեցու հետ:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, անցյալ տարի արտասահմանում իր կատարած հովվապետական ճանապարհորդության օրերին, հատկապես Անգլիայում գտնվելու ժամանակ, զբաղվեց Հայ և Անգլիկան եկեղեցիների փոխհարաբերության ամրացման, սերտացման խնդրով: Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի այցելությունը Անգլիա մի գեղեցիկ էջ ավելացրեց Հայ և Անգլիկան եկեղեցիների բարեկամական հարաբերությունների պատմության մեջ: Վեհափառ Հայրապետը Լոնդոնում, ապրիլի 12—16-ին, Լամբեթի պալատում, անձնական հյուրը եղավ Քենտրբերիի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշերի: Առաջին անգամն էր Հայ եկեղեցու պատմության մեջ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելում էր Անգլիա, արժանանալով ջերմ ու սիրալիր ընդունելության:

Հայ եկեղեցու պատմության հատկապես վերջին 60-ամյակում սկսվել են Հայ և Անգլիկան եկեղեցիների միջև ավելի սիրալիր հարաբերություններ, որոնք այժմ, մեր օրերին, վերածվել են օրտոդոքս բարեկամության: J

Հայ եկեղեցին իր պատմության ողջ ընթացքում Քրիստոնեական Եղբայր եկեղեցիներին հետ իր հարաբերության հարցերում առաջնորդվել է միշտ քրիստոնեական ոգով, սիրո և եղբայրության սկզբունքներով: Հայ եկեղեցու համար եկեղեցական միության, համագործակցության հարցերում անխախտ օրենք է հանդիսացել «ՄԻՈՒԹԻՒՆ Ի ԿԱՐԵՒՈՐՍ, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԹԱՅՍ, ՍԻՐԵԼՈՒԹԻՒՆ ՅԱՄԵՆԱՅՆԻ» սկզբունքը: Հայ եկեղեցին ձգտել է միշտ իրականացած տեսնել քրիստոնեական եկեղեցիների բաղձալի միասնությունը: Հայ եկեղեցին ամեն օր աղոթում է «վասն միայնոյ Սուրբ և Առաքելական եկեղեցւոյ»: Այսօր էլ մեր եկեղեցին, հավատարիմ իր «ասպվածաբանական լայնախոհության և եկեղեցական ազատամտության սկզբունքներուն վրա, զորս անխախտ և անփոփոխ պահեց» (Օրմանյան), ձգտում է միության քոյր եկեղեցիների հետ, սակայն ոչ «տրպէս ալր ընդ ծառայի, այլ հաւասար ընդ հաւասարի», ինչպես նշել է Շնորհալին: Այս ոգով միությունը բարի միայն կարող է բերել եկեղեցուն: «Քրիստոնեական եկեղեցիների եղբայրական մերձեցումով և գործակցությամբ, խորհում ենք, թե ավելի զորացրած կլինենք Քրիստոսի եկեղեցին»,— պատգամում է Ամենայն Հայոց Հայրապետը Լոնդոնում, ի պատիվ Իրեն տրված պաշտոնական ընդունելության ընթացքում, Նիկիական միության ակունքում: Անգլիկան եկեղեցին և եկեղեցականությունն ու ժողովուրդը միշտ բարձր են գնահատել Հայ եկեղեցուն, «նրա քրիստոնեական խորունկ ոգին, նրա համառ հարումը Քրիստոսի հավատին և նկարագրի ու նախաձեռնության այն հարուստ և օգտակար նպաստը, որը հայերը բերում են հասարակության, ուր էլ որ գտնվեն», որովհետև նա հանդիսացել է «Արևելյան քրիստոնեության իսկությունն ու արտահայտությունը», որ «իր իմաստուն նկարագրով... ավանդական հաշիրշուքներով չի եղծանվել... և ողջամիտ է մնացել ժողովրդյան հետ շփումը չկորսնցնելու..., որ դավանաբանական կետերը նվազագույն չափի է վերածել, որ կրոնական պաշտամունքը կամայական ծաներությունները չի բարդում, իրանից դուրս եկողներին չի զրկում փրկությունից, որ ինքնատիպ եկեղեցի է, որ պահվել և զարգացել է ուրիշ եկեղեցիների ազդեցությունից դուրս, երբեք չի հանձնել նրանց գերիշխանությունը և հավատարմորեն պահպանել է Արևելյան նախնական քրիստոնեության ժառանգությունը, ինչպես որ այն կազմվել էր առաքյալներին անմիջապես հաջորդող դարում»:

Անցյալ տարի ապրիլի 13-ին Լոնդոնում, Քենտրբերիի Արքեպիսկոպոսը, ի պատիվ նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին տված պաշտոնական ընդունելության խամանակ, ողջունելով Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը Անգլիա, ասաց, որ «Հայ եկեղեցին... եզակի է քրիստոնեական եկեղեցիների մեջ, ոչ միայն առաքյալների կողմից հիմնված լինելու իր իրավունքով, այլ նաև առաջին եկեղեցին, որ դարձավ Ազգային եկեղեցի, երբ Դ դարի սկզբում Հայաստանի թագավորությունը քրիստոնեությունը ճրոչակեց որպես իր պաշտոնական կրոնը... Հայ եկեղեցին եզակի է իր ցավերով և դժվարություններով, որը պատմությունը պարտադրել է այս եկեղեցուն և Ազգին, եզակի՝ սոսկալի հալածանքների և գաղթերի իր պատմությամբ, եզակի՝ եկեղեցու հավատին իր համառ հավատարմությամբ և պաշտամունքով... և եզակի այն իրողությամբ, որ հակառակ հալածանքների նեղմտեցնող և խրստացնող ազդեցության, այս եկեղեցին մնացել է ազատամիտ, իր վարդապետական հայացքներով և լայնախոհ՝ ուրիշ եկեղեցիների հանդեպ իր կեցվածքի մեջ, ինչպես նաև իր ժողովուրդն էլ, ինքնիրեն հայտնաբերել է որպես նախաձեռնող, բազմակողմանի և մեծապես տաղանդավոր»:

Վեհափառ Հայրապետը Անգլիայում զբաղված միջոցին, ուր էլ որ գնաց, ուր էլ որ այցելեց, ամեն տեղ ողջունվեց և մեծարվեց որպես «Ընդհանրական Հայրապետը Արևելյան քրիստոնեության հին եկեղեցիներից մեկի, եկեղեցի՝ որ հաստատվել է Ս. Թադեոս և Ս. Բարթուղիմեոս առաքյալների քարոզությամբ»:

Անգլիկան Եկեղեցու Արտաքին հարաբերությունների եկեղեցական խորհուրդը, իր 1956 թվականի 18-րդ տեղեկագրում Վեհափառ Հայրապետի Անգլիա կատարած այցելության մասին գրել է.

«Ապրիլի 12—16 օրերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Ա-ը ընդունվեց Լամբեթի պալատում որպես Քենտրբերիի Արքեպիսկոպոսի հյուր: Ռազում դարերից ի վեր ոչ մի Կաթողիկոս չի դողել էջմիածինը՝ այցելելու Սիդյուտոնում ցրված իր հոտին, և առաջին անգամն է, որ մի Կաթողիկոս այցելում է Անգլիա: Անգլիա Իր այցելության օրերին Նորին Սրբությունը ներկա եղավ Լամբեթի պալատում Նիկիական ակումբի կողմից տրված ընդունելության: Նա ընդունվեց նաև Ուեստմինիստերի Աբբայարանում, Քենտրբերիի Մայր Տաճարում և Նեշտոմ սրբավայրում: Ապրիլի 15-ի կիրակի օրը Նորին Սրբությունը պատարագեց Լոնդոնի հայոց եկեղեցում: Պատարագին ներկա էր Քենտրբերիի Արքեպիսկոպոսը, որը ողջույնի հաո արտասանեց: Սուրբ պատարագի արարողության ժամանակ Կաթողիկոսը Քենտրբերիի Արքեպիսկոպոսին նվիրեց հովվական խաչ»:

Վեհափառ Հայրապետի այցելությունը Անգլիա հանդիսացավ Հայ և Անգլիկան եկեղեցիների միջև գոյություն ունեցող ավելի քան վաթսուն տարիների մեծ բարեկամության վառ ապացույցը:

Կասկած չունենք, որ փոխադարձ հարգանքի և սիրո վրա խարսխված Հայ և Անգլիկան եկեղեցիների հինավուրց բարեկամությունը կշարունակվի այսուհետև ևս՝ հոգատ երկու եկեղեցիների և ժողովուրդների կրոնական, եկեղեցական, մշակութային և տնտեսական կապերի ամրապնդման:

Լոնդոնում Վեհափառ Հայրապետը տեսակցություններ ունեցավ Քենտրբերիի Արքեպիսկոպոսի հետ, Հայ և Անգլիկան եկեղեցիների եղբայրական և բարեկամական հարաբերությունների և համագործակցության գործնական հարցերի շուրջ:

Պաշտոնական այդ տեսակցությունների ժամանակ Վեհափառ Հայրապետը խոսեց ընդհանրապես քրիստոնեության և մասնավորապես Հայ եկեղեցու մեր օրերի վերազարթման մասին. «Մենք հավատում ենք,— ասաց Վեհափառ Հայրապետը,— որ քրիստոնեությունը առհասարակ և Հայաստանյայց եկեղեցին մասնավորապես վերածնընդյան մի նոր դարաշրջան է որ սկսում են: Մենում է որ մենք՝ հոգևորականներս, այս գիտակցությամբ նվիրվենք սուրբ գործին և մոտենանք միմյանց, ավելի արդյունավետ դարձնելու համար մեր աշխատանքը: Քրիստոնեական եկեղեցիների եղբայրական մերձեցմամբ և գործակցությամբ, խորհում ենք, ըն է՛լ ավելի զորացած կլինենք Քրիստոսի եկեղեցին»:

Հայ եկեղեցին միշտ բարեմտությամբ է ընդունել քրիստոնեական եկեղեցիների միջև համագործակցության և միության առաջարկները: Եվ այսօր, ամենամանակներից ավելի, կենսական անհրաժեշտություն է, որ «Քրիստոսի բազավորության եկեղեցիները միասին աճեն ու վկայությունը տան իրենց ուժի, իրենց հավատի սրբության և պաշտամունքի»: Այսօր է մանավանդ, որ միասնական պիտի ենչի եկեղեցու ձայնը ի պաշտպանություն խաղաղության և մարդկային առաջադիմության: Այս հարցում նույն ոգին ունեն Հայ և Անգլիկան եկեղեցիները: Հայ եկեղեցին իր ողջ պատմության ընթացքում այն խորունկ համոզումն է ունեցել, որ «եկեղեցի մը, որքան ալ մեծ ըլլա ան, չի կրնար ներկայացնել ամբողջ քրիստոնեությունը, և թե յուրաքանչյուր եկեղեցի առանձին առնված կրնա սխալիլ» (Օրմանյան): Եկեղեցու այն միությունը, որին ձգտել է մեր եկեղեցին, որի համար նա աշխատում է այսօր էլ, ուրիշ բան չէ, եթե ոչ «միություն եկեղեցիներու միջև հոգևոր հաղորդակցության հիման վրա, իրենց ուրույն դիրքերը փոխադարձաբար հարգելով, իրենց սեփական շրջանակին և սահմաններուն մեջ յուրաքանչյուրն ազատություն վայելելով և քրիստոնեական սիրո ոգին տիրապետելով ամենուն»:

Անա այս ոգով, այս սկզբունքների լույսի տակ, բարեկամական հարաբերություններ են հաստատվել Հայ և Անգլիկան եկեղեցիների միջև, հարաբերություն, որ շուրջ 50 տա-

ռիե ի վեր կա արդեն ու իր բարի պտուղներն է տալիս Անգլիկան և Հայաստանյայց Առաքելական եկեղեցիների միջև»,— նկատում է Վեհափառ Հայրապետը:

«Հայ և Անգլիկան եկեղեցիների հարաբերության զարգացման և ամրապնդման ասպարեզում կարևոր դեր է կատարել նաև Ս. Երուսաղեմը, քրիստոնեության այդ մեծագույն սրբավայրը, Երուսաղեմի հայոց Առաքելական Ս. Աթոռի և Ս. Հակոբյանց վանքի և միաբանության ու Երուսաղեմի Անգլիկան եկեղեցու episkoposի միջև վաղուց հաստատվել են շատ սիրալիր և բարեկամական հարաբերություններ, որոնք արդեն աստվածահաճո մի ավանդություն են դարձած»,— նշում է Վեհափառ Հայրապետը: Տարիներով Երուսաղեմի հայոց ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում դասավանդել են Անգլիկան եկեղեցու հոգևորականներ: Երուսաղեմի մեր միաբան վարդապետներից շատերը իրենց աստվածաբանական ուսումը շարունակել են Անգլիայում, անգլիական աստվածաբանական կոլեջներում:

Վեհափառ Հայրապետի Անգլիա այցելությամբ և անձնական ծանոթությամբ «Հայ և Անգլիկան քույր եկեղեցիների միջև փոխադարձ հարգանքն ու սերը է՛լ ավելի պիտի աճեն և քրիստոնեական մեր եղբայրությունը պիտի գառնա մի ամուր ամրոց»,— հայտարարել է Վեհափառ Հայրապետը Անգլիա այցելության օրերին:

Առաստանմանյան հովվապետական հանապարհորդությունից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադառնալուց հետո, Վեհափառ Հայրապետի և Քենտբերիի Արքեպիսկոպոսի միջև կատարվեցին նամակագրություններ, որոնք հրատարակվեցին մեր ամսագրի սույն թվականի մայիսի համարում, կոնկրետ հողի վրա դնելու համար Անգլիայում «փոխադարձ սիրո և համակրանքի պայմաններում ստեղծված փոխըմբռնումը» Հայ և Անգլիկան եկեղեցիների պետերի միջև:

«Առաջիկա տարվա սկզբներից կսկսվեն Երուսաղեմում Հայ և Անգլիկան եկեղեցիների ներկայացուցիչների միջև պաշտոնական խորհրդակցություններ, կողմերի երեքական բարձրաստիճան հոգևորական ներկայացուցիչների մասնակցությամբ:

Թո՛ղ ընդմիշտ աճի, պտղաբերի Հայ և Անգլիկան եկեղեցիների սերտ միությունը:

Թո՛ղ Տերը զորացնի և պահպանի քրիստոնեական սիրո և եղբայրության ոգին Անգլիկան և Հայ եկեղեցիների միջև:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ

ԿԱՆԽԵԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲՆԱՋՆՋՄԱՆ ՄԵԾ ԱՂԵՏՆԵՐՈՒ ՎՃՌԱԿԱՆՈՐԵՆ ԱՐԳԵԼԵԼ ԱՏՈՄԱՅԻՆ ԵՎ ՋՐԱԾՆԱՅԻՆ ԶԵՆՔԸ

Խաղաղության գաղափարը մարդկային գիտակցության մեջ, ինչպես և ներդաշնակության օրենքը տիեզերքի մեջ, արտահայտություններն են տիեզերքի և մարդու արարիչ Աստուծո կամքի: Խաղաղության իդեալը՝ տիեզերական ներդաշնակության ցոլացումն է մարդու հոգու մեջ:

Մենք՝ քրիստոնյաներս, հավատում ենք, որ խաղաղությամբ պիտի գրտնենք «ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»:

Ինչպես միշտ և բոլոր երկիրների տակ, այսօր ևս մտատանջ մարդկության հոգին այդ խաղաղությունն է փնտռում: Մենք բոլորս, ով էլ որ լինենք, ուր որ էլ գտնվենք, պարտավոր ենք օգնել մեր նմաններին՝ գտնելու համար խաղաղության ճանապարհը, որ բազմադարյան ոսկի երազն է համայն մարդկության:

Առողջ ու բարի կամքի տեր մարդիկ իրենց կյանքի երջանկությունը, իրենց ժողովուրդների բարօրությունը, իրենց հայրենիքների ապահովությունն ու թարգավաճումը, իրենց արդար ու գեղեցիկ իդեալների իրականացումը պիտի կարողանան գտնել միայն խաղաղության պայմանների մեջ:

Ժողովուրդների և մարդկանց կյանքին սպառնացող ատոմային ու ջրածնային զենքերի փորձարկումների վտանգի առջև, նվիրական պարտք ենք համարում լսելի դարձնել նաև մեր խոսքը՝ ճանուն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու, ճանուն հայ հավատացյալ ժողովրդի:

Մեր ժողովուրդը, մեր փոքրիկ Հայ Ազգը մեկն է այն ժողովուրդներից, որ անավոր չափերով է տուժել անցած պատերազմների ընթացքում: Մոտ հազար տարի է, որ մեր ժողովրդի կյանքի բաժինն է եղել հալածանք, հարստահարություն և չարդ: Հազար տարիներ շարունակ մեր երկիրը շատ հաճախ բատերաբեմ է եղել պատերազմների՝ արշավող բարբարոս ու բռնակալ սմբակների ներքև: Բավակա՛ն է այլևս: Հայ ժողովուրդը չի կամենում, որ վերստին ավերակի վերածվի իր Մայր Հայրենիքը, որ անա երեք-չորս տասնամյակներից ի վեր վերածնվել է, հասակ է առնում և խաղաղության

արևի տակ սեռում է ու ջենջնում: Կա՞ հայ մարդ, որ տարբեր մտածի: Ո՞չ: Հայ Եկեղեցին, հայ ժողովուրդը չեն կամենում պատերազմ: Չեն կամենա պատերազմ ո՞չ ոքի համար, աշխարհի ո՞չ մի անկյունում: Մեր խղճն ու Մեր իդեալն է՝ «խաղաղութիւն ճեռատրաց, խաղաղութիւն մերձաւորաց», «խաղաղութիւն ամենեցուն»:

Մենք, իբրև արտաքայտիչը մեր ժողովրդի սրտի ու կամքի, որպես արտաքայտիչը մեր Սուրբ Եկեղեցու քրիստոնեական խղճի, ողջունում ենք Մեր Հայրենիքի՝ Սովետական Միության խաղաղության օգտին կատարած վերջին առաջարկները և մեր սուրբ հավատի կենտրոն՝ բազմադարյան Սուրբ Էջմիածնից օրհնագին կոչ ենք ուղղում բոլորին, մանավանդ մեծ պետությունների բոլոր մեծահարգ ղեկավարներին, որ կանգ առնեն պատերազմ հրդեհավարելու իրենց որոնումների մեջ և գտնեն խաղաղության ճանապարհները՝ համբերությամբ ու լավատեսությամբ, որ դադարեցնեն ամեն տեսակ ատոմային զենքերի փորձարկումները և փորձեն իրար հասկանալ փոխադարձ զիջումներով՝ ճշմարտության և արդարության բարի գենքերով, որ այլևս չսերմանեն ատելություն մարդկանց և ժողովուրդների միջև, այլ իրար ճանաչեն, իրար գնահատեն ու իրար օգնեն այս աշխարհի վրա, որ իր բազում բարիքներով բոլորին է պատկանում հավասարապես, այս արևի տակ, որ բոլորին է լուսավորում և ջերմացնում հավասարապես, միայն Աստուծո օրհնության ներքև, որ բոլորին է բաշխվում հավասարապես:

Հայ ժողովրդի Սուրբ Եկեղեցին օրհնում է խաղաղության սուրբ գործը և հաջողություն է մաղթում խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար բոլոր աշխատողներին:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին
5 սեպտեմբերի 1957 թ.

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՒՇԱԳԻՐ-ՆԱՄԱԿԸ ԳԱԼՈՒՍՏ ԿՑՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ԳԱԼՈՒՍՏ ԿՑՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ՝ ԴՈԿՏՈՐ ԺՈԶԵ ԴԵ ԱԶԵՐԵԴՈ ՊԵՐԴԻԳԱՈՑԻՆ.

ԼՈՆԴՈՆ

Պարոն Նախագահ.

Մենք մեծ հաճույքն ունեցանք մոտ տասը օրեր Ս. Էջմիածնում ընդունելու Ձեր հարգարժան ներկայացուցիչներին՝ սբ Սիդնի Քեյնին և հարտարապետ պարոն Եդվարդ Ուրուելյանին:

Այս անձնավորությունները, Ձեր Հիմնարկության կողմից ստացած հանձնարարությունների համաձայն, տեղում մանրամասն ճանաչեցին Ս. Էջմիածնի իրական կացությունը, ծանոթացան Մեր կարիքներին և Մեր ծրագրերին, և համբերությամբ լսեցին Մեր բոլոր բացատրությունները՝ ներկայիս կատարվող և ապագային կատարվելիք աշխատանքների մասին:

Մենք իրապես համոզված ենք, որ սբ Սիդնի Քեյնը և պարոն Եդվարդ Ուրուելյանը Ձեզ և Ձեր գործակիցներին ճշգրիտ կերպով կներկայացնեն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի իրական պատկերը և Էջմիածնի Մայր Աթոռի առաջ դրված կարևոր խնդիրները, որոնք սպասում են իրենց լուծման:

Հարմար դատեցինք Ձեր ներկայացուցիչներին տալ նաև ընթացքի մեջ եղող և կատարվելիք շինարարական աշխատանքների ծրագրերը, յուրաքանչյուր գլխի համար կատարվելիք ծախսերի դրամական արտահայտությամբ, որպեսզի, ըստ հնարավորի, ամեն ինչ լինի պարզ և ճշտակ Ձեզ համար:

Մենք մխիթարված ենք այն մտքով, որ Մեր շինարարական ծրագրերը ամբողջովին համապատասխանում են մեծանուն Բարերարի նպատակներին, որոնց իրականացման համար Դուք տրամադրել եք Ձեր աշխատանքի եռանդը և Ձեր բարի կամեցողությունը:

Մենք հարմար ենք նկատում Ձեզ ներկայացնել երկու ծրագրեր, որոնցից մեկը՝ № 5-ը, վերաբերում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարին և այն սրբավայրերին, որոնք կազմում են նրա օժանդակ շինարարությունների անբաժանելի մասերը:

Երկրորդը՝ № 1-ը, Ս. Էջմիածնի հողամասից դուրս գտնվող սրբավայրերի և մեծարժեք հուշարձանների վերանորոգության հետ կապված աշխատանքների ընդհանուր ծրագիրն է:

Մեր առաջարկները հշգրիտ կերպով և կատարելապես պարզաբանելու համար, թույլ տվեք Ձեզ ներկայացնել հետևյալ բացատրությունները.

1) 1954—1955 տարիների ընթացքում, Ս. Էջմիածնի Մայր Տաճարը ենթարկվեց ներքին մասնակի վերանորոգության, Սովետական Հայաստանի կառավարության կողմից Մայր Աթոռին տրամադրված միջոցներով: Մոտավորապես երկու միլիոն ռուբլի ծախսվեց պատերի ներքին ծեփը բռնելու, կրկին ծեփելու և գրմանկարները ամբողջապես վերականգնելու համար:

2) 1955 թվականին ներքին կամարները և մույթերը ամրացվեցին իրենց հիմքերով: Այս ամրացումը կատարվեց երկաթ-բետոնի մի հաստ շերտով, որի համար ծախսվեց 1 200 000 ռուբլի:

Մայր Տաճարի ամբողջ տանիքը ծածկվեց գալվանիզացված թիթեղով, ժամանակավորապես այն պաշտպանելու համար անձրևի և ձյունի դեմ, մինչև ծածկի վերջնական վերանորոգությունը քարով: Ժամանակավոր այս աշխատանքը արժեց 115 000 ռուբլի:

3) 1956—1957 տարիների ընթացքում կատարվեցին հետևյալ աշխատանքները.

ա) Մայր Տաճարի հողամասի ծառուղիների ասֆալտապատում 150 000 ռ.

բ) Մայր Տաճարի ընդհանուր մուտքի պարսպապատում 450 000 ռ.

Յարդ նշված և կատարված ծախսերը, 3 915 000 ռուբլի գումարով, չեն նշանակված նախագծերի մեջ:

4) № 5 նախագծի համաձայն ընթացիկ աշխատանքները հետևյալներն են.

ա) Մայր Տաճարի հատակի մարմարապատում . . . . 409 748 ռ.

բ) Մայր Տաճարի շրջապատի սալահատակում . . . . 415 381 ռ.

գ) Մայր Տաճարի և Վեհարանի միջև գտնվող մայրի սալահատակում . . . . . 77 424 ռ.

դ) Նոր Վեհարանի շենքի կողմից Մայր Տաճարի հողամասի պարսպապատում . . . . . 441 060 ռ.

ե) Մայր Տաճարի և Վեհարանի միջև գտնվող մասի բազրիքներ և սանդուղքներ . . . . . 70 502 ռ.

Ընդամենը՝ 1 414 115 ռ.

5) Ծրագրված աշխատանքները, որոնք դեռ չեն սկսված, նշանակված են № 5 նախագծում, մոտավորապես 17 419 833 ռուբլի գումարով, և № 1 նախագծում, 13 246 000 ռուբլի արժեքով:

6) Կատարյալ հստակության համար, Մենք անհրաժեշտ ենք համարում Ձեր ուշադրության հանձնել, որ՝

ա) 2 և 3 համարների տակ կատարված աշխատանքները, որոնք արդեն նշված են վերևում, վճարված են մեր ֆոնդերից (ֆինանսական էկսմուտներ), որոնք տրված են Մայր Աթոռին արտասահմանի բարեգործների կողմից, մեր Հեմարանի և այլ բարեսիրական ու մշակութային նպատակների համար: Այսպես, անցյալ տարի, Անգլիա կատարած Մեր հայրապետական այցելության առթիվ, բարեգործներ պարոնայք Նեղսես Կյուլպենկյան և Մարֆո Գաֆրեյան նվիրեցին, առաջինը 5 000 և երկրորդը՝ 3 000 ոսկի ստերլինգ, և Լոնդոնի Արքար Տրեսոր 10 000 ոսկի ստերլինգ տվեց Հոգևոր Հեմարանի շենքի կառուցման և բարեգործական այլ նպատակների համար:

բ) Ընթացքի մեջ եղող և նախատեսված աշխատանքների համար վերոհիշյալ № 4-ով մեր ֆինանսական եկամուտներից մենք վճարել ենք կանխիկ հաշվով 15%:

գ) Միլանո քաղաքից Երկու բարեբար հայեր ստանձնել են Ս. Հռիփսիմեի սանտարի ներքին վերանորոգության ծախսերը (մնում է արտաքին վերանորոգությունը և մանավանդ պարսպի վերաշինությունը):

դ) Հալեպ քաղաքից մի հայ բարեբար ստանձնել է իր միջոցներով վերանորոգել Ս. Հողակարի մատուռի ներքին մասերը (160 000 ռուբլի), մնում է պարսպի վերաշինությունը՝ 300 000 ռուբլի:

Այս կոնկրետ ծրագրերը, որոնք անմիջական կերպով կապված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հետ, Ձեզ ներկայացնելուց հետո, Մենք հարմար ենք նկատում Ձեր հիմնարկության բարձր ուշադրության հանձնել Մեր գիտական, մշակութային և բարեսիրական ծրագրերի մի մասը, որոնց իրականացման համար Մենք հույս ունենք, որ կարելի կլինի Ձեզ համար նշանակել տարեկան օգնություն Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ընդհանուր եկամուտների հաշվին, կտակի տրամադրությունների համաձայն:

Այժմյանից Մենք կուզենայինք Ձեզ ծանոթացնել այդ ծրագրերից հետևյալներին.

ա) Գիտական հետազոտությունների տպագրության համար մի ֆոնդ (աստվածաբանական, լեզվաբանական, պատմական, կրոնական, արվեստների, հնագիտական, նկարչական և այլն).

բ) Մայր Աթոռին առընթեր արևելագիտության գիտական մի հաստատության կազմակերպումը.

գ) Մայր Աթոռին առընթեր բարեսիրական նպատակների համար մի հաստատության կազմակերպումը.

դ) Հոգևոր Հեմարանից շրջանավարտ ուսանողներին բարձրագույն ուսում ստանալու համար արտասահման ուղարկելու համար մի ֆոնդ.

ե) Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորության տակ կրոնական, կրթական, բարեսիրական հաստատությունների հիմնադրումը արտասահմանի այն կենտրոններում, որտեղ ապրում են բազմաթիվ հայեր:

Պարոն Նախագահ.

Ահա այն մտածումները ու ծրագրերը, որոնք Մեզ ներշնչեցին և Մեզ մղեցին շինարար աշխատանքի: Հավատով և լավատեսությամբ համակված, Մենք վստահ ենք, որ այս մտածումները ու ծրագրերը իրենց արձագանքը կգտնեն նաև Ձեր գիտակցության մեջ, և Դուք կանեք Ձեր լավագույնը Մեզ օգնելու համար, որպեսզի մոտ երկու հազարամյա այս հաստատությունը՝ Ս. Էջմիածինը ամրանա, պայծառանա և ծաղկի՝ ի փառս Աստուծո և ի փառավորումն հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի հիշատակի և մարդասիրական այն հիմնարկության, որը կրում է նրա անունը և ղեկավարվում է Ձեր ազնվության և Ձեր գործակիցների կողմից:

Նրախտագիտական խորունկ զգացմունքներով լցված, Մենք միշտ աղոթող ենք Ձեր հաջողության և երջանկության համար, մաղթելով, որ Տերը լինի Ձեզ օգնական և հաջողություն պարգևի Ձեր բարի և շինարար գործերին:

ՄԱՅՐԱԹԱՌԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին
2 օգոստոսի 1957 թ.

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԽԱՉԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Զի ճառ խաչին կորուսելոցն լիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ: Զի գրեալ է, Կորուսից զիմաստութիւն իմաստնոց, և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից: Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննի՝ աշխարհիս այսորիկ, ո՞չ ապարէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ: Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած, հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեանն ապրեցուցանել զհաւատացեալս:

Իսկ որովհետև հրեայք նշան հայցեն, և հեթանոսք իմաստութիւն խնդրեն, Մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս, հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն: Բայց նոցին իսկ կոչեցելոցն հրէից և հեթանոսաց, զՔրիստոս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն: Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ (Ա ԿՈՐՆԹ., Ա 18—25):

Եւ որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի (ՄԱՏԹ., Ժ 38):

Եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրացցի զանձն և առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ (ՄԱՏԹ., ԺԶ 24):

Զի թէպէտ և խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ (Բ ԿՈՐՆԹ., ԺԳ 4):

Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ և մահու խաչի (ՓԻԼԻՊ., Բ 8):

Արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս (ԿՈՂՈՍ., Ա 20):

Եւ չնչեաց զձեռագիր մերոյ հակառակութեանն հրամանօքն իւրովք որ կայր մեզ հակառակ, երարձ զայն ի միջոյ և քեռեաց ընդ խաչափայտին» (ԿՈՂՈՍ., Բ 14):

Որ զմեղս մեր իւրով մարմնովն վերացոյց ի խաչափայտն, զի լիցուք զերծեալք ի մեղաց անտի, և իցեմք արդարութեանն հեղակիցք, որոյ վիրօքն բժշկեցայք (Ա ՊԵՏՐ., Բ 24):

ԾԱՂԿԱՔԱՂ ՇԱՐԱԿՆՈՑԻՑ

ՇԱՐԱԿԱՆՔ ՍՐԲՈՑ ԽԱՉԻ

Դաւազան զօրութեան
Զխաչ Քո ետուր մեզ Քրիստոս.
Եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:

Սա է զէն յաղթութեան
Սրբեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ.
Եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:

Սա է Արքա տէրութեան
Եւ ի սմա է բազմեալ Քրիստոս Որդին Աստուծոյ.
Եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:

Սա է սեղան սրբութեան
Եւ ի սմա է պատարագեալ Քրիստոս գառն Աստուծոյ.
Եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:

Սա է կարապետ յաւուր գալստեան Փրկչին
Եւ պսակ պարծանաց հաւատացելոց.
Եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:

***

Խաչի Քո Քրիստոս երկիրպագանեմք.
Եւ զքաղաքն Քո մեծացուցանեմք.
Եւ զսուրբ զյարութիւնդ Քո փառաւորեմք.
Եկայք հաւատացեալք՝
Երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ.
Վասն զի եկն ի ձեռն խաչին իւրոյ
Շնորհեաց պարգևս աշխարհի:

Փառք սուրբ խաչին, ալէլուիա.
Սուրբ Սիոնին, ալէլուիա.
Սուրբ յարութեանն, ալէլուիա:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՆԵՐՐՈՂ ԵՈՏՎԱԾԸՆԿԵԼ ՍՈՒՐԲ ԽՍԶԻ

Օրհնված ես, աստվածազարդ Քրիստոսով պսակված սուրբ փայտ, որ միայն անշունչների և շնչավորների, ապրողների և անկենդանների մեջ՝ անճառելի շնորհին արժանանալով փառավորվեցիր, որի համար մտավոր և բանավոր էակներից պահանջում ես կամավոր երկրպագություն։

Օրհնված ես, Քրիստոսով պսակված սուրբ փայտ, որ երկրի վրա բուսնելով, դեղագույն երկնքի կամարների ծայրում արձակվելով բարձրացար՝ անկրելին քո վրա կրած պտուղ բերելով, երկինքն իսկ մեկ անգամից և երկնքի ու երկրի միջոցները լցրիր, որ՝ Իսրայելի աղքի մեջ ծաղկեցիր և քո պտուղներով ամբողջ տիեզերքը լցվեց։

Օրհնված ես, սուրբ փայտ, որովհետև ինչպես առաջին փայտը՝ գեղեցիկ և քաղցրահամ պտուղով մահվան առիթ հանդիսացավ ադամածին կույսը խաբելով, կուսածին Ադամը դառն ճաշակը առած, մարդկանց մեջ կյանքն աղբերացրեց։

Օրհնված ես, սուրբ փայտ, ամպատեսիլ սյուն, որ անկրելի լույսը և հուրը քո վրա կրելով, քեզ հետևողներիս առաջնորդում ես դեպի երկնային քաղաքի մշտնջենավոր կյանքը և գմեզ լուսավորյալ ես պահում։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի տապանակ, երկնային մանանայով լցված ոսկի սափոր և հրաշարեր գավազան՝ ծաղկով պայծառացած, միանգամայն երկու տախտակներ՝ մարմինն ու հոգին իրար ադուցող, հինգ զգայարանքներով, որոնց վրա Թանն Աստված անճառելիորեն և կատարելապես դրոշմվեց, որ՝ մի և նույն ինքն տիրոջ սուրբ մարմինը՝ աստվածության հետ միավորված՝ քո վրա կրեցիր։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի քարեղեն և քառանկյուն տախտակ, որի վրա ճշմարիտ աստվածաճանաչությունը տասնաբանյա մատով դրոշմվեց Աստուծու կողմից, այլ մեկ և նույն անպարագիր Աստվածը խոսքով երևալով, փոխանակ Սինայից տրվելու՝ բովանդակ երկրի Սիոնից շնորհվեց։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի գավազան՝ որ չոր լինելով հանդերձ, ոչ թե արքայական կաղին բուսցրիր, այլ բոլորի թագավորը, ծաղկեցիր որպես անթառամ և երկնային ծաղիկ, և ոչ այնչափ միայն, այլ նաև քո ծայրը բխած երևաց փրկական ջրի և արյան կենդանի աղբյուրը, որով ամբողջ տիեզերքը առհասարակ լցվեց։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի աշտանակ, բոլոր ոսկիներից ավելի պատվական, որ իմանալի լույսը քո մեջ որպես հրագունդ՝ յոթնաճառագայթյան փայլումով աշխարհին որպես լույս բացավառեցիր։

Օրհնված ես, սուրբ փայտ, աննյութ կամուրջ, որովհետև մարդկանց մահից դեպի կյանքը բերելով անցկացրիր։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի մագաղաթ, որովհետև քո վրա անջնջելի կերպով գրվեց մեր ազատության և որդեգրության ուխտը, ոչ թե գրող թանաքով, ոչ էլ Աստուծո մատով ձևացած գրով, այլ է՛լ ավելի անպատմելի՝ նրա ժառանգակցի՝ Աստուծո Որդու՝ արյունով։

Օրհնված ես, սուրբ փայտ, իմանալի փեներար գավազան սուրբ հովվին, որովհետև քեզանով եկեղեցու անարատ ոչխարները ըն-

տրվելով զատորոշվում են, զերծ՝ ապականողից, պաշտպանված՝ դազանից, և աստվածային քարկության սրի մահից աղատված։

Օրհնված ես, սուրբ փայտ, անբարբառ բարեխոս, հրեշտակների ցուցիչ, նրանց անտեսանելի Տիրոջ փառքի սրբություն, եկեղեցու փառք, առաքյալների պարծանք, մարգարեների ապացույց, մարտիրոսների պսակ, քահանաների շնորհաբաշխություն, վարդապետների հավատի կանոն։

Թագավորների հաղթություն, իշխանների քաջության հույս, քրիստոսասեր զորքերի առաջապահ, ախոյանների քաջալերություն, նահատակների զորավիգ, վտանգվածների ոգնական, պարտվածների ապավեն, տառապյալների կայծղություն, հալածվածների ապաստան, փախստականների պատսպարան, խռովյալների խաղաղարար, վշտացածների մխիթարություն, ուրախացողների գոհություն։

Հարուստների զգուշացուցիչ, աղքատների անվրդոպտելի գանձ, անզգամների զգաստություն, ստահակների խրատ, դատարկապորտների նահանջ, կույսերի զարդ, սմոանացածների կնիք, մանուկների պահապան, երիտասարդների դաստիարակ, ծերերի հանգստարան, ճանապարհորդների առաջնորդ, հոգնածների հանգիստ, նավողների նավահանգիստ, մոլորվածների դարձ, տառապյալների ապահովության հարկ, այրիների ակնածություն, որբերի խնամող։

Կրոնավորների պարիսպ, ճգնավորների ժուժկալություն, ապաշխարողների աղոթք, հիվանդների լաժվություն, դևերի սարսափ, հավատացյալների ձեռքում պատրաստ զենք, մեղավորների քավարան, անմեղների պահապան, տղջերի փրկության միջոց, մեռելների հիշատակի հույս։

(Դավիթ Անհաղթից, Բաղվածարար)

ԽԱՉԸ

Խաչը՝ երկնքի բեռ և երկրի հաստատություն,
Խաչը՝ նահապետների ցանկություն և մարգարեների նախաձայնություն,
Խաչը՝ առաքյալների քարոզություն և հայրապետների դավանություն,
Խաչը՝ մարտիրոսների պսակ և նահատակների հաղթանակ,
Խաչը՝ թագավորների բաց և իշխանների զորություն,
Խաչը՝ կույսերի սրբություն և ամուսնացածների ժուժկալություն,
Խաչը՝ տղամարդկանց շնորհ և կանանց բարեզարդություն,
Խաչը՝ ծերերի հաստատության ցուպ և մանուկների իմաստության գավազան,
Խաչը՝ կյանքի փայտ և անմահության պտուղ,
Խաչը՝ անմեղների խրատ և մեղավորների քավիչ,
Խաչը՝ մոլորվածների ճանապարհ և խավարյալների հառագայթ,
Խաչը՝ նավողների նավահանգիստ և հանապարհորդների օթևան,
Խաչը՝ երկնավորների ցնծություն և երկրավորների ուրախություն,
Խաչը՝ սանդարամետականների երկյոտ և չար ոգիների սատ,
Խաչը՝ Քրիստոսի փառք և քրիստոնյաների պարծանք,
Խաչը՝ հոգևոր զենք և չքացող սուր,
Խաչը՝ դժոխքի ավերիչ և գերյալների ազատիչ,
Խաչը՝ գերեզմանների կնիք և կյանքի հարություն,
Խաչը՝ դրախտը բացող և արքայությունը ժառանգել տվող,
Խաչը՝ Քրիստոսի կարապետ և հարության հրավեր,
Խաչը՝ անհավատների կուրություն և հավատացյալների զորություն,
Նրան փառք հավիտյանս, ամեն:

(Գրիգոր Տաթևացի, «ՔԱՐՈԶԱԳԻՐՔ»,
հատոր ամարան):





ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄՍՏՐ ՍԹՈՌ Ա. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

Օգոստոսի 25-ին, Վերափոխման երկրորդ կիրակի օրը, Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց, Մայր Աթոռի մեծանուն բարերար հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի մահվան երկրորդ տարելիցի առթիվ։

Օրվա տոնի կապակցությամբ, ուխտավորաբար Ս. Էջմիածին էր եկել հավատացյալների մի մեծ բազմություն մատաղներով, խնկերով, մոմերով։

Առավոտյան ժամը 11-ին, Մայր Տաճարի զանգերի ավետավոր զողանջների տակ, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, երգով ու շարականով, ամպհովանու տակ հանդիսավորապես առաջնորդվեց Մայր Տաճար։

Վեհափառ Հայրապետի ամպհովանին կրում էին Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչներ սր Սիդնի Քեյնը և պարոն Եդվարդ Ուիթուճյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի երկու անդամների հետ։

Վեհարանից դեպի Մայր Տաճար ասնող ճանապարհի վրա հավաքված ուխտավորների բարեպաշտ բազմությունը դիմավորում էր ջերմորեն Վեհափառ Հայրապետին։

Մայր Տաճարը զարդարվել էր տոնական՝ նորեն և լիքն էր աղոթավորներով։

Հանդիսավոր վեհության մեջ սկսվում է հայրապետական սուրբ պատարագը։ Վեհափառ Հայրապետին սպասարկում են Տ. Սահակ և Տ. Վարդան սրբազանները, հոգեշնորհ Տ. Գնել, Տ. Եղիշե, Տ. Մեսրոպ, Տ. Վահան և Տ. Մուշեղ վարդապետները։

Դասում տեղ են գրավել Գ. Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչներ սր Սիդնի Քեյնը և պարոն Եդվարդ Ուիթուճյանը։ Սուրբ Պատարագին ներկա է նաև ֆրանսահայ տուրիստների 70 հոգուց բաղկացած խումբը։

Սուրբ պատարագին ներկա են նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Սարգիս Գասպարյանը, Վարպետը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, ճարտարապետներ, ինժեներներ, մասնավոր հրավիրյալներ, Մայր Աթոռի ամբողջ պաշտոնեությունը։

Դաշն ու ներդաշնակ շարունակվում է սուրբ պատարագը։ Դրսում՝ վանքի բակում բարձրախոսներ են դրված, որպեսզի Տաճարից դուրս գտնվող բազմությունը տեսկընդրի սուրբ պատարագի երգեցողությունը։

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Տէր ողորմեա»։

Քարոզի պահն է։ Վեհափառ Հայրապետը դառնում է դեպի ժողովուրդը։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

«Երանի մեռելոցն որ ի Տէր ննջեցին. զի գործք իւրեանց չոգան զհետ նոցա»

(ՅԱՅՏՆ., ԺԴ 13)

«Այսօր, Ս. Աստվածածնի Վերափոխման Երկրորդ կիրակին. Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մեջ, Տիրոջ ողորմությամբ, ճանդիսավոր սուրբ պատարագ մատուցինք, և այժմ հոգեհանգստյան պաշտոն պիտի կատարենք Մայր Արոռի մեծ բարերար՝ հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի և յուր ծնողներու՝ Սարգիս և Սրբուհի Կյուլպենկյաններու և յուր կողակցի՝ Նվարդ Կյուլպենկյանի խնկելի հիշատակին:

Ի Տեր հանգուցյալ Կյուլպենկյան եղավ մարդ մը, որ ապրեցավ և հավետ պիտի ապրի երախտագետ սրտերու մեջ, վասնզի ան իր անունը գիտցավ կապել բարի և մնայուն մեծ գործի մը՝ հետ մանու հիմնելով մարդասիրական հաստատություն մը, որ արդար պարծանքով իր անունը կկրե:

Երանի՜ իր հոգիին, որ արժանի պիտի ըլլա զԱստված տեսնելու:

Մենք բոլորս հպարտ ենք իրմով, որովհետև զավակն է ան մեր փոքրիկ Ազգին: Իր կտակով ան իր ամբողջ կյանքի վաստակը ընծայեց աշխարհի բոլոր մեծ և փոքր ժողովուրդներուն՝ ավելի լուսավոր և բարոր դարձնելու համար մարդոց կյանքը:

Մեր ժողովրդի կյանքին մեջ մեծ եղած է երախտիքը Հայ Կեսարիային: Անցյալի մեջ կեսարացի մեծանուն ամիրաներու և խոջաներու ճվիրատվություններով պահված ու պահպանված են հայ վանքեր, եկեղեցիներ և դրպրանոցներ մինչև հեռավոր Ս. Երուսաղեմ, Կոստանդնուպոլիս և Վենետիկ:

Այդպիսին եղավ նաև լուսաբնակ Գալուստ Կյուլպենկյան:

«Մեծատանց որ են յայսմ աշխարհի՝ պատուէր տաջիր մի՝ հպարտանալ և մի՝ յուսալ ի մեծութիւն սնոտի, այլ յԱստուած... զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան» (Ա Տիմ., Զ 17):

Հանգուցյալը որպես հայ մարդ զուցե իրավունք ունենար դառնացած և հուսախաբ եղած ըլլալու այս աշխարհեն, մանավանդ մեծ ազգերեն, հայ ժողովրդի դեմ գործված մեծ անարդարություններուն և անվայել դժբախտություններուն համար: Սակայն անոր մեծ սիրտը, մարդասիրությամբ և լավատեսությամբ չերմացած, իր մտածումը առաջնորդեց դեպի այնպիսի գործ մը, որ մեր գիտակցության առջև կհանդիսանա որպես բարոյական հաղթական կոթող:

Մենք մխիթարված ենք, որ Մեր զավակներեն մին այդպիսի սիրտ ունեցավ:

Մենք վստահ ենք և խորապես համոզված, թե մեծանուն հայ բարեգործի՝ Գալուստ Կյուլպենկյանի կտակով կյանքի կոչված հիմնարկությունը, գլխավորությամբ մեծարգո տիար դոկտ. Ժոզե դե Ազեբեդո Պերգիգաոյի և տիար Գևորգ Եսայանի, առաջին գծի վրա պիտի դասե Հայաստանյայց եկեղեցվո և հայ ժողովրդի կարիքները, ըլլա Հայաստանեն ներս, ըլլա Սփյուռքի մեջ, ուր ավելի քան մեկ միլիոն հայեր կապրին իրենց կրոնական, կրթական, մշակութային և բարեսիրական կազմակերպություններով, և որոնք նյութական լուրջ դժվարություններու և հաճախ տագնապալի կացությանց առջև կգտնվին:

Հայ ժողովուրդը իր մեծ և արդար հույսերը կկապե Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, և կսպասե մեծանոգի հանգուցյալի կտակի տրամադրությանց կենսագործման:

Մեծ և արդար հույս ունինք նաև Մենք, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, ի մասին՝ վերանորոգման և բարեկարգման Ս. Էջմիածնի Մայր Տաճարին և անոր անբաժան մասը կազմող սրբավայրերուն և հաստատություններուն:

Ս. Էջմիածինը հայ ժողովրդի սուրբ հավատքի աստվածակառույց վեմն ու կյանքի ամրոցն է, քրիստոնեական աշխարհի ճնշգույն կոթողներեն մին, որ ժամանակի և դաժան ճակատագրի հարձանքները հաղթահարելով, հասած է մեզի, և մեր օրերուն կոչված է նոր կյանքի:

Ճշմարտապես հավատացյալ և ազգասեր հայ մարդը աշխատած է նա-վերոնյան հիշատակ մը ունենալ Ս. Էջմիածնի մեջ:

Հայ բազավորը, հայ իշխանը, հայ մեծատունը, հայ հոգևորականը, հայ շինականը Մայր Աթոռի պայծառության համար կաճգ չեն առած տնտեսա-կան ու բարոյական զոհողությանց առջև:

Հայ ժողովուրդը տված է Ս. Էջմիածնին առատաձեռն կերպով:

Այսօր, Աստուծո ողորմությամբ Ս. Էջմիածինը կոչված է նոր կյանքի մը, շնորհիվ մեր ժողովրդի հավատքի զորության և մեր Հայրենի Պետական իշխանության բարի կամեցողությամբ ստեղծված ազատ պայմաններուն, ին-կվերաբերի կրոնական կյանքի կազմակերպմանը և զարգացմանը: Այն, ին-որ իրագործված կտեսնենք վերջին տարիներու ընթացքին, հոգևոր և նյութա-կան վերաշինության իմաստով դրական ապացույցն է Մեր այս հաստատու-մին:

Մոտ երկու տարի է, որ Մենք կաշխատինք այստեղ և որևէ արգելքի չենք հանդիպած ցարդ մեր եկեղեցվո շինարարական ծրագրերու գործադրության մեջ:

Եվ անա, Մեր եկեղեցվո, հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերա-կազմակերպման, վերաշինության և բարեզարդման աշխատանքներու այս սուրբ հանապարհին վրա, Նախախնամության ձեռքով առաջնորդված, Մեզի կուգան ներկայացուցիչները Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, օգ-նության ձեռք երկարելու Մեզ՝ մեծ Բարերարի կտակի գործադրության ծրա-գրով:

Դուք, մեծարգո պրոֆ. սըր Սիդնի Քեյն և հարտարապետ պարոն Եղվարդ Ուրուչյան. Ձեր աչքերով տեսամ մեր կարիքները, Դուք Ձեր աչքերով տեսամ, թե մինչև այժմ Մենք ինչ ենք շինած վերջին մեկ տարվան ընթացքին և թե ինչ ենք ծրագրած շինելու հետագային: Դուք Ձեր աչքերովը տեսամ նաև այն օրի-նական և գործնական պայմանները, որոնք ստեղծված են մեր երկրին մեջ, Եկեղեցաշեն գործը առաջ տանելու համար՝ ազատ ու անկաշկանդ կերպով:

Մենք, այս հանդիսավոր առթիվ, անգամ մը ևս կհայտարարենք, որ Գա-լուստ Կյուլպենկյան հիմնարկության կողմե Ս. Էջմիածնին տրամադրված նյութական միջոցները՝ ապահով ու ամբողջական կերպով իրենց նպատակին պիտի գործածվին Մեր հայրապետական իշխանության ներքև, իբրև իրավատե-ր կտակին, համաձայն կտակի տրամադրություններուն: Երջանկահիշատակ զտակարարի կամքի գործադրությունը Մեր կյանքի նպատակն իսկ է: Մենք, և Մեր գործակիցները, մեր գոյության իմաստը կգտնենք այս բազմադարյան սուրբ հաստատությունը՝ Ս. Էջմիածինը վերաշինելու և ծաղկեցնելու աստվա-ծահաճո սուրբ գործի իրականացման մեջ:

Այս Ս. Տաճարը իրենց լույս հավատքով հորինած են Ս. Գրիգոր Լու-սավորիչ ու Տրդատ Դ. Մենք Ներսես և Ս. Սահակ Պարթև, իշխան Վահան Մա-միկոնյան և Ներսես Դ Շինող, և է դարեն վերջ մինչև մեր օրերը այս նույն Տաճարի համար իրենց վաստակը բերած են հրաշալեղ հայրապետներ՝ Մովսես Տարեցին, Փիլիպոս Ադթակեցին, Հակոբ Ջուղայեցին, Եղիազար Այնթաբցին, Գևորգ Դ-ը, Մակար Ա-ը, Խրիմյան Հայրիկը և Գևորգ Զ-ը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անվան ու պատմության հետ սերտորեն կապ-ված այս երախտաշատ մեծ անուններու լուսավոր հույլին այժմ կուգա միա-նալ Գալուստ Սարգիս Կյուլպենկյանի անունը:

Թող օրհնյալ ըլլա հիշատակը Գալուստ Կյուլպենկյանի լուսաբնակ ծնող-ներուն՝ Սարգսի և Տիրուհիի և իր կողակցին՝ Նվարդ Կյուլպենկյանի:

1955 թվականի հուլիս 20-ին, Պորտուգալի մայրաքաղաք Լիզբոնի մեջ, Գալուստ Կյուլպենկյան կնքեց իր մահկանացուն: Այժմ, անոր մահվան երկրորդ տարելիցին առթիվ, ձեռադիր կաղոթենք Միածնաէջ այս Մայր Տա-ճարի սուրբ կամարներուն տակ, որ Տերը Իր անքառամ փառքին արժանացնե մեծագործ Բարերարի հոգին:

«Ցաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

***

Վեհափառ Հայրապետի քարոզից հետո, վեհ հանդիսության մեջ, Մայր Տաճարում կատարվում է հոգեհանգստյան պաշտոն Մայր Աթոռի մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանի հոգու փրկության և ընդհանրապես ամբողջ Կյուլպենկյան գերդաստանի հին և նոր նեղեցյալների հոգիների փրկության համար։ Հանդիսավոր, վեհ ու տպավորիչ հնչում է «Գթա Տէր, ի հոգիս մեր նեղեցելոցս» շարականը, միախառնված աղոթքի մրմունջներին և խնկի քուլաներին։

Երգչախումբը ղեկավարում է Հոգևոր Ճեմարանի երաժշտության ուսուցիչ պարոն Հրանտ Գևորգյանը։

Հոգեհանգստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետի ձեռքից Ս. Հաղորդություն է առնում ֆրանսահայ տուրիստների խումբը։

Հավարտ սուրբ պատարագի, նույն հանդիսությամբ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր Մաղկյա դահլիճում բազմում է Հայրապետական գահի վրա, շրջապատված ամբողջ միաբանությամբ, հյուրերով և ֆրանսահայ տուրիստներով։ Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին և ապա նկարվում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչներ սրբ Սիդնի Քեյնի և պարոն Եդվարդ Ութուճյանի, Վարպետի, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամների և Մայր Աթոռի շինարարական աշխատանքներին արնքան նվիրումով կապված մեր հայրենի ճարտարապետների և այլ պաշտոնական անձնավորությունների հետ։

Ապա Վեհափառ Հայրապետը Վեհարանի ընդունելության մեծ դահլիճում սիրալիր որույց է ունենում ֆրանսահայ տուրիստներին և հետաքրքրվում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչներ սրբ Սիդնի Քեյնի և պարոն Եդվարդ Ութուճյանի, Վարպետի, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամների և Մայր Աթոռի շինարարական աշխատանքներին արնքան նվիրումով կապված մեր հայրենի ճարտարապետների և այլ պաշտոնական անձնավորությունների հետ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՎ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ

Հավարտ սուրբ պատարագի, նույն հանդիսությամբ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր Մաղկյա դահլիճում բազմում է Հայրապետական գահի վրա, շրջապատված ամբողջ միաբանությամբ, հյուրերով և ֆրանսահայ տուրիստներով։ Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին և ապա նկարվում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչներ սրբ Սիդնի Քեյնի և պարոն Եդվարդ Ութուճյանի, Վարպետի, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամների և Մայր Աթոռի շինարարական աշխատանքներին արնքան նվիրումով կապված մեր հայրենի ճարտարապետների և այլ պաշտոնական անձնավորությունների հետ։

Ապա Վեհափառ Հայրապետը Վեհարանի ընդունելության մեծ դահլիճում սիրալիր որույց է ունենում ֆրանսահայ տուրիստներին։ Վեհափառ Հայրապետը հետաքրքրվում է տուրիստների Մայր Հայրենիքից և Ս. Էջմիածնից ստացած տպավորություններով, հետաքրքրվում է ֆրանսահայ գաղութի ազգային, եկեղեցական, կրթական, բարեսիրական կյանքով։ Տուրիստները պատմում են իրենց փանդավոր տպավորությունների և զգացմունքների մասին։ Ապա բոլոր հյուրերը հյուրասիրվում են Հայրենիքի հյութալի մրգերով։

Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին և բաժանում խաչեր և սուրբ նշխար՝ որպես թանկագին հիշատակներ Մայր Աթոռից։

ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ԳԱԼՈՒՍՏ ԿԱՌՈՒՅՑԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ

Նույն օրը ժամը 4-ին, Վեհարանի սեղանատան մեջ, կազմակերպվեց հրաժեշտի ճաշկերույթ ի պատիվ սրբ Սիդնի Քեյնի և պարոն Եդվարդ Ուիթուիլյանի, որոնք օգոստոսի 26-ին, երկուշաբթի օր, պետք է մեկնեին Մայր Աթոռից։

Հրավիրյալների թվում էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Ս. Գասպարյանը, Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, ճարտարապետներ Ա. Մազմանյանը, Ռ. Իսրայելյանը, Կ. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ։

Ի պատիվ սրբ Սիդնի Քեյնի և պարոն Եդվարդ Ուիթուիլյանի տրված հրաժեշտի սեղանի շուրջ ստեղծվել էր շերմ և սիրալիր մթնոլորտ։ Արտասանվեցին բաժակաճառեր։ Պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը բաժակ առաջարկեց անգլիացի տաղանդավոր և խաղաղասեր ժողովրդի պատվին հանձին սրբ Սիդնի Քեյնի։ Բաժակներ առաջարկվեցին Վեհափառ Հայրապետի կենաց, Մայր Աթոռի պայծառության և մեր պաշտելի Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի վառ ու պայծառ ապագայի համար։

Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը բաժակ բարձրացրեց հայ ժողովրդի և Ս. Էջմիածնի անքակտելի միասնության կենացը։

Ընդունելության ժամանակ խոսք առավ նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնըվող Կիլիկյան ուխտապահ միաբանության անդամ հոգեշնորհ Տ. Գնել ծայրագույն վարդապետ Ճերեճյանը և քարեմաղթություններ արեց Մայր Աթոռի է՛լ ավելի պայծառության և վերաշինության համար։

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը և ասաց.

«Տասը օրերե ի վեր մեր մեջ կգտնվին Գոյուստ Կյուլպենկյան հիմնարկության հարգարժան ներկայացուցիչներ պրոֆ. սրբ Սիդնի Քեյնը և դասախոս հարտարապետ պարոն Եդվարդ Ուիթուիլյանը։

Տասը օրերե ի վեր իրոք որ առավելագույն նախանձախնդրությամբ և սիրով անոնք ուսումնասիրեցին այն, ինչ որ պետք է ուսումնասիրեին, այն, ինչ որ հանձնարարված էր անոնց։ Անոնք ամենայն բարեխղճությամբ ոչ մեկ հոգնություն չդժկամեցան ստանձնելու, որպեսզի լրիվ չափով գաղափար մը կազմեն այն շինարարական աշխատանքներու նկատմամբ, որոնք կդրվին մեր առջև։

Այդ շինարարական աշխատանքները մեծ կբաժնենք երեք մասի.

ա) Շինարարական աշխատանքներ, որոնք ուղղակի կերպով և անբաժանելիորեն կապ ունին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին և անոր անմիջական շրջապատին հետ։

բ) Շինարարական աշխատանքներ, որոնք Ս. Էջմիածնի հողամասեն դուրս կգտնըվին, այսինքն վանքեր, տաճարներ և ուրիշ եկեղեցական, կրոնական և շինարարական հաստատություններ, որոնք մեր եկեղեցվո կյանքի հետ կապ ունին։

գ) Շինարարական աշխատանքներու ապագա ծրագրեր, որոնք կապ ունին Մայր Աթոռի նեառագա զարգացման հետ, ոչ միայն կրոնական, այլ նաև կրթական, գիտական, բարեսիրական նպատակներով։

Ս. Էջմիածինը առաջին անգամ չէ, որ հայ ժողովրդի համար այսպիսի լայն ծրագիր մը կունենա։ Դիտենք պատմությունեն, որ և՛ դպրություն և՛ գիտություն և՛ բարեսիրական հաստատություններ ձեռնոց առած են, կազմակերպված և ղեկավարված Ս. Եկեղեցվո կողմե, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմե, սկսած Դ դարեն մինչև այսօր։ Դուք գիտեք, որ Ս. Մեսրոպ Մաշտոց իր գործակիցներով, որոնց գլուխը կգտնվեր Ս. Սահակ կաթողիկոսը, և մյուս գիտնական վարդապետները գիտական աշխատանք կատարեցին այս սուրբ հաստատության կամարներուն տակ, գիր ու գրականություն ստեղծեցին հայ ժողովրդի համար և անոնք ե դարու սկիզբները Ս. Գիրքը թարգմանեցին։

Նորեն Ս. Էջմիածնի ղեկավարության և հովանավորության տակ է, որ Մեծն Ներսես կաթողիկոսի օրով բարեսիրական հաստատություններ ստեղծվեցան։ Առաջին այդպիսի հիմնարկությունը, առաջին հիվանդանոցը, որ հիմնված է այս Հայաստան երկրի վրա, եկեղեցին է, շինված Ս. Ներսեսի օրով, և ուրիշ բարեսիրական հաստատություններ ալ, որբանոցներ, ծերանոցներ, որոնք ընկերային հաստատություններ են այսօր և կղեկավարվին պետություններու կողմե անշուշտ, ինչպես նաև մեզ մոտ՝ Սովետական Միության մեջ։ Այդպիսի մտահոգություններ միշտ ունեցած է մեր եկեղեցին, այդպիսի ծրագրեր ունի նաև այսօր Ս. Էջմիածինը, ծրագրեր, որոնք այսօր, այս պահուս չենք կրնար իրագործել։ Անոնք իրենց ներքին պիտի սպասեն, բայց պիտի գա ժամանակը, երկու-երեք տարի հետս, գուցե ավելի շուտ, գուցե ավելի ուշ, համենայն դեպս

Մենք վստահ ենք, որ Մեր ծրագիրը պիտի գործադրենք:

Պիտի հիմնենք գիտական ինստիտուտ մը և հրատարակչական կեդրոն մը, և բարեսիրական հաստատություններ և մշակութային նպատակով այլ հաստատություններ պիտի հիմնենք Մայր Աթոռի կողքին:

Ուրեմն այս երեք մասերեն կազմվեցավ Մեր հինարարական ծրագիրը ընդհանրապես: Մենք այդ բոլորը ճանաչեցինք Կիլիկիոյ հեմնարկության հարգարժան ներկայացուցիչներուն ուշադրության, գրավոր հուշագիր մը ալ ճանաչեցինք այս բովանդակությամբ, և միշտ հույսով պիտի սպասենք, որ մեծ Հարեւարին մեծ կտակով հիմնված այդ հիմնարկությունը ոչ միայն մեզի օգնե 300—400 000 դոլարով, որ հատկապես կտակված է էջմիածնի համար, այլ նաև հետագա իր հատկացումներով Մեզի ալ օգնության ձեռ երկարե, իրագործելու համար այն մյուս նպատակները, որոնք հիշվեցան և որոնք կմտնեն անշուշտ ամբողջովին Գալուստ Կիւլպենկյանի կտակի տրամադրություններու սահմաններուն մեջ:

Ահա այսպիսի լայն ծրագիր մը ներկայացուցինք մեր հարգելի հյուրերուն, և պետք է ըսել, որ անոնք ոչ միայն ծանոթացան, ուսումնասիրեցին— թվաբանական իմաստով մը, բնական կամ հարտարապետական իմաստով մը— Մեր ծրագրերուն, նախահաշիվներուն և նախագիծերուն, որոնք թվանշաններով կարտահայտվին, բայց անոնք այս բոլորին ծանոթանալե վերջ, Մենք կզգանք այդ բանը, անոնք այդ ամենը իրենց սրտին մեջ ալ արձանագրեցին ուրիշ թվանշաններով արտահայտված Մեր ցանկությունները, Մեր զգացումները և Մեր սուրբ նպատակները: Եվ կկարծենք, որ մատիտով կամ մելանով թվանշանները կրնան սրբագրվիլ, կրնան դժգունիլ, կրնան փոխվիլ, բայց այդ Ձեր սրտին վրա արձանագրվածը անպայման պիտի մնա, և Դուք Մեր զգացումներու արտահայտիչը պիտի ըլլաք հիմնարկության հարգարժան անդամներուն մոտ, պիտի խոսիք անոնց իրաք որ Մեր սրտեն, ներշնչված այս բազմադարյան հաստատության ոգիով:

Մենք շատ հուզված էինք առաջին օրերը Ձեզ ընդունեցինք, և չենք մոռնար սրբ Սիդնի Քեյնի խոսքերը, որ ըսավ. «Ես կճանչնամ հայ ժողովուրդը իր պատմությամբ, իր արժեքներով»: Մենք անոր այդ խոսքերուն պատասխանեցինք. «Եթե Դուք կճանչնաք մեր ժողովուրդը, մեր պատմությունը, եթե կճանչնաք մեզ, ապա ուրեմն անպայման պիտի սիրեք զմեզ, պիտի սիրեք հայ ժողովուրդը», ապա Մենք ավելցուցինք, որ առնվազն իր մեծ տառապանքներուն համար հայ ժողովուրդը իրաք պետք է սիրվի և օգնության ձեռ պետք է երկարվի անոր, բայց ոչ միայն իր տառապանքներուն համար: Մենք այսօր այլևս լայկան ժողովրդի մը զավակները չենք ուզեր ըլլալ: Պիտի շտապենք անցյալի մեր տառապանքները անշուշտ, մեր դառն և փոքրկալից պատմությունը, այդ մեզի համար դաս մը է և մեմանտո մը, բայց մենք մեր ուշադրությունը պիտի կեդրոնացնենք, կկարծենք, մեր կենդանի արժեքներուն վրա, այն, որ հիներն կուգա, և այն, որ նոր կստեղծվի, և որպես կենսունակ ժողովուրդ, որպես կյանքի ժողովուրդ, ստեղծագործ ժողովուրդ, որպես հավատավոր ժողովուրդ, որպես ապագա ունեցող ժողովուրդ, մենք բոլորս ձեռ-ձեռքի տված պետք է աշխատինք ամեն մեկս իր կալվածին մեջ իր ուժերու չափով, որպեսզի մեր պարտքը կատարենք մեր պատմության առջև, մեր Ազգին և մեր Հայրենիքին առջև, մեր այս բազմադարյան հաստատություններուն առջև, և մեր ապագա սերունդներուն առջև: Հայ ժողովուրդը ստեղծագործ է, եկեղեցական գծով ալ ստեղծագործ եղած է ան, մշակույթի բոլոր ասպարեզներուն մեջ ալ ստեղծագործ եղած է, և այդ ավանդությունը, այդ պատվաբեր ավանդությունը մենք պիտի շարունակենք: Այսօր մեր վերածնած Հայրենիքի՝ Հայաստանի ծոցին մեջ առավել ինքնավստահությամբ կարտասանենք այս խոսքերը: Ինչպես Դուք տեսաք, մեր փոքրիկ Հայաստանը իրաք որ վերածնած երկիր մըն է: Ամեն բանն վեր վերաշինությունն է, որ Մեր կարծիքով կարևորություն ունի: Եվ այդ ընդհանուր վերաշինության, մեր ժողովրդի վերածննդի ճանապարհի վրա, Հայ եկեղեցին ալ իր վերածնունդը սկսած է ապրիլ և մայր առ մայր պիտի հառաջդիմի:

Դուք տեսաք մեր համեստ աշխատանքներու ընթացքը, այս կարճ ժամանակի ընթացքին կատարված, ոչ իսկ երկու տարին լրացած: Մենք կկարծենք, առանց ինքնագովության, որ կրնանք ըսել, թե մինչև հիմա իրագործվածը և այն պայմանները, որոնք ստեղծված են մինչև հիմա մեր երկրին մեջ շնորհիվ կառավարության բարյացակամության, որուն համար Մենք անկեղծորեն երախտապարտ ենք, այս կատարվածը ուրեմն Մեզ համար ոչ միայն հույս մըն է, այլ նաև դրական գրավական մը, որ անպայման Մեր ապագա ծրագրերը հաջողությամբ պիտի պսակվին: Եվ այս շինարար գործին մեջ, հարգելի պրոֆ. սըր Սիդնի Քեյն և պարոն Եդվարդ Ուրուճյան, Դուք ալ Ձեր լուման պիտի բերեք, Ձեր աշխատանքի բաժինը, և պիտի դառնաք Մեր գործակիցները:

Մենք, Մայր Աթոռի անունով, Մեր խորին շնորհակալությունը կհայտնենք Ձեզի և

կիսասովամիտ. որ մեր միջև ոչ միայն հարգալիր մթնոլորտ մը ստեղծվեցավ, այլ նաև անկասկած, եղբայրական հոգևոր մթնոլորտ մը: Ձեզ երբեմ պիտի շմոռնանք. Դուք ալ Մեզ մի՛ մոռնաք: Դուք ճանչցաք Մեզ և կկարծենք, որ Մեզ սիրեցիք ալ: Կխնդրենք, որ օգնեք ալ Մեզի:

Ձեզ բարի ճանապարհ մաղթելով, կմնանք Ձեզ և Ձեր ընտանյաց բոլոր անդամներուն բաջառողջության և երջանկության համար այնքան, և Ձեզ կըսենք՝ «Ցտեսություն», որպեսզի ուրիշ անգամներ ալ կրկին գամ այստեղ տեսնելու, միասին վայելելու կատարված աշխատանքներու արդյունքները և միասին աղոթելու մեր միևնույն Աստուծուն»:

Ապա խոսք առավ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչ սրբ Սիդնի Քինը.

«Դժվարանում եմ արտահայտվել Հայաստանում հանդիպած իմ ծանոթ և բարեկամ մարդկանց նեղկայության, որովհետև ավելի գեղեցիկ կլիներ անշուշտ, որ ես խոսեի հայերին, քան թե անգլերեն, մանավանդ որ ես չեմ կարող մոռնալ Նորին Սրբության պերճախոսության հետ:

Անտարակույս պարոն Ութուճյանի հետ ես ղեկուցելու եմ Լիսաբոնում Կյուլպենկյան հիմնարկության խնամակալներին և հաղորդելու եմ նրանց Նորին Սրբության զգացմունքները, հիմնարկության հանդեպ ցուցաբերված սիրալիր վերաբերմունքը և խոսեմ հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին այս առավոտ կատարված հոգեհանգստյան արարողության մասին:

Պարոն Ութուճյան և ես մեր Հայաստան դտնված ժամանակամիջոցում ընդունվեցինք ջերմորեն և սիրալիր կերպով, և թերևս լավ պիտի լիներ կարծել, թե մենք այդ ընդունելության արժանացանք ոչ թե մեր անձնական բարեմասնություններին համար, այլ այդ սրտագին ընդունելությունը ես համարում եմ որպես բարի կամեցողության մի ցայտուն փաստ Կյուլպենկյան հիմնարկության հանդեպ, որի ներկայացուցիչները՝ մենք ահա այստեղ ենք:

Ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր այն անձանց, որոնք օգնել են մեզ մեր այստեղ դտնված ժամանակ: Գուցե ես պետք է սկսեի կառավարական իշխանություններից, որովհետև Լոնդոնի սովետական դեսպանատան և Մոսկվայի իշխանությունների ազնվության շնորհիվ է, որ կատարվեցին մեր այցելության կարգադրությունները: Եվ Երևանի Պետական իշխանությունները շատ ազնիվ եղան մեզ բացատրելու Պետության և եկեղեցու միջև եղած հարաբերությունները, և տալ լավագույն փաստը, որ մենք ուզում էինք տեսնել. այդ եկեղեցու անկախությունն էր կառավարական վերահսկողությունից, սրբված լինելով, որ մենք ցանկանում էինք տեսնել Պետական իշխանություններին, եկեղեցական գործերի հատուկ հարցերով, բայց նրանք ասացին մեզ, թե այդ հարցը նկատում են Կաթողիկոսին վերաբերյալ գործեր միայն:

Մենք նույնպիսի ազնվություն գտանք նաև Ս. Էջմիածնի Տաճարի հետ կապված շատ մեծ թվով մարդկանց մոտ, որոնք այնքան հաճախակի ծառայեցին և ընկերացան մեզ, Երևանում, Էջմիածնում և այլ տեղերում մեր ված այցելությունների ժամանակ:

Ամենուրեք մենք ընդունվեցինք ջերմ և հրաբռնկալ կերպով, և անշուշտ բոլորից ավելի մենք երախտապարտ ենք Նորին Սրբության Իր ված օրինակի համար, որին հետևեցին և մյուսները:

Մենք գիտենք, որ Հայ Եկեղեցին պետք է նկատել որպես հնագույն եկեղեցի: Մենք գիտենք նաև, որ Մայր Տաճարը քրիստոնեական հնագույն կոթողներից մեկն է, որը մինչև այժմ գործածվում է պաշտամունքի համար: Ավելին, մենք գիտենք նաև, որ Հայաստանում ճարտարապետության ավանդությունը ունի դարավոր պատմություն և մեծ ինքնատպություն: Հայկական ճարտարապետությունը դարձացել է շատ վաղ և ազդել է ամենուրեք իր հարևանների ճարտարապետության վրա, ազդել է եվրոպական ճարտարապետության վրա, ինչպես նաև աշխարհի բոլոր կողմերը: Հետևաբար ես խորհում եմ, որ պետք է միշտ հիշել բոլոր դարերի ճարտարապետներին, որոնք նպաստել են այս մեծ Տաճարի կառուցման, և մեր ցանկությունն է տեսնել այս Աքթոռը իր նախկին փառքի մեջ:

Հետևաբար, ես խնդրում եմ Ձեզանից խմել հիշատակին բոլոր նրանց, որոնք անցյալում աշխատել են ստեղծելու այս մեծ Տաճարը, ինչպես նաև առողջությանը բոլոր նրանց՝ ճարտարապետներ, ինժեներներ, նկարիչներ և շատ ուրիշներ, որոնք աշխատում են այսօր: Եվ այս բոլորից առաջ, Նորին Սրբության կենացը, որի ղեկավարության և նեղշնչման տակ աշխատում են բոլորը:

Ընդունելության ժամանակ խոսք առավ նաև ճարտարապետ պարոն Եդվարդ Ուլոնճյանը.

«Վեհափա՛ռ Տեր, սրբազա՛ն հայրեր, և սիրելի՛ Վարպետ։

Ասելիք շատ բաներ կան, չեմ գիտեր նույնիսկ ուրկե՞ սկսիմ։ Ինչպես ծանոթ է Ձեզմե շատերուն, Պորտուգալյան կառավարությունը տված է իր հավանությունը Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կտակվատար հանձնախմբին։ Հանգուցեալ Գալուստ Կյուլպենկյան, որ շատ դիվանագետ մարդ մըն էր և միաժամանակ գործի մեծ մարդ, ինչ-ինչ հեռատեսությամբ այնպես է ըրած, որ Պորտուգալյան կառավարությունը կտակը հաստատած է ներկայությամբ Հանրապետության Նախագահին։ Առաջին անգամն է, որ այս տեսակ գործողություն մը տեղի ունեցած է։ Կկարծվի, որ պարոն Գալուստ Կյուլպենկյանը այդ ըրած է ինչ-ինչ նկատառումներով։ Մենք վստահ ենք, որ այն այդպես ընելու մեջ ուներ իր տեսակետները։

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կտակակատար հանձնախումբը ուզած է Ձեր մոտ ուղարկել մարդիկ, իր ներկայացուցիչները։

Եվ ահա անոնք արդեն այստեղ են, Վեհափա՛ռ Տեր, սրբ Սիդնի Քեյն, որ համբավավոր անգլիացի տնտեսագետ մըն է և ծանոթ Անգլիո մեջ, և ես։

Հետո, ինչպես կերևի Գալուստ Կյուլպենկյանի կտակի տրամադրություններեն, մեծանուն Բարերարը ուզած է, որ տնտեսագետի մը հետ ճարտարապետ մըն ալ գա։

Երբ մեզ ղրկեցին հոս, ըսին մեզի. «Առեք թուղթ հետերնիդ, առեք մատիտ. բայց ավելի սրտով դացեք, սրտով մտիկ ըրեք. մրտքով մտիկ ըրեք, և ձգեցեք մատիտը նույնիսկ, եթե պետք ըլլա»։

Վեհափա՛ռ Տեր, մենք հոս եկանք սրտով մտիկ ընելու, վստահ եղեք ադոր։ Մեր պաշտոնը պիտի ըլլա ներկայացնել այստեղի կարիքները։

Մենք ուրախ ենք, որ գերաշնորհ սրբազանները և հոգեշնորհ վարդապետները, որոնք Ձեզ կբոլորեն, Հայ կառավարությունը, որ ձեզ կօգնե, հայ ճարտարապետները, որ կաշխատին, հայ ժողովուրդը, որ վերածննդի Ճանապարհի վրա է, Հայ Եկեղեցին, որ կրկին կվերածնի, ադոնք բոլորը ազգակներ են, որոնք մեզ իրավունք կուտան հայտարարելու, որ իշխանությունը, որուն պիտի տեղեկագրենք, այսինքն Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը, պարզ համաձայնություն մը պիտի գտյացնե այդ կտակը գործադրելու համար։ Թեև իրավունք չունիմ այդպես արտահայտվելու, սակայն սրտով վստահ եմ և մտքով նույնիսկ, որ արդեն իսկ որոշված և կատարված բան մը կրնաք նկատել կտակի գործադրությունը։ (Ծափահարություններ)։

Մեր աշխատանքներուն վարձատրությունը մենք արդեն գտած ենք, և գտած ենք առաջուց, որովհետև եկանք Հայաստան, 52 տարիներե ի վեր մեր երազած հողը, և հոս գտանք ոչ միայն Մայր Հայաստանի հողը, կլիման, շուրը, արևը, Արագածը, Արարատը, Մասիսը, այլ նաև գտանք վերաշինված Հայաստանը, այլ նաև գտանք մարդիկ, որ կաշխատին, գտանք Եկեղեցի մը, որ կենսունակ է, Եկեղեցի մը, որ կաշխատի, կվերածնի։ Հոծ բազմությունը Մայր Տաճարի շրջափակին մեջ, որ ուժտի կուգա այստեղ, բոլոր ադոնք ինձ համար հիացման և ուրախ խանդավառության առիթներ հանդիսացան։

Այս բոլորին հետ, մենք այստեղ արժանացանք նաև Ձեր հայրական ընդունելության և գուրգուրանքին։ Հարազատ Հոր նման Դուք մեզ շրջապատեցիք սիրով և հոգածությամբ, և ներողամիտ եղաք մեր բոլոր պակասություններուն։ Մենք վայելեցինք սրբազան հայրերու, հոգեշնորհ վարդապետներու և Ձեր գործակիցներու սիրալիր հյուրասիրությունը Մոսկվայեն սկսած, և այդ բոլորը, բնական է, մեզ շատ հուզեցին։ Վեհափա՛ռ Տեր, 25 տարիե ի վեր, ծնողքիս մահեն վերջ, առաջին անգամն է, որ կույամ այստեղ հուզումես։ Մենք լացող մարդիկ չենք, Պզտիկուց ես կըսեի. «Հայ Ազգը պետք չէ լա. Հայ Ազգը պետք է պայքարի, իր ամբողջ կենսունակությունը ի գործ դնե չլալու և հակառակելու իր հակառակորդներուն»։ Բայց Դուք լացուցիք մեզ այս առավոտ, երբ լսեցինք Մայր Տաճարին մեջ Ձեր սուրբ պատարագը և քարոզը։ Ադիկա կկարծեմ, որ մեզ համար եղավ մեծագույն և ամենալավ վարձատրությունը, առաջուց մեզ տրված։

Բաժակս կբարձրացնեմ, Վեհափա՛ռ Տեր, Հայ Եկեղեցիի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ձեր թանկագին կենացը»։

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչներ սրբ Սիդնի Քեյնի և պարոն Եդվարդ Ուլոնճյանի պատվին կազմակերպված ընդունելությունը անցավ անկեղծ ու սրտագին մթնոլորտում։

Ընդունելությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով։

***

Պաշտոնական ընդունելությունից հետո, որպես «Էջմիածին» ամսագրի պատասխանատու քարտուղար, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հարգելի ներկայացուցիչներ

սը Սիդնի Քեյնին և պարոն Եդվարդ Ուիթուճ-յանին դիմեցինք մի շարք հարցերով և ստացանք սիրալիր պատասխաններ։

Ստորև տալիս ենք մեր հարցերն ու ստացված պատասխանները։

ՀԱՐՑ.— Ի՞նչն էր Ձեր առաքելության հիմնական նպատակը։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մեր առաքելության նպատակն էր պատրաստել մի տեղեկագիր Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության համար, թե նա ինչպես կարող է գործադրության դնել Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության համար եղած կտակը։

ՀԱՐՑ.— Ինչպիսի՞ն է Պորտուգալյան կառավարության վերաբերմունքը կտակի գործադրման հարցում։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Պորտուգալիայի կառավարությունը Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության տվել է օրինական իրավասություն, բայց նրա կառավարչության վրա ոչ մի հակակշիռ չի գործադրում։

ՀԱՐՑ.— Ի՞նչ տպավորություն կրեցիք Մայր Աթոռից։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մենք շատ լավ տպավորվեցինք Մայր Տաճարի գեղեցկությունից և հնությունից, Էջմիածնի շուրջ հայ հավատացյալ ժողովրդի ուժեղ համախմբվածությունից և այն կորովից ու հավատից, որոնցով Նորին Սրբություն Վազգեն Ա Կաթողիկոսը վարում է Հայ Եկեղեցու դարավոր կենտրոն Մայր Աթոռի գործերը։

ՀԱՐՑ.— Ինչպե՞ս գտաք շինարարական աշխատանքները Մայր Աթոռում և ինչպիսի՞ն է Ձեր գնահատանքը։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մենք ուրախ եղանք տեսնելով, որ վերանորոգչական շատ աշխատանքներ արդեն կատարվել են և կատարման ընթացքի մեջ են գտնվում, բայց դեռևս անհրաժեշտ գործ կա՝ վերականգնելու համար Մայր Տաճարն իր արժանավայել բարեկարգության մեջ։

ՀԱՐՑ.— Ի՞նչ տպավորություններ ունեցաք Հայաստանից։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Հայաստանը անչափ հետաքրքիր երկիր է իր հին պատմությամբ և տնտեսական ակտիվ զարգացման տեսակետով, և մեզ հարկավոր կլինեին բազմաթիվ էջեր՝ արտահայտելու համար մեր բոլոր տպավորությունները։

ՀԱՐՑ.— Ինչպե՞ս գտաք Հայաստանի ժողովրդի վերաբերմունքը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մենք մեծ հետաքրքրություն գտանք հայ հավատացյալ ժողովրդի մեջ դեպի Ս. Էջմիածինն ու նրա վերանորոգությունը։

ՀԱՐՑ.— Ձեր կարծիքով հանգուցյալ Բարերի կտակը ի՞նչ նպաստներ կարող է բերել Հայ Եկեղեցու այսօրվա վերազարթոնքին։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մենք մեծ հույս ունենք, որ մեր առաքելությունը կօժանդակի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությանը՝ գործադրելու համար Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության վերաբերյալ կտակը, և որ վերանորոգությունը կօգնի ընդհանրապես Հայ Եկեղեցու պայծառացմանը։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ

ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Օգոստոսի 15-ին, հինգշաբթի օր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչները՝ Լոնդոնի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի պրոֆեսոր մեծարգո սըր Սիդնի Քեյնը և Փարիզի համալսարանի դասախոս ճարտարապետ պարոն Ե. Ութուճյանը։

Օդանավակայանում, Վեհափառ Հայրապետի անունից, հյուրերին դիմավորեցին Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և Մայր Աթոռի դիվանապետ պարոն Հայկ Առաքելյանը։ Տ. Սահակ սրբազանը հյուրերին ուղղված ողջույնի խոսք ասաց։ Մեծարգո սըր Սիդնի Քեյնը իր պատասխան խոսքում խորին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար։

Այնուհետև հյուրերը առաջնորդվեցին Երևանի «Արմենիա» հյուրանոցը։

Օգոստոսի 16-ին, ուրբաթ օրը, հարգելի հյուրերը Տ. Եղիշե վարդապետի, դիվանապետ պարոն Հ. Առաքելյանի և Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պարոն Հ. Սեդրակյանի ուղեկցությամբ այցելեցին տեսարժան վայրեր, եղան Արզնի բուժարանում, Ծաղկաձորում և Սևանում։ Այս ուղևորության ժամանակ հյուրերը հնարավորություն ունեցան հանգամանորեն ծանոթանալու Մայր Հայրենիքի բնության գեղեցկություններին, կուրորտային սպասարկման դրվածքին, Սևանի լճի գեղեցկությանն ու հմայքին։ Բայց ի մասնավորի հյուրերը հուզիչ ու խանդավառ տպավորություններ ստացան Ծաղկաձորում, երբ դիտեցին հայ ճարտարապետության հրաշալի հուշարձաններ՝ Կեչառիսի վանքերը, ծանոթացան նրանց պատմության, ճարտարապետական առանձնահատկություններին և Հայրենի Կառավարության հոգատար ու բարեխիղճ վերաբերմունքին։ Պետական միջոցներով վերակառուցվում ու պահպանվում է ամբողջ վանքը։ Վանքերի մասին հյուրերին բացատրություններ տվեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հնությունների պահպանության կոմիտեի պատասխանատու աշխատակից Կ. Հովհաննիսյանը։ Թանկագին հյուրերը առանձնապես անմոռաց տպավորություններ ունեցան Ծաղկաձորում հանդիպացող հազարավոր պիոներների ճամբարներից մեկում։ Փոքրիկ պիոներները հյուրերին ընդունեցին սրտագին խանդավառությամբ, համաձայն պիոներական ընդունված պաշտոնական կարգ ու ձևի։ Հուզիչ էր այն պահը, երբ մի փոքրիկ պիոներ, ընդունելության համապատասխան հանդիսությունից հետո պիոներական կարմիր վզկապ կապեց սըր Սիդնի Քեյնի և պարոն Ութուճյանի վզից։ Այդ օր հյուրերը ճաշեցին պիոներների հետ միասին, ուրախ սեղանների շուրջ հավաքված։

Բաժանման ժամանակ ստեղծվեց իրապես սրտառուչ տեսարան, երբ հյուրերը լավա-

գույն տպավորություններով հրաժեշտ առին մեր կայտառ և սիրասուն փոքրիկներից։

Հյուրերը ուշ հրեկոյան վերադարձան հյուրանոց։

Հաջորդ օրը, շաբաթ, օգոստոսի 17-ին, հյուրերը այցելեցին Բյուրականի աստղադիտարանը, որտեղ նրանց դիմավորեց աստղադիտարանի գիտաշխատողների խումբը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանի գլխավորությամբ։ Բյուրականում հյուրերը հանգամանորեն ծանոթացան աստղադիտարանի գիտական աշխատանքներին և բարձրորեն զարգացած տեխնիկական հարմարություններին։

Բյուրականից հետո հյուրերը այցելեցին Օշական Ս. Մեսրոպի շիրմին և հարուստ տպավորություններով վերադարձան Երևան։

Կիրակի, օգոստոսի 18-ին, Ս. Աստվածածնի վերափոխման օրը, հավարտ սուրբ պատարագի, Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն օրվա տոնի կապակցությամբ, որին ներկա էին ամբողջ միաբանությունը և Մայր Աթոռի պաշտոնեությունը։

Ընդունելությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Ս. Գասպարյանը։

Գերապատիվ Սահակ սրբազանը Ս. Աստվածածնի տոնի առթիվ Վեհափառ Հայրապետին շնորհավորելուց հետո, պաշտոնապես ներկայացրեց Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչներին՝ սրբ Սիդնի Քեյնին և պարոն Եդվարդ Ութուճյանին։

Սրբ Սիդնի Քեյնը Վեհարանի Ծաղկյա դահլիճում ընդունելության ժամանակ ասաց.

«Ձերդ Սրբություն.

Ուրախ ենք հայտնելու, որ բարեհաջող կերպով ժամանեցինք Ս. Էջմիածին և գտանք սրտագին հյուրընկալություն։

Մենք, ինչպես գիտեք, Ձեզ հայտնի նպատակով եկել ենք այստեղ, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հատուկ հանձնարարությամբ, որպեսզի մեր գործունեությամբ ցանենք իրագործելու մեծ Հանգուցյալի կտակը։ Այս նպատակի համար անշուշտ մենք պիտի տարբեր առիթներով էլ հանդիպենք, ինդիրները գործնականորեն քննության առնելու համար։

Ես անձամբ ծանոթ եմ հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու անցյալ պատմության և մեծապես գնահատում եմ նրանց դերը ողջ քրիստոնեության համար բերած իրենց նպաստների մեջ։ Հետևաբար իմ այս առաքելությունը ինձ խորապես մխիթարում է, որ ես իմ համեստ օգտակարությունը պիտի բերեմ նրանց կյանքի և գործերի հաջողության համար։

Ես խորապես զգացված եմ, Ձերդ Սրբություն, ինձ տրված մեծ պատվի համար և ողջունում եմ Ձեզ ամբողջ սրտով։

Ապա մեծարգո պարոն Եդվարդ Ութուճյանը, թարգմանելով սրբ Սիդնի Քեյնի խոսքերը, ինք ևս իր հերթին ասաց.

«Վեհափա՛ռ Տեր.

Ես երախտապարտ կզգամ դիս Ձերդ Վեհափառության և Կյուլպենկյան հիմնարկության անդամներուն առջև, որ ինձի պատեհություն տրվեցավ ոտք կոխելու իմ շատ երազած Մայրենի հողին վրա և ըլլալ Ս. Էջմիածնի մեջ։

Ես կուգամ հանձնարարությամբ մը որպես ճարտարապետ, որպեսզի մոտիկեն, մասնագետի ալ աչքերով տեսնվին այն ծրագրերն ու աշխատանքները, որոնց Դուք ձեռնարկած եք, մասնավորապես Մայր Տաճարի աշխատանքներուն վերաբերյալ, համաձայն հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի թողած մեծ կտակին։ Ես իմ ամբողջ գիտակցությամբ և խղճով պիտի կատարեմ իմ պարտականությունը։

Թույլ տվեք որդիական ակնածանքով ողջունել Ձեզ, համբուրելով Ձեր Ս. Աջը»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հայտնելով Իր շնորհակալությունը սուրբ տոնի առթիվ Իրեն ուղղված շնորհավորանքների համար, հատկապես դիմեց հյուրերին՝ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչներ սրբ Սիդնի Քեյնին և պարոն Եդվարդ Ութուճյանին.

«Հոգեկան խորունկ գոհունակությամբ կողջունեմ Ձեզ այս սուրբ հողին վրա ու կմաղթեմ Ձեզ բարի գալուստ։

Մեզի հայտնի ըլլալով Ձեր այցելության ազնիվ նպատակը, Մենք իրապես ուրախ կզգանք Մեզ այս պաճուն հավատալով, որ անօգնական պիտի չմնանք Մեր շինարար աշխատանքներուն և ծրագրերուն իրագործման համբուն վրա։

Մեր Ս. եկեղեցին, մեր Մայր Աթոռը վերածնունդի շրջան մը կսկսին մեր օրերուն։ Մեր ժողովրդի հոգիին մեջ սուրբ հավատքը կաճի ու կխորանա։

Մեր երկրին մեջ այժմ ստեղծված օրինական պայմանները նույժ նպաստավոր են։

Հետևաբար մենք՝ հոգևորականներս լծված ենք աշխատանքի, վերաշինելու համար մեր եկեղեցին և Ս. Էջմիածինը իր բոլոր հաստատություններով։

Այս պատմական և վճռական պաճուն կուգամ Ձուք և Մեզ կրերեմ մեծ ավետիս մը, որն է Մեզ օգնել այն նյութական միջոցնե-

ռով, որ հատկապես Ս. Էջմիածնի համար կատկված են ազգային բարեբար Գալուստ Կյուլպենկյանի կողմե:

Այս իրողության մեջ Մենք կտեսնենք նախախնամության ձեռքը: Դոհություն Աստուծո: Մենք Մեր գործը սկսած ենք հավատքով և լավատեսությամբ: Արդ, երջանիկ ենք հաստատելու, որ Մեր գործին շուրջ հետզհետե կստեղծվին այն բոլոր առարկայական պայմանները, որոնք առավել կանենշեն Մեր լավատեսությունը և Մեր բոլոր հույսերը կդառնան սուտգուրյուններ:

Մեզ խորապես հուզեցին մեծարգո սրբ Սիդնի Քեյնի խոսքերը, երբ ան ըսավ, թե ինքը կճանչնա մեր Եկեղեցին, մեր ժողովուրդը, մեր պատմությունը: Եթե այդպես է, Մենք պիտի ըսենք.— Մեծահարգ պարոն պրոֆեսոր, եթե մեզ կճանչնաք, հետևաբար պիտք է նաև սիրեք մեր Եկեղեցին, մեր ժողովուրդը:

Կհավատանք, որ խնդիրները գործնականորեն քննելու առթիվ մենք գիրար լավագույնս ու հիշա պիտի հասկնանք ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցվո և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Վերստին բարի գալուստ մաղթելով Ձեզի, կցանկանք Ձեզ խաղաղ և բարի ժամանց Հայաստանի հողի վրա:

Թող Աստված օրհնե Ձեր ազնիվ գործը»:

Պաշտոնական ընդունելությունից հետո հյուրերի պատվին Վեհարանում տրվեց ճաշ, որին ներկա եղան մասնավոր հրավիրյալներ։ Ճաշից հետո հարգարժան հյուրերը Վեհափառ Հայրապետի հետ ունեցան երեք ժամ տևող տեսակցություն։

Օգոստոսի 19-ին, երկուշաբթի օր, սրբ Սիդնի Քեյնը և պարոն Եդվարդ Ուիթուիլյանը Վեհարանում երկրորդ խորհրդակցությունը ունեցան Նորին Ս. Օծության հետ։ Այդ խորհրդակցությանը ներկա էին նաև Մայր Աթոռի տնտեսաֆինանսական կառավարչության պետ պարոն Հ. Սեդրաքյանը և Մայր Աթոռի ճարտարապետ պարոն Ա. Գալիկյանը, որոնք Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ հանգամանորեն հյուրերին ծանոթացրին Մայր Աթոռում և նրա շրջապատի մեջ կատարված ու կատարվելիք աշխատանքներին։

Օգոստոսի 20-ին, երեքշաբթի, Վեհարանում շարունակվեց խորհրդակցությունը Վեհափառ Հայրապետի նախագահության տակ։

Կեսօրին Վեհափառ Հայրապետի հետ սրբ Սիդնի Քեյնը և պարոն Եդվարդ Ուիթուիլյանը սեղանակից եղան միաբանության։ Հյուրերը մեծարվեցին հայկական հերիսայով։

Ուսանողության անունից թանկագին հյուրերին բարի գալուստի խոսք ասաց բարեշնորհ Խորեն սարկավագ Գալյանը։ Ապա մեծարգո սրբ Սիդնի Քեյնը խոսքը ուղղելով ուսանողներին ասաց.

«Մեր՝ Հայաստանում անցկացրած մի քանի օրերի ընթացքում ծանոթացանք մասնավորաբար Հայ Եկեղեցու անցյալ փառավոր պատմությանը և եկեղեցական շենքերի հրաշալի կոթողներին, բայց այսօր ներկա ենք գտնվում ի մասնավորի Հայ Եկեղեցու ապագա ծառայողների մոտ և մենք շատ ուրախ ենք դրա համար։

Հայ Եկեղեցին մեծ ծառայություններ է մատուցել իր ժողովրդին և ամբողջ մարդկության, և դեռ պետք է շարունակի իր գործը։ Հետևաբար շնորհավորում ենք Ձեզ և հաջողություններ ցանկանում։

Ճաշից հետո Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանի առաջնորդությամբ հյուրերը եղան Հոգևոր Ճեմարանում, այցելեցին դրադարանը, հանդիսասրահն ու դասասենյակները, և ապա եղան նաև ուսանողության ննջարաններում։

Վերադառնալով Երևան, հյուրերը այցելեցին Երևանի կոնյակի և Շահումյան ավանի (Լենինի անվան մետաքսի գործարանները։

Օգոստոսի 21-ին, չորեքշաբթի օր, հյուրերը մեկնեցին Գեղարդի վանքը ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Գնել և Տ. Եղիշե վարդապետների, պարոն Հմայակ Սեդրաքյանի և պարոն Հայկ Առաքելյանի։

Դեպի Գեղարդ ճանապարհի վրա սրբ Սիդնի Քեյնը և պարոն Եդվարդ Ուիթուիլյանը այցելեցին Գառնիի հեթանոսական տաճարը, և ապա ուղղվեցին դեպի Գեղարդի հրաշալավոր պատմական վանքը։ Վանքի մեծ դարբասի առաջ հարգելի հյուրերը դիմավորվեցին Գեղարդի վանահոր և միաբանության անդամների կողմից։ Վանքում հյուրերը երկար ժամանակ հիացմունքով դիտեցին հայ ճարտարապետության չքնաղ կոթողներից մեկը հանդիսացող Գեղարդի վանքի եկեղեցիներն ու մատուռները։ Հայրենի բնության այդ չքնաղ անկյունը մեծ տպավորություն թողեց հյուրերի վրա, որոնք խորապես գնահատեցին հայ տաղանդավոր վարպետների ճարտարապետական աշխատանքները և Հայաստանի չքնաղ բնությունը։ Վերջում ի պատիվ հյուրերին տրվեց նախաճաշ։ Սրբ Սիդնի Քեյնը և պարոն Եդվարդ Ուիթուիլյանը մեծ հաճույքով ճաշակեցին առանձնապես Գեղարդի ծաղկաբույր և քաղցրահամ մեղրը։ Հյուրերը երեկոյան դեմ լավագույն տպավորություններով հրաժեշտ առին Գեղարդից։

Օգոստոսի 22—24 օրերին շարունակվեցին խորհրդակցությունները Էջմիածնում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ։ Այդ օրերին սըր Սիդնի Քեյնը և պարոն Ուիթուեյանը այցելեցին նաև Զվարթնոց և Ս. Հռիփսիմյանց ու Ս. Գայանյանց վանքերը, եղան վերջերս ստացված նոր Վեհարանի շենքում, հանգամանորեն հետաքրքրվեցին նոր Վեհարանի վերանորոգության և կահավորման հետ կապված հարցերով։

Օգոստոսի 23-ին, ուրբաթ օր, առավոտյան ժամը 11-ին, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչները՝ սըր Սիդնի Քեյնը և պարոն Եդվարդ Ուիթուեյանը, Հայկական ՍՍՌ Կառավարական տանը ընդունվեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահի տեղակալ պարոն Բալաբեկ Մարտիրոսյանի կողմից։

Ընդունելությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Ս. Գասպարյանը։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահի տեղակալի և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ երկու ժամ տևող ջերմ զրույց՝ նրանց առաքելության հետ կապված հարցերի շուրջ։

Օգոստոսի 25-ին, կիրակի օր, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչները ներկա եղան Մայր Տաճարում ի հիշատակ Մայր Աթոռի մեծանուն բարեբար Գալուստ Կյուլպենկյանի մահվան երկրորդ տարելիցի մատուցված հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագին և բարոզին։

Օգոստոսի 26-ին, երկուշաբթի օր, սըր Սիդնի Քեյնը և պարոն Եդվարդ Ուիթուեյանը հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից և իրենց առաքելությունը ավարտած համարելով, օդի ճանապարհով Մոսկվայի վրայով մեկնեցին դեպի Փարիզ։

Երևանի օդանավակայանում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հարգելի ներկայացուցիչներ սըր Սիդնի Քեյնին և պարոն Եդվարդ Ուիթուեյանին ճանապարհեցին հոգեշնորհ Տ. Մեսրոպ և Տ. Եղիշե վարդապետները, Մայր Աթոռի դիվանապետ պարոն Հ. Առաքելյանը և տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պարոն Հ. Սեդրակյանը։

Բարի ճանապարհ հարգելի հյուրերին։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻ ՍՈՒԹԻՎ

Սեպտեմբերի 15-ին, կիրակի օրը, Խաչվերացի տոնին, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Վեհափառ Հայրապետը։

Հայրապետական սուրբ պատարագին ներկա էր հավատացյալների հոծ բազմություն և Կալիֆորնիայից Մայր Աթոռ ժամանած ուխտավորների խումբը, որը բաղկացած է 33 հոգուց։

Մայր Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Վարպետը՝ Ալբերտիք Խաչակյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ուխտավորների ամբողջ խումբը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ պաշտոնական հրավիրյալներ։

Սուրբ պատարագին ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանը։

Ժամը 11-ին հնչում են Մայր Տաճարի զանգերը, Վեհարանում զգեստավորված Վեհափառ Հայրապետը, երգով ու շարականով, խնկով ու աղոթքով, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր Տաճար։

Վեհափառ Հայրապետի ամպհովանին կրում են չորս ուխտավորներ՝ պ. պ. Թեոֆիամին Ղաղարյան, Հարությունն Սոլոմոն, Ալեքս Հանենյան և Արմենակ Հայրապետյան։

Վեհարանից Մայր Տաճար տանող ճանապարհի վրա, հավատացյալների կողմից Վեհափառ Հայրապետը դիմավորվում է սրտագին։ Սրբազան Քահանայապետը Աչը միշտ բարձրացված դիրքում՝ սուրբ խաչով օրհնում է հավատացյալներին։

Ժամը 12-ին սկսվում է հայրապետական սուրբ պատարագը։ Մայր Տաճարը վառվում է պայծառ լույսերի հեղեղի մեջ։ Վեհափառ Հայրապետին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Վարդան սրբազանները, հոգեշնորհ Տ. Եղիշե, Տ. Մեսրոպ վարդապետները, Տ. Հուսիկ աբեղան և Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Մայր Տաճարի երգչախումբը դաշն ու վեհ հանդիսությամբ կատարում է սուրբ պատարագի երգեցողությունը։

Մայր Տաճարում ուխտավորների քարեպաշտ խումբը երկյուղածորեն ունկնդրում է հայկական սուրբ պատարագը։ Այդ օրը պատմական ու անմոռանալի պիտի մնա նրանց հիշողության և սրտերի մեջ։ Ներկա լինել հայրապետական սուրբ պատարագին Մայր Տաճարում, այդ երջանկությունը բոլորին չէ որ վիճակվում է։

Ավագ սեղանի վրա բազմատարած աղոթում է Ամենայն Հայոց Հայրապետը «Վասն Հայրապետության և Հանրապետության ամենայն հայոց»։

Սուրբ պատարագը շարունակվում է հոգեթով հանդիսությամբ մինչև «Հայր մեր»-ը։

Քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Սա է զէն յաղթութեան ընդդէմ թշնամեացս տնաբանով։ Վեհափառ Հայրապետն իր քարոզում գեղեցկորեն բացատրում է նախկինում մահվան փորձիք հանդիսացող խաչի՝ Քրիստոսով մարդկության փրկության գործիք դառնալու հանգամանքը և շեշտում, որ խաչի պաշտամունքի մեջ, քրիստոնյա մարդը խաչի նյութը չէ որ պաշտում է, այլ խաչի մեծ խորհուրդը, նշանակությունը։

Հայ ժողովուրդը, շարունակում է ամենահետ Վեհափառ Հայրապետը, շատ վաղուց եղել է խաչի խորհրդի և զորության հավատացող ժողովուրդներից մեկը, որը հանուն իր հավատի՝ պարծանքով և ճահատակությամբ է կրել իր խաչը և ապրել է խաչի զորությամբ, որովհետև խաչը հաղթության գենք է հանդիսացել հայ ժողովրդի ձեռքում նրա թշնամիների դեմ։

Քարոզի վերջում Վեհափառ Հայրապետը բարեմաղթություններ արեց, որ հայ հավատացյալների սրտում միշտ ներգործող լինի սուրբ խաչի զորությունը։

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը հանդիսությամբ առաջնորդվեց Մաղկյա գահլիճ, ուր ընդունեց միաբանության և ուխտավորների շնորհավորությունները Խաչվերացի տոնի առթիվ։

Ապա Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին և հայրական սրտագին գոհություն ունեցավ Կալիֆորնիայից եկած ուխտավորների հետ, որոնք պատմեցին իրենց ուխտավորի տպավորությունները Մայր Աթոռից, սրբավայրերից, ուխտատեղիներից, որտեղ նրանք եղել էին։

Վեհափառ Հայրապետը պրույրի ժամանակ հետաքրքրվեց Կալիֆորնիայի հայ ազգային-եկեղեցական կյանքով և բարեմաղթություններ արեց ուխտավորների գործերի հաջողության համար։

ՈՂՋԵՐԹԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՍԵՂԱՆ Ի ՊԱՏԻՎ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ

Ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսության մեծ դահլիճում, կազմակերպվել էր միաբանական սեղան ի պատիվ ուխտավորների, որոնք, իրենց ուխտավորության շրջանը ավարտած, պետք է վերադառնային իրենց տները։

Ողջերթի սեղանին նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Սեղանը բացվեց Տերունական աղոթքով։

Հոգևորականների թվում էր Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանը։

Սեղանին ներկա էին Վարչությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, միաբանությունը, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները և Մայր Աթոռի պաշտոնեությունը։

Սեղանների շուրջ ստեղծվել էր հայրենասիրական ջերմ մթնոլորտ։ Բաժակաճառեր արտասանվեցին Մայր Աթոռի անսասանության և Վեհափառ Հայրապետի արևշատության, Մայր Հայրենիքի հետագա հզորացման և հայ ժողովրդի միասնության կենաց։

Ուխտավորներին ուղղված սրտագին, ջերմ խոսքեր ասացին Վեհափառ Հայրապետը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Ս. Գասպարյանը, Վարչության և Մեսրոպ վարդապետը։ Իրենց հերթին ուխտավորներից շատերը պատմեցին իրենց տպավորությունների մասին և սրտագին երախտագիտական և շնորհակալական խոսքեր ասացին Վեհափառ Հայրապետին և Հայրենի հարազատ Կաթողիկոսությանը, իրենց ընծայված այս երջանիկ և պատմական ուխտագնացության համար։

Բոլոր ուխտավորների միահամուռ ցանկությունն էր է՛լ ավելի երկար ժամանակով մնալ Վեհափառ Հայրապետի մոտ Մայր Աթոռում և Հայրենիքում՝ իրենց հարազատների մոտ։

Կալիֆորնիայից եկած ուխտավորների պատվին տրված ողջերթի սեղանը անցավ հայրենասիրական խանդավառ մթնոլորտում։

Ողջերթի սեղանը փակվեց Վեհափառ Հայրապետի գոհարանական աղոթքով և ուխտավորները հրաժեշտ առին Մայր Աթոռից, Վեհափառ Հայրապետից, միաբանությունից և բոլոր ներկաներից՝ անմոռանալի հուշերով։



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Վասն համօրէն ննջեցելոց»։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Կալիֆորնիայից եկած ուխտավորների առաջին խումբը՝ բաղկացած 33 հոգուց։ Երևանի օդանավակայանում ուխտավորներին դիմավորեցին հոգեշնորհ Տ. Սղիշե և Տ. Մուշեղ վարդապետները։

Ուխտավորները Մայր Աթոռում կմնան շուրջ 20 օր, կայցելեն այլ սրբավայրեր և Հայրենիքի տեսարժան վայրերը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տօն ծնընդեան Սրբուհւոյ կուսին Մարիամու յԱննայէ»։ Օրվա տոնի կապակցությամբ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էր նաև Կալիֆորնիայից եկած ուխտավորների խումբը, որոնք հետ սուրբ պատարագի պաշտոնապես ներկայացան Վեհափառ Հայրապետին Նրա օրհնությունը ստանալու համար։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Վասն համօրեն ննջեցելոց»։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Երևանի օդանավակայանից մեկնեց Բաքու հովվապետական այցելության։

Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունն ու պաշտոնեությունը։

Ողջերթի համար Երևանի օդանավակայանն էր եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանը։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին դիրաշնորհ Տ. Սահակ և Տ. Վարդան սրբազանները, հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ալեքսիսյանը, հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը և բարեշնորհ՝ Հովհաննես սարկավագ Դանիելյանը։

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ՄԱՑՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց անգլիական գրող և խաղաղության կողմնակիցների շարժման ակտիվ մասնակից Ջեյմս Օլդրիջը իր տիկնոջ և երեխաների հետ։ Ջեյմս Օլդրիջը՝ «Դիվանագետ» և «Որսորդ» վեպերի մեծանուն հեղինակը՝ եղավ Մայր Տաճարում, եկեղեցահնագիտական թանգարանում և հետաքրքրվեց Մայր Տաճարի շինության և պատմության մանրամասնություններով։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 15-ԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց «Մանչեստր գարդիան» թերթի թղթակից Էննա Վենգերը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելության եկավ «Կամո» կինոժապավենի սցենարի հեղինակ Մարկ Մաքսիմովը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ ՄԱՑՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեցին Ֆինլանդիայի Սեյմի մի խումբ դեպուտատներ, որոնց թվում գրականության և արվեստի պրոֆեսոր Վուտրենրիննե Տոյվո Իլմարին (պատվիրակության ղեկավար)։ Հարգելի հյուրերը եղան Մայր Տաճարում և թանգարանում։ Ապա հյուրերը Վեհարանում ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից, որը շերմ զրույց ունեցավ նրանց հետ։

Ֆինլանդիայի Սեյմի դեպուտատները հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից լավագույն տպավորություններով։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 30-ԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց հունգարական ճարտարապետների պատվիրակությունը, որին գլխավորում էր դոկտոր Գեյրո Լասլոն։ Հյուրերը հետաքրքրությամբ դիտեցին հնամենի Տաճարը։

Հունգարական ճարտարապետների պատվիրակությանը վերջում ընդունեց Վեհափառ Հայրապետը։

Մայր Տաճար այցելողներին ընդունում և առաջնորդում էր թանգարանի վարիչ հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղան։



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

1957 թվականի սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը իր դռները նորից բացեց մեր ժողովրդի հոգևոր ծառայության նվիրված հին և նոր ավելի քան 60 ճեմարանականների առաջ։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ամռան ամիսներին հիմնական վերանորոգման ենթարկվեցին Ճեմարանի ամբողջ շենքը, ննջարանները, ժամանակին հոդացվեցին դասարանական և դրենական անհրաժեշտ պիտույքները, ննջարանային, առողջապահական հարմարությունները։

Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ և Գերագույն Հոգևոր Խորհրդի մանրակրկիտ ուսումնասիրությամբ վերանայվեց և վավերացվեց 1957—1958 ուսումնական տարվա ծրագիրը։

Սեպտեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, սկսվեցին Հոգևոր Ճեմարանի ընդունելության քննությունները։ Տեսչության սեղանի վրա կար ավելի քան 40 դիմում։ Այդ օր Ճեմարանի բակը լիքն էր նորեկ աշակերտներով։ Շատերը եկել էին Հայաստանի տարբեր շրջաններից, Անդրկովկասից, Հյուսիսային Կովկասից։

Քննիչ հանձնախմբի առաջ կանգնած նոր ընդունվող ուսանողները մուտքի քննություններ են հանձնում հայոց լեզվից և գրականությունից (գրավոր և բանավոր), հայ ժողովրդի պատմությունից (բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր) և երգեցողությունից։ Մինչև երեկոյան ժամը 5-ը շարունակվում են քննությունները։ Դատելով քննությունների արդյունքներից, ընդունվում են 10-րդ դասարանն ավարտած 10 հոգի, 9-րդ դասարանից՝ 4 հոգի և 7—8-րդ դասարաններից՝ 11 հոգի, ընդամենը՝ 25 հոգի, որով այս տարի Ճեմարանի ուսանողության ընդհանուր թիվը կլինի 53 հոգի, բաժանված հետևյալ հինգ դասարանների վրա.

Ա դասարան, 16 հոգի.
Բ դասարան, 15 հոգի.
Գ դասարան, 8 հոգի.
Ա լսարան, 8 հոգի.
Բ լսարան, 6 հոգի։

Ընդունելության քննություններից հետո, նոր ուսանողների խումբը, Ճեմարանի փոխտեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի կողմից ներկայացվեց Վեհափառ Հայրապետին՝ նրա հայրական օրհնությունն ստանալու համար։

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի օրը, հանդիսավոր իրադրության մեջ կատարվեց Հոգևոր Ճեմարանի պաշտոնական բացումը։

Ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը Ճեմարանի բակում սրտատրոփ սպասում էին Վեհափառ Հայրապետի գալստյան։ Առավոտյան ժամը 10-ին նորին Ս. Օծությունը ժամանում է Հոգևոր Ճեմարան, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության անդամներով և դիմավորվում է խանդավառ ծափահարություններով դասախոսական կազմի և ուսանողության կողմից։

Ճեմարանի հանդիսությանը մեծ դահլիճում սկսվում է Ճեմարանի բացման հանդիսավոր արարողությունը։ Միաբերան ու դաշն երգվում է «Աշակերտք Քրիստոսի» շարականը։ Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը կարդում է Ավետարանից Սերմնացանի առակը։ Ա. յարանի ուսանող Խորեն Մելիքանջյանը կարդում է Նարեկացու «Ողերս առ Ս. Հոգին» հատվածը (Բան ԼԴ)։

Ապա Ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից երախտագիտական խոսք է ասում Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը՝ Ճեմարանի 1957—1958 ուսումնական տարվա առիթով.

«Վեհափառ Տե՛ր, սրբազան հայրե՛ր, սիրելի ուսուցիչնե՛ր և ուսանողնե՛ր,

Այսօր սկիզբն է դրվում Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նոր ուսումնական տարեշրջանի։ Վերստին լսվելու են այդ կամարների տակ գիտության ու գրականության, կրոնի ու եկեղեցագիտության վերաբերյալ դասավանդությունները և այստեղ խմբված մեր ուխտյալ ուսանողությունը դարձյալ պիտի կատարի իր բնրքահավաքը՝ հարբստանալու համար գիտակցությամբ, ազնվանալու համար հոգով։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը այսօրվանից սկսում է շարունակել իր առաքելության մեկ նոր փուլը, որը լինելով հանդերձ նախորդների օրգանական շարունակությունը, ինքն իր հերթին բեղմնավորված կլինի շատ ու շատ եկեղեցաշեն ու ազգոգուտ բարիքներով։



ՄԱՅՐ ԱՔՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

Լուսավորչի ու Տաթևացու լույս հավատը, Մեսրոպի ու Նարեկացու կենդանի ոգին ու լեզուն կշարունակեն իրենց պայծառացումը՝ մեր սիրելի ուսանողներին պսակելու համար շնորհքով և անձնուրաց առաքինությամբ։ Մեր պատմության իրապես լուսավոր դեմքերը, մեր մշակույթի և նկեղեցու հանճարեղ ու բոլորանվեր մշակների անձի ու գործի նկատմամբ Հոգևոր Ճեմարանում սնուցվող հարգանքն ու սերը այսուհետև ևս պիտի ուռճանան, որպեսզի մեր ուսանողները, ընդունելով նրանց մեզ ավանդած հարուստ ժառանգը, իրենք էլ աշխատեն ու ստեղծեն հանուն հայ մշակույթի ու գիտության, հանուն հայ հավատի և Հայաստանյայց Եկեղեցու շինության ու պայծառության։

Մեծ է եղել և շարունակում է մեծ մնալ Հոգևոր Ճեմարանի դերը Հայ Եկեղեցու կյանքի մեջ։ Այսօր անհուն ծարավ կա ճշմարիտ, լերմորեն հավատացյալ, հայրենանվեր, առողջ և հարուստ գիտությամբ ու համոզմունքներով զինված հոգևոր սպասավորների։

Հայ Եկեղեցին, և ի մասնավորի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ապրում են խոստմնալից վերածնունդ ու պայծառանում են։ Շնորհիվ Նորին Ս. Օծության հարատև, կենդանի և իմաստուն ղեկավարության և ավանդապահ ոգու, Հայ Եկեղեցին և Ս. Էջմիածինը ամուր խարիսխ են գցել հայ հավատացյալ ժողովրդի սրտի և հոգու մեջ։ Մեր Եկեղեցու այս օրերի զարթոնքը և Նորին Վեհափառության շինարար աշխատանքը առավել չափով պարտավորեցնում են Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը հետագա լիարյուն և բազմօգուտ գործունեության համար։

Հետևաբար, հանդիսավոր այս ժամը մի խիստ պատասխանատու սկզբնավորություն է, որը մեզնից, բոլորիցս հավասարապես, պահանջելու է մեծ ուժ և աշխատանք, համոզված լինելով հանդերձ, որ ոչինչ չենք խնայելու, այնուամենայնիվ պետք է ունենանք վճռականություն անպայման հաջողություններ նվաճելու համար։

Եվ այս առթիվ, սիրելի Վեհափառ Հայրապե՛տ, ուսուցիչներով և ուսանողությամբ խնդրում ենք Ձերդ Վեհափառության հայրական օրհնությունը։

Ապա հանդիսավոր լռության մեջ խոսք առավ Վեհափառ Հայրապետը և Իր հայրական խոսքը ուղղելով Ճեմարանի ուսանողության ասաց.

«Այսօր անգամ մը ևս Աստուծո ողորմությամբ կբանանք Հոգևոր Ճեմարանի դռները մեր ուսանողներուն առաջ, որոնք, վստահ ենք, կվերադառնան ամառնային իրենց արձակուրդեն կազդուրված և պատրաստ՝ վերսկսելու 1957—1958 ուսումնական տարեշրջանի իրենց աշխատանքները։

Այս հանդիսավոր առիթով կուզենք նշել, որ Մենք և բոլոր այստեղ հավաքվածներս պատրաստ ենք մեր աշխատանքի բաժինը բերելու՝ Հոգևոր Ճեմարանը իր կոչման և պարտականության բարձրության վրա դնելու համար և ունինք այն հաստատ համոզումը, որ մեր աշխատանքները Հոգևոր Ճեմարանին մեջ հետզհետե ավելի առաջ պիտի երթան՝ ավելի բնականոն կերպով մը և մենք պիտի հասնինք լավ արդյունքներու։

Մեր աշխատանքներուն Հոգևոր Ճեմարանին մեջ հաջողությամբ ընթանալուն համար կպահանջվի ունենալ դասախոսական կազմ, ընտրված կազմ, որ խոր գիտակցությամբ և սիրով աշխատի այս սուրբ հաստատության կամարներուն տակ։ Մենք համոզված ենք, որ այդպիսի կազմ ապահովված ենք արդեն, անցյալ տարվան մեր դասախոսական կազմին վրա ավելցնելով երեք նոր ուժեր, որոնց մեջ նաև պրոֆ. Կ. Ղաֆադարյանը։

Թեև մենք ունինք Սփյուռքի մեջ Ս. Երուսաղեմի Պատրիարքական Աթոռի ժառանգավորաց վարժարանը, Մեծի Տանն Կիլիկիո Դպրեվանքը և Կոստանդնուպոլսո Պատրիարքության Ս. Խաչ Դպրեվանքը, այնուամենայնիվ բովանդակ հավատացյալ հայ ժողովուրդը իր աչքերը սիրով ու հույսով հառած է նաև դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, և այստեղեն կսպասե իր հոգևոր կարիքներուն համար պատրաստված, հավատավոր, հայրենասեր և նվիրված հոգևորականներու։

Այս հանդիսավոր առիթով կկամենանք անգամ մը ևս շեշտել կարևորությունը գրաբար լեզվի և հայ ժողովրդի պատմության, կրոնական առարկաներու կողքին։ Հատկապես հայ հոգևորականի համար անհրաժեշտ է շատ լավ տիրապետել Սահակ-Մեսրոպյան լեզվին։ Ավելին. ով գրաբար լեզու չի գիտեր, ան չի կրնար տիրապետել նաև մեր աշխարհարար գրական լեզվին։ Եվ այս չափազանցություն չէ։ Գալով հայ ժողովրդի պատմության, մեկ ուրիշ հանդիսության ժամանակ այս բեմեն հայտարարած ենք և այժմ կկրկնենք, որ հայոց պատմության դիրքը հայ հոգևորականի ձեռքին մեջ պետք է ըլլա երկրորդ Ավետարան մը։ Ահա այս նկատառումներով արդեն հրավիրած ենք գրաբարի մասնագետ դասախոս Հոգևոր Ճեմարանին համար։

Մենք գոհ մնացած ենք Ճեմարանի անցյալ տարվա դասախոսական կազմի աշխատանքներեն։ Անոր համար այս տարի ամբողջ կազմը հրավիրված է նորեն, որուն վրա

կուգա ավելնալ նոր ընդունվող դասախոսներու կազմը, համալրելու համար Ճեմարանի դասախոսական կազմը նոր ուժերով։

Այժմ, սիրելի՛ ուսանողներ, Մեր հայրապետական խոսքը ուղղելով ձեզ, ուսումնական նոր տարվան սեմին, ձեզմե կպահանջենք երեք բան. ա) Աշխատասիրություն, գիտակից, կազմակերպված աշխատասիրություն, ոչ միայն տրված դասը սորվելու և յուրացնելու համար, այլ նաև ինքնազարգացումով զբաղելու սիստեմատիկ ընթերցանության միջոցով։ Հոգևորականը ոչ միայն գիտուն, կրթված և պատրաստված մարդ պետք է ըլլա, այլ նաև ժրաջան, աշխատասեր, աշխատանքը սիրող և աշխատանքի մեջ կոփված։ բ) Կարգապահություն ամեն տեղ, ամեն պարագայի մեջ և առանց պայմանի։ Հոգևորականի կարգապահությունը զինվորի կարգապահություն է, այսինքն գիտակից, երկաթե կարգապահություն, ուր աշխատանքն ալ, աղոթքն ալ ավելի արդյունավետ և պտղատու կդառնան։ Հոգևորականի կարգապահությունը պետք է դաստիարակվի այս Ճեմարանի դրասեղաններեն սկսյալ և այդ կարգապահությունը հանդես գա ձեր ամեն մեկ քայլին ու շարժումին մեջ։ Անկարգապահության մեջ չկա և չի կրնար ըլլալ շինարար աշխատանք։ գ) Սեր դեպի Հայաստանյայց Եկեղեցին և դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։ Դուք, սիրելի՛ ուսանողներ, պիտի դառնաք մեր Եկեղեցիին ճշմարիտ մշակները, առաքյալի խոսքով՝ «մշակք առանց ամօթոյ»։ Ուրեմն դուք պիտի սիրեք այս սուրբ գործը, պիտի սիրեք մեր Ս. Եկեղեցին և այդ Եկեղեցիի գլուխ և կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ անձնուրաց սիրով և աննահանջ նվիրումով, պիտի սիրեք առանց պայմանի և առանց ակնկալության։ Այս է ճշմարիտ սերը։ Այսպիսի սեր կպահանջեն մեզմե մեր ժողովուրդը, մեր Ս. Եկեղեցին։

Կորհնենք բոլորդ. Թող Տիրոջ Ս. Աջը հովանի ըլլա կրթական այս հաստատության բոլոր մշակներուն և ուսանողներուն վրա։

Վեհափառ Հայրապետը Իր խրատականը փակեցրեց բուռն ծափահարությունների տակ, օրհնելով բոլոր ներկաներին։

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ին հետո, տեսչական ու դասախոսական կազմը, ամբողջ ուսանողությունը մոտեցան Վեհափառ Հայրապետին՝ ի համբույր Ս. Աջույն։

Ուրախ ու ցնծագին հնչեց Ճեմարանում 1957—1958 ուսումնական տարվա առաջին դասը։

Սեպտեմբերի 10-ից սկսվեցին կանոնավոր դասավանդություններ Հոգևոր Ճեմարանում։





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԵՐԱՆԱ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Տասնմեկերորդ դարի առաջին կեսում Արծրունիների իշխանությունն արդեն վերացել էր։ Դրանից հետո, մի քսան տարի դեռ չանցած, 1045 թվականին Բյուզանդացիները գրավեցին նաև Անին՝ Բագրատունիների մայրաքաղաքը։ Ներխուժեցին Հայաստան և սելջուկները։ Այսպիսով՝ արևմուտքից բյուզանդական և արևելքից սելջուկների բռնակալ լուծը անտանելի պայմաններ էին ստեղծում հայ ժողովրդի համար։ Սպառնացող վտանգի տակ էին հայ մարդու կյանքն ու գույքը։ Քաղաքական այս անհպատ հանգամանքները պատճառ հանդիսացան, որ շատ հայեր բուն Հայաստանից դեպքին դիպի հեռավոր ու համեմատաբար ապահով վայրեր։

Արևելյան Հայաստանի համեմատությամբ այդպիսի ապահով վայրեր էին հանդիսանում, թեկուզ ժամանակավորապես, Կապադովկիան, Միջագետքի հյուսիս-արևմտյան մասերը, Ասորիքն ու Կիլիկիան։

Առանձնապես դեպի այդ երկրները ուժեղ արտագաղթի հոսանքն սկսվեց ԺԱ դարի սկզբներից։

Բյուզանդական հայահալած քաղաքականությունը մի կողմից, սելջուկ-թուրքերի ավերիչ արշավանքները մյուս կողմից, ստիպում էին հայերին թողնելու հայրենի բնիկ երկիրը։ Տասնյակ հազարներով շինական գյուղացիներ, իրենց իշխանների ու հոգևորականների հետ, գաղթեցին դեպի հիշված երկրները։ Որքան այս արտագաղթը վնասակար ու քայքայիչ երևույթ էր Հայաստանի ու նրա պետականության համար, ապա նա այնքան ձեռնտու և օգտակար էր Բյուզանդիային ու նրա վարած քաղաքականությունը։ Դեռ ավելին. այս երևույթը կրկնակի ձեռնտու էր Բյուզանդական կայսրությանը այն պատճառով, որ, առաջին՝ մասամբ այն գաղթը թուլացնում ու ջլատում էր բուն Հայաստանը, նրա կենսական ու պետական ուժերը, և երկրորդ՝ գաղթած հայերին Բյուզանդիան տեղավորելով ու բնակեցնելով իր կայսրության սահմանամերձ շրջանները, մի պատվար էր ստեղծում արևելքից ու հարավից սպառնացող թշնամիների դեմ։

Բուն Հայաստանից գաղթողների համեմատաբար մեծ մասը բնակություն հաստատեց Կիլիկիայում։

Կիլիկիայի Հայկական պետության պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի ու կարևոր մի մասն է կազմում, առանց որի հնարավոր չէ լրիվ, ամբողջական գաղափար կազմել մեր միջնադարի մասին։

Կիլիկիան իր բնական ամրություններով, անմատույց լեռներով, որոնք հնում ունեին խոշոր ռազմական նշանակություն, աշխարհակալ շատ պետությունների ուշադրությունն է գրավել իր վրա, դեռ շատ վաղուց։

Այս երկրին հին ժամանակներում տիրել են Բաբելոնի, Պարսկաստանի Աքեմենյան թագավորները և ապա նա անցավ Ալեք-

սանդր Մակեդոնացու ձեռքը և վերջապես միացավ Սելևկյան թագավորության հետ։ Մեր թվականությունից մի դար առաջ Կիլիկիայի ափերը ավազակների ու ծովահենների որջեր էին։ Այս ավազակները իրենց արարքով ահ ու սարսափ էին տարածել Միջերկրական ծովի ափերում բնակվող ժողովուրդների վրա. Պոմպեոսը հազիվ կարողացավ այդ ծովահեններին ու ավազակներին ընաջինջ անել, որով և Կիլիկիան դարձավ Հռոմեական պետության մի նահանգ։

Հռոմեական կայսրությունը բաժանվելուց հետո Կիլիկիան բաժին ընկավ արևելյան ինքնակալության և այնուհետև էլ հույները տեր դարձան այս նշանավոր երկրին։ Հայերը դեռ շատ վաղուց արդեն ծանոթ էին Կիլիկիային։ Առևտրական հարաբերությունների և Տիգրան Բ-ի հաղթական արշավանքների հետևանքով հայերը հետզհետե տարածվեցին և բնակություն հաստատեցին այս երկրում։ Ապա Արշակունյաց թագավորության անկումից հետո՝ մարզպանների և ոստիկանների ժամանակ, ինչպես և Բագրատունյաց փոթորկալի թագավորության տարիներին հայերը շտանելով օտար բռնակալների լուծը, հազարներով գաղթել և բնակություն են հաստատել այստեղ։

Տավրոսի մի ընդարձակ ճյուղի՝ Ամանոսի փեշերին ԺԱ դարում հայերը այնքան էին բազմացել, որ բնակչության մեծամասնությունն էին կազմում և Ամանոսի Սև լեռները կոչվում էին Գյավուր դաղ, որը նշանակում է «Անհավատների լեռ» կամ «Հայկական լեռ»։

Հույները վարում էին հայերին բնիկ երկրից գաղթեցնելու քաղաքականություն։ Այդ հաստատելու համար դիմենք այդ շրջանի մեր պատմագիրների տված փաստերին։

Հունաց Վասիլ Բ կայսրը, երբ գտնվում էր Կիլիկիայում, լսեց Դավիթ Կյուրապաղատի մահը, շտապեց գնալ Հայաստան և ապա Վրաստան։ Նա հայկական և վրացական Բագրատունիներից պահանջում էր հպատակվել հույներին, ճանաչել նրանց գերիշխանությունը։ Ապա նա դրավում է Տայքը. Կյուրապաղատին պատկանող բոլոր հողերը, իր իշխանությանը ենթարկելով նրա բոլոր ամրոցները, Տայքի ազատներին ու իշխաններին գաղթեցնում, տանում է իր հետ հունական հողերում բնակեցնելու համար։

«Իսկ թագաւորն Վասիլ,— գրում է Ասողիկը,— չու արարեալ գնաց ի քաղաքն Ուխտաց, և զամենայն բերդս և զամրոցս Տայոց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, զհաւատարիմս կարգեալ ի նոսա և զմնացեալ ազատսն Տայոց առեալ տարաւ ընդ ինքեան՝ բնակեցուցանել յաշխարհին Յունաց»[1]։

1018 թվականին բուլղարական թագավորությունը խորտակելուց հետո Բյուզանդիան ավելի է ուժեղացնում իր նվաճողական քաղաքականությունը Արևելքում։ 1021 թվականին, ինքը Վասիլ Բ-ը բյուզանդական զորքի գլուխ անցած՝ նորից երևում է Վրաց, Անիի և Վասպուրականի սահմաններում։ Բավական չէ, որ կողոպտել ու ավերել էր վերոգրած քաղաքները, հրամայում է ոչնչացնել և կոտորել նույնիսկ ծառատունկերը։ Այդ մասին Արիստակես Լաստիվերցին ասում է. «Եւ թագաւորին Վասլի առեալ զպատանդսն՝ և խոստանայ զկնի երից ամաց դարձուցանել, և ինքն խաղացեալ զօրօքն պատի զՀայովք, և իջանէ բանակի յընդարձակ դաշտն Հերայ հեծելովք, և հրամայէ զօրացն կոտորել զծառատունկս քաղաքին»[2]։

ԺԱ դարի սկզբի տասնամյակներում հույների գլխավոր նպատակն էր նվաճել Հայաստանը և Վրաստանը։ Սկսվեց կռիվը։ Գևորգի Բ-ի զորքերը հաղթվեցին. բյուզանդացիները գրավեցին Տայքը։ Բայց դա քիչ էր. նրանք ուզում էին նվաճել նաև Անիի, Կարսի և Վասպուրականի թագավորությունները։

Վասիլ Բ-ի Վրաստան կատարած արշավանքից մի տարի հետո՝ 1022 թվականին, Վասպուրականի Սենեքերիմ թագավորը հարկադրված իր կալվածները հանձնում է բյուզանդացիներին և իր հպատակներից շատերի հետ տեղափոխվում է Սեբաստիա։ Սենեքերիմի հետ Վասպուրականից գաղթող 14000 հայերի տեղափոխվելու մասին Թովմա Արծրունին ցավով պատմում է. «...և փոխեցին զՀայրենի տունսն իւրեանց հայկազունքն Արծրունիքն Սենեքերիմ ի թուին հայկազնեան ՆՀ (470) և զէմ եղեալ գնացին յաշխարհն Յունաց ԺԴՌ (14000) արամբք, թող զկանայս և զմանկտի. և արկան ընդ լծով ծառայութեանն Հոռոմոց. նոյնպէս և Բագրատունին Գագիկ որդի Յովհաննիսի արքայի և նա ևս փոխեալ զՀայրենիսն իւր ի նոյն թուականութեանն ՆՁ (406) ի յոգաւ ի Հոռոմս. և նոքա տիրեցին աւանդեան զաւառին Հայոց. մեծ աւանին Վանի և զաւառին Վասպուրականի և բազաւորանիստ Բաղամին Անւոյ և աշխարհին Հայոց»[3]։

1 Ասողիկ, «Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885 թ., էջ 278։

2 Արիստակէս Լաստիվերցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 26։

3 Թովմա Արծրունի, «Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887 թ., էջ 308։ (Ընդգծումները մերն են— Գ. Ն.)։

Հունական այս քաղաքականության հետևանքով Հայաստանի ամենամեծ և ամենամարդաշատ երկրի՝ Վասպուրականի ազգաբնակչության 1/3-ը գաղթում է բնիկ երկրից։ Հ. Մ. Ջամչյանը Վասպուրականից Սեբաստիա գաղթած հայերի թիվը համարում է 400 000[4]։

Սամվել Անեցին վկայում է, որ այդ ժամանակ Վասպուրականը ունեցել է հազարավոր գյուղեր, վաճառաշահ քաղաքներ, 70-ից ավելի ամրոցներ, բերդեր ու բազմաթիվ վանքեր։

«Վասն որոյ յետ ամի նեղութեան՝ ետ զաշխարհն իւր ի Վասիլ թագաւորն ի ՆՀ (470) թվին, Եւ էառ փոխան զՍեբաստիա իւր գաւառաւքն։ Բայց զվանորայսն ոչ ետ Սենեքերիմ ի Վասիլ. զի կայցեն ազատս, և աղօթս արասցեն Սենեքերիմայ և որդւոյն նորա. և էին ՃԺԵ (115) վանք և տաճար թՃ (900) վանք ասեն, իսկ երկիրն զոր էառ Վասիլն՝ էին ՀԲ (72) բերդս և ԴՌ (4000) գիւղս, Ը (8) քաղաք»[5]։

Բյուզանդիան գրավեց Վասպուրականը, Անին և հայկական ուրիշ շատ շրջաններ ու բերդեր։ Իր գրաված նահանգներում նա ստեղծում էր քաղաքական ծանր պայմաններ, կրոնական հալածանք և դրանով ուզում էր ճնշել ու խեղդել երկրի անկախության և ինքնասիրության համար մղված պայքարի ամեն մի փորձ։

Մատթեոս Ուռհայեցին Բյուզանդիային դատապարտում է նրա համար, որ նա երկրի քաջ և կենսունակ ուժերը գաղթեցնում է հունական մասերում, զրկում է երկիրը պաշտպանվելու հնարավորությունից, դրաված շրջանների սահմանները անպաշտպան են, հույները ոչ իրենք են այդ սահմանները պաշտպանում և ոչ էլ հայերին են հնարավորություն տալիս պաշտպանելու և դրանով Հայաստանի դռները բաց են անում սպառնացող թշնամու առաջ։

«Ո՞վ կարասցէ մի ըստ միոջէ պատմել զկորուստ բարկութեանն և զլաց ապաշաւանաց տանս Հայոց, զոր յանօրէն և յարենարրու գաղանացն զօրացն Թուրքաց կրեաց յանտիրութենէ ի սուտ պահապանացն ի տկար և ի թուլամորթ վատ ազգին Յունաց. վասն զի մի առ մի քակեալ հանին զքաջ զորականսն ի տանէն Հայոց, զորս հանին հարկաց և ի գաւառաց և բարձեալ խափանեցին զաթոռ բազաւորութեանն Հայոց. քակեցին զցանկ պանպանութեանն զօրաց և զօրավարաց... եմանեցան վատ ճովուացն, որ յորժամ զգայլն տեսանէ՝ փախչի...»[6]։

Եվ ահա այս բոլորի հետևանքն այն է լինում, որ սելջուկները անարգել մտնում են բյուզանդական տիրապետության տակ գտնվող երկրները, կոտորում, ավերում ու վերածում անապատի։

Այս կոտորածն ու ավերը ողբում է պատմագիրը և ասում, որ սելջուկների արշավանքների ժամանակ անօգնական երկիրը ոտնակոխ եղավ, անտեր ժողովուրդը ցրվում է աշխարհի բոլոր ճամբերի վրա՝ մերկ ու անարգված. «...Եւ այժմ անկեալ կայ ի կիրս ամենայն ճանապարհացն մերկ և խայտառակեալ, և կոխեն զնա նախատանօք անցաւորք ճանապարհաց. ելեալ ի տանէ, օտարացեալ ի ծանօթից, հեռացեալ յընտանեաց և ի բարեկամաց և ազգականաց, դերի և կալանաւոր ամենայն ազգաց»[7]։

Երկրի անապահովության, անտերության ու անպաշտպանության պատճառով 1073 թվականին Գանձակի շրջանից ինչպես և ուրիշ շատերը, Օշին իշխանն էլ թողնում է իր հայրենիքը և իր զինվորական ու մտիկ մարդկանց հետ քոչում, գնում է Կիլիկիա և բնակություն հաստատում Լամբրոն բերդում[8]։

Բուն Հայաստանի տարբեր գավառներից դաղթեցին ու բնակություն հաստատեցին Կիլիկիայում մի շարք ազդեցիկ իշխաններ ու տոհմեր, ինչպես վերևում հիշված Օշին իշխանը, Քեսունի իշխան Վասիլը, որը պատմության մեջ հայտնի է Գող մականունով, Ներսես Շնորհալու հայրը՝ Ապիրատ իշխանը և շատ ուրիշներ։

Այսպիսով ԺԱ դարի 70-ական թվականներին Կիլիկիայում հայ տարրը կազմում էր ազգաբնակչության գերակշռող մասը, որը բնականորեն ցանկանում էր հիմնել իր ազգային իշխանությունը։ Տարիների ընթացքում նախապատրաստվեց ազգային պետականություն ստեղծելու գաղափարը և ահա 1080 թվականին Կիլիկիայում, Բարձրբերդի շրջանի Գոռոմոզոլ գյուղում, Ռուբեն հայ իշխանի ձեռքով հիմք դրվեց հայկական Ռուբինյան իշխանությանը[9]։

Ռուբենն իր իշխանության 15 տարիների ընթացքում կարողացավ շրջակա տարբեր հայ իշխաններին համախմբել իր շուրջը,

4 Հ. Մ. Ջամչյան, «Պատմութիւն հայոց», Բ հատ., Վենետիկ, 1786 թ., էջ 903։

5 «Սամուէլի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893 թ., էջ 104։

6 Մատթէոս Ուռհայեցի, «ժամանակագրութիւն», էջ 135։

7 Արիստակէս Լաստիվերցի, «Պատմութիւն Հայոց», էջ 69—70։

8 Սամուէլի Անեցւոյ հաւաքմունք...», էջ 117։

9 «Հայ ժողովրդի պատմություն», Ա մաս, Երևան, 1951 թ., էջ 208։

միացնել իրար հետ և ենթարկել իր գերիշխանությանը։

Ռուբենի հիմնած իշխանությունը նրանից հետո ուժեղացրեց ու ամրապնդեց նրա որդին՝ Կոստանդինը։ 1095—1096 թվականներին Կոստանդինն ևս իր հերթին համախմբեց հայ իշխաններին և նրանց ղեկավարած ուժերը, անձամբ գլխավորեց հայոց զորքը, նվաճեց ամբողջ լեռնային Կիլիկիան, դուրս քշեց այնտեղից բյուզանդացիներին և իր իշխանության կենտրոնավայր ընտրեց նշանավոր Վահկա բերդը։

Լևոն Ա-ի տիրապետության շրջանում հայերը կարողացան բյուզանդացիներից վերցնել Կիլիկիայի արգավանդ դաշտը՝ Ադանա և Մամեստիա քաղաքներով։ Հասկանալի էր, որ հայերի ստեղծած ինքնուրույն, անկախ իշխանությունը Բյուզանդիայի համար ոչ միայն ցանկալի չէր, այլև նա ուզում էր ոչնչացնել այն և վերանվաճել Կիլիկիան։

Հայ-բյուզանդական պատերազմները շարունակվեցին մինչև ԺԲ դարի վերջին տասնամյակները և հայերի համար պսակվեցին հաջողությամբ։

1190-ական թվականներին Լևոն Բ-ին հաջողվեց խաչակիրներին դուրս քշել դաշտային Կիլիկիայից և իր իշխանությունն հաստատել ամբողջ Կիլիկիայում,

Այսպիսով Կիլիկիայի հայ հոծ ազգաբնակչությունը, իշխանության սահմանների ընդարձակումը, այդ իշխանության քաղաքական հեղինակության ուժեղացումը Արևելքում և տնտեսության բարգավաճումը՝ պայմաններ ու հող ստեղծեցին Կիլիկիայում հայկական թագավորություն հիմնելու համար։ 1198 թվականին Կիլիկիայի Տարսոն քաղաքում Լևոն Բ-ը հռչակվեց հայոց թագավոր ու կատարվեց նրա հանդիսավոր թագադրումը։

Իր նորաստեղծ պետության ինքնուրույնությունը անվտանգ դարձնելու համար Լևոն Բ-ը ստիպված էր պատերազմների միջոցով մտնել մերձակա թշնամի իշխանությունների հետ, որոնք այսպես թե այնպես սպառնում էին հայկական թագավորության անվտանգության գործին։ Բացի այդ՝ պետական սահմանները ապահովելու համար Լևոնը ձգտում էր իր իշխանությանը միացնել Անտիոքը։ Իր թագադրումից 3 տարի անց, 1201 թվականին նա սկսեց Անտիոքի համար մղվող կռիվները, որոնք տևեցին շուրջ 15 տարի և վերջացան Կիլիկիայի հաղթանակով։ Այնուհետև սկսվեցին դարձյալ երկարատև կռիվներ Լեոնի և Իկոնիայի սելջուկների միջև։

Երկրի աշխարհագրական դիրքը, ժամանակի քաղաքական ու ռազմական պայմանները հարկադրում էին Կիլիկիայի հայկական իշխանության՝ մի քանի ճակատներում ինքնապաշտպանության կռիվներ մղելու թշնամի նվաճողների դեմ։ Այդ կռիվներում, ինչպես վկայում են թե՛ հայկական և թե՛ օտարազգի պատմիչներն ու աղբյուրները, հայերը միշտ էլ հերոսաբար են կռվել՝ պաշտպանվելու և իրենց իշխանության սահմանները պահպանելու համար։

Գ. Գ. Միքայելյանը իր «Կիլիկիայի հայկական պետության պատմություն» ռուսերեն արժեքավոր գրքում այդ մասին գրում է՝ «Հայ, հույն, լատին և արաբ գրողների գրվածքներից երևում է, որ ԺԲ դարում Կիլիկիայի հայերը քաջաբար պայքարում էին իրենց նորաստեղծ պետության անկախության համար»[10]։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ Բյուզանդիան ԺԱ դարի սկզբից վարում էր հայերին բնիկ երկրից դաղթեցնելու, ազգային ու պետական ուժերը չլատելու քաղաքականություն։ Սակայն ի վերջո Բյուզանդիան համոզվեց, որ ռազմականապես անզոր է նվաճելու Կիլիկիան, որ հայերը անձնուրաց կերպով պաշտպանում են իրենց իշխանությունը, ուստի նա փոխեց Կիլիկիան իրեն ենթարկելու իր նախկին քաղաքականությունն ու գործելակերպը։

Այս անգամ Բյուզանդիան դիմեց ավելի նուրբ, բայց բավականին հին մեթոդի, այն է՝ Բյուզանդիայի եկեղեցու վարդապետության միջոցով նվաճել Հայ եկեղեցին և եկեղեցու միջոցով էլ տարածել իր հաղթականությունը։ Եվ ահա այդ նպատակով նա նորից առաջ քաշեց հին դավանաբանական հարցերը՝ Քաղկեդոնի ժողովի որոշումները Հայոց եկեղեցու վրա տարածելու՝ եկեղեցիների միացման խնդրի անվան տակ։ Ի դեպ, մեր միջնադարի պատմության բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ երբ օտար նվաճողներին չէր հաջողվում ուղղակի ռազմական ուժով իրենց ենթարկել Հայաստանը, փորձում էին դիմել գաղափարախոսությամբ նվաճելու մեթոդներին, որը գլխավորապես արտահայտվում էր կրոնի կամ եկեղեցու միջոցով։

Հայտնի է, որ Ե դարում պարսիկները զրադաշտական կրոնի միջոցով էին ուզում իրենց ենթարկել Հայաստանը, վերացնել ազգային կրոնը, լեզուն ու ազգը։ Սակայն հայ ժողովուրդն էլ իր հերթին, իր անկախությունն ու հոգեկան մշակույթը պահպանելու համար, սկսեց թշնամուն դիմադրել իր կրոնով՝ եկեղեցու միջոցով։ Այս տեսանկյունով

[10] Գ. Գ. Միքայելյան, «Կիլիկիայի հայկական պետության պատմություն», Երևան, 1952 թ., էջ 134 (ռուսերեն)։

պետք է բացատրել Ե դարի մեր գրականության ու մշակույթի զարգացումը։ Է դարում արաբների նվաճողական քաղաքականությունը պարզապես արտահայտվում էր նաև իսլամի միջոցով։ Քիչ չէին բռնի հավատափոխության փաստերը և կրոնական-հալածանքները նաև այս շրջանում։ Հայերը իսլամին պատասխանում էին նույնպես կրոնով, Հայ Եկեղեցիով ու հոգու զենքերով՝ իրենց ազգային ու հոգեկան մշակույթը խորթ գաղափարախոսությունից պաշտպանելու համար։ Այս տեսանկյունով էլ պետք է բացատրել է դարի մեր գրականության, արվեստի տարբեր ճյուղերի, գիտության ու մշակույթի զարգացումը։

Ահա այս քաղաքական հանգամանքներով, վերածնության երևույթների ուժեղացումով պետք է բացատրել Ե դարի մեր գրականության, արվեստի ու գիտության զարգացումը։

Կիլիկիայի հայկական իշխանության, նրա գրականության, արվեստի, գիտության, մի խոսքով Կիլիկիայի հայ ժողովրդի պատմությունը անբաժանելի մասն է կազմում բուն Հայաստանի, ամբողջ հայ ժողովրդի պատմության։

Սակայն այդ ամբողջական պատմության մեջ չի կարելի աչքաթող անել Կիլիկիայի հայկական իշխանության, այնտեղի արվեստի ու գրականության առանձնահատուկ պայմաններն ու մոմենտները, որոնք իրենց կնիքն են դրել այդ պատմության ու նրա հետ կապված երևույթների վրա։

Եկեղեցիների միության խնդրի նեռում թաքնված էր բյուզանդական գերիշխանության գաղափարը։ Սկսած Ե դարից շատ անգամ է այդ հարցը բարձրացվել Բյուզանդական ու Հռոմեական պետությունների կողմից, բայց հայերը միշտ էլ կարողացել են տեսնել, որ այդ միության հարցը միայն կրոնական-դավանաբանական հարց չէ, այլ ըստ էության քաղաքական աշխարհակալական մի քողարկված հարց է, որը բխում է օտար նվաճողների շահերից։ Հայերին մնում էր, որ բոլոր տեսակի խորթ, դրսից եկող գաղափարներին պատասխանեին իրենց հոգևոր մշակույթով, գրականությամբ ու արվեստով, դավանաբանական հին ուղղափառությամբ, եռմությամբ ու Հայ Եկեղեցիով։

Ահա այս պայմաններում էր, որ ԺԲ դարում մեր ընդհանուր ազգային գրականության հետ զուգընթաց զարգանում է նաև մեր հոգևոր երգը թե՛ Արևելյան Հայաստանում և թե՛ Կիլիկիայում։ Մեր հոգևոր Երգը իր զարգացման գագաթնակետին է հասնում ԺԲ դարում Կիլիկիայում Ներսես Շնորհալու օրով։ Մեր հոգևոր երգերի՝ շարականների «հեղինակների մեջ Շնորհալին հանդիսանում է ամենաբարձր գագաթը, որը ծընվել, ապրել ու ստեղծագործել է մեր նկարագրած շրջանում։

Այժմ համառոտակի և ընդհանուր գծերով ծանոթանանք Ներսես Շնորհալու կյանքին։

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Մագիստրոսի դստեր Ապիրատ որդու տղան էր Ներսես Շնորհալին և Գրիգոր Վկայասերի քրոջ թոռը։ Շնորհալու հայրը՝ Ապիրատը, ինչպես և շատ հայ իշխաններ ԺԱ դարում բուն Հայաստանից գաղթել էր Կիլիկիա և Մարաշի կողմերում բնակություն հաստատել Ծովք կոչված ամուր բերդում։ Ահա այս Ծովքի գղյակում ծնվեց Ներսեսը 1102 թվականին։

Շատ փոքր հասակում Ներսեսը և իր մեծ եղբայրը՝ Գրիգորը Ծովք բերդից փոխադրվում են իրենց մորեղբայրական պապի՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մոտ, որն իր Աթոռն հաստատել էր Շուղր անապատի Կարմիր վանքը՝ Գող Վասիլի իշխանության սահմաններում, Ներսեսը դեռ 10 տարեկան էլ չկար, երբ 1110 թվականին Ծովք բերդի պաշտպանության համար մղվող կռվում նրա հայրը՝ Ապիրատը նետահար սպանվեց։ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մահից հետո այս երկու եղբայրների խնամքի և դաստիարակության գործը հանձնված էր Վկայասերին հաջորդող Բարսեղ Անեցի կաթողիկոսին։ Շատ չանցած վախճանվում է նաև Բարսեղ կաթողիկոսը։ 1113 թվականին հիշված Կարմիր վանքում, 18 տարեկան հասակում կաթողիկոս է ընտրվում Շնորհալու մեծ եղբայրը՝ Գրիգորը։ Այդ ժամանակներում Կարմիր վանքի վանական դպրոցը շատ նշանավոր էր և այդ դպրոցում մեծ հռչակ էր ստացել հայտնի գիտնական Ստեփանոս վարդապետը։ Տավրոսի Սև լեռների Կարմիր վանքում, Ստեփանոս գիտնական վարդապետի ձեռքի տակ Ներսեսը լավ կրթություն է ստանում, շատ լավ ծանոթանում է հայ, հույն և ասորի եկեղեցական նշանավոր հայրերի գրվածքներին։ Նա ցույց է տալիս սովորելու և քերթողական արվեստի մեջ արտակարգ շնորհք, որի համար էր արժանապես Շնորհալի է անվանվել։ Ի դեպ, պետք է հիշել, որ ինչպես արևելյան վանքերում ընդունված էին տիմաստասերաց, աքերթողաց մականունները, այնպես

Էլ Սև լեռների վանքերում՝ «շնորհալի» մականունը։

Ներսես Շնորհալու գիտության ու համբավի մասին Կիրակոս Գանձակեցին պատմում է. «Այս Ներսէս առաւելեալ էր իմաստութեամբ քան զյոլովս ի ժամանակի անդ ոչ միայն քան զվարդապետս Հայոց, այլ և քան զՅունաց և զԱսորոց. այնքան՝ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն ազգս...»[11]։

Շնորհալին 16 տարեկան հասակում կուսակրոն քահանա է ձեռնադրվում և ընդմիշտ կապվում իր եղբոր՝ Կաթողիկոսարանի գործունեության հետ, դառնում է կաթողիկոսի գործակիցն ու օգնականը և մեծ հեղինակություն է վայելում որպես ականավոր եկեղեցական գործիչ, մատենագիր, բարեկարգիչ ու բանաստեղծ։

Գրիգոր Պահլավունու կաթողիկոս ընտրվելուց երեք տարի հետո, երբ արդեն մահացել էր Քեսունի իշխանը՝ Գող Վասիլը, Ուռհայի կոմսը գրավում է նրա կալվածները և տիրում Քեսունի իշխանությանը։ 1116 թվականին Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը ստիպված Աթոռը տեղափոխում է իր ծննդավայրը՝ Մովք։

Մանր էր Կիլիկիայի հայկական իշխանության դրությունը։ Ինչպես հիշվել է՝ մի կողմից խաչակիրները հայերի ձեռքից վերցնում էին նրանց բերդերն ու հողերը, մյուս կողմից էլ սելջուկներն էին ներխուժում, գրավում ու ավերում հայկական բնակավայրերն ու բերդերը։ Փոքր Ասիայի կողմերից էլ Իկոնիայի սելջուկների սուլթանությունն էր ուզում տիրանալ հայկական բերդերին և վերջապես չորրորդ կողմից էլ Եդեսիայի իշխանությունն էր ներխուժում Ասորիք։

«Այստեղ շարունակ տեղի էին ունենում ընդհարումներ,— գրում է Մ. Արեղյանը,— բերդերի և երկրամասերի հափշտակություններ ու խառնակություններ։ Մովք փոքրիկ բերդն ևս անապահով էր։ Ուստի կաթողիկոսը մի լատին իշխողից գնում է Հռոմկլա կոչված բերդը, որն ավելի ամուր էր (Եփրատի աջ ափին, Թլպաշարի հարավ արևելյան կողմում, Այնթաբեր գեպի հյուսիս-արևելք, Եդեսիայից արևմուտք[12]։

Մի տարի հետո գրված իր «Բան հաւատոյ» դավանաբանական նշանավոր գործի հիշատակարանում Կաթողիկոսական Աթոռի աստանդական դրության, դառն ու դժնյա ժամանակի մասին և այն մասին, թե ինչպես նեղվում են արտաքին չար, գազան թշնամիներից ու դրանցից ոչ պակաս վտանգավոր սուտանուն, խարեբա քրիստոնյաներից այսինքն խաչակիրներից, Շնորհալին գրում է.

«Արդ յայսպիսում ժամանակի
Դառն և դժնեայ և անբարի,
Յորում բնակեմք յայսմ ամրոցի
Ի գետապատ քարանձաւի,
Ի յԵփրատայ պարագրելի,
Որ յԱդենայ քառորդ հոսի,
Յելից կուսէ հեզկիկ շարժի,
Ի միւս փոքրէ մբտիւք պատի...
Ինքս ամբարձեալ իբր ըզկըղզի,
Յալեաց ծովուց ոչ երկնչի.
Ի բարկութեան ժամանակի
Զի է հնարից անյադթելի,
Զոր տնօրէն ամենայնի
Տեղ պատրաստեաց ապաւինի
Սուրբ Աթոռոյս ըսքանչելի.
Ի բարկութեան ժամանակի
Յորում նեղիմք յաճօրինաց
Ի յարտամին չար գազանաց
Եւ ոչ նուազ ի դրժանաց,
Ի սուտանուն Քրիստոնէաց[13]։

Այս Հռոմկլա լեռդում էլ հաստատվում է Կաթողիկոսարանը, որի բնական նկարագիրը, դիրքն ու անմատույց դրությունը վերևում մեջ բերվեց։ Ներսես Շնորհալին 1166 թվականին, դեռ իր կաթողիկոս եղբոր կենդանության ժամանակ, նրա ծերության պատճառով ընտրվում է կաթողիկոս։ Մի քանի ամսից հետո վախճանվում է Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը, եղբորից հետո Ներսես Շնորհալին կաթողիկոսություն է անում միայն 7 տարի, բայց այդ տարիները բեղմնավոր գործունեությամբ ու եռանդով լեցուն նշանակալից տարիներ են Հայ Եկեղեցու պատմության մեջ։ Կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո Շնորհալին գրեց իր հանրահայտ «Ընդհանրական թուղթ»-ը, ուղղված հայ ժողովրդի բոլոր դասերին, խավերին ու կրոնավորներին։

Այս թղթում Շնորհալին նախ դնում ու բացատրում է հավատի մի շարք դավանաբանական հարցեր, խոսում է կրոնավորների մասին, թե ինչպես պետք է նրանք լինեն և խարազանում է ժամանակի կրոնավորների արատավոր, անվայել բարքերը։ Մի խոսքով՝ այս թղթում խոսվում է կրոնավորների, վանահայրերի, ժողովրդի տարբեր խավերի և կանանց մասին։ Այս գործը

11 Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», էջ 109։

12 Մ. Արեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրք Բ, էջ 78։

13 Ն. Շնորհալու «Բանք չափաւ», Վենետիկ, 1820 թ., էջ 229 և շար.։ (Ընդգծումները մերն են—Գ. Հ.)։

միաժամանակ մի կարևոր փաստաթուղթ է, ուր շատ արժեքավոր ու հետաքրքիր տեղեկություններ կան ժամանակի բարքերի, նիստ ու կացի վերաբերյալ, թե վերածնության երևույթների ուժեղացման ու տարածման հետևանքով ինչպիսի բեկում է առաջացել ավատական հասարակաձևի տնտեսական, կենցաղային և հոգեկան կյանքում։

Ներսես Շնորհալին մինչև իր կյանքի վերջն ապրում է Հռոմկլայում և այդ պատճառով էլ մեր հին գրականության ու եկեղեցու պատմության մեջ նա կոչվում է նաև Ներսես Կլայեցի[14]։

Շնորհալին մեր միջնադարի ամենամեծ բանաստեղծներից է և խոշորագույն մատենագիր ու եկեղեցական գործիչ։ Նա իր թե՛ արձակ, և թե՛ չափածո գործերում կրոնական շնչով, բայց ըստ էության արտահայտել է իր ժամանակի ազգային քաղաքական տրամադրությունները, հայկական ավատական պետության և եկեղեցու գաղափարախոսությունը։ Միաժամանակ մեծ հայրենասեր է Շնորհալին ու լավատես, հայ ժողովրդի ապագա լավ օրվան հավատացող բանաստեղծ և հայրենասեր հոգևորական։ Նա պաշտպանել է Հայ Ազգային եկեղեցու ինքնանկախությունը, ազգային նկարագիրը, ուղղափառությունը, եկեղեցիների միության գաղափարը և իր բազմաբնավոր ու բազմաժանր գործերով Շնորհալին արտահայտել է նաև հայրենասիրական շերմ գաղափարներ։ Նրա բոլոր գործերում, այսպես թե այնպես, այս կամ այն չափով միշտ էլ գերիշխողը ազգային-կրոնական, եկեղեցական ու հայրենասիրական տրամադրություններն են եղել։ Նրա առաջին երախայրիքը՝ «Վիպասանութիւն»-ը, նաև «Եղեսիոյ ողբ»-ը, «Յիսուս Որդի»-ն, «Թուղթ ընդհանրական»-ը, «Քան հաւատոյ»-ն և պատմական ու դավանաբանական բնույթի այլ գործերը այդ են հաստատում։

Ներսես Շնորհալու ժամանակ ամենից ավելի հուզվող երևույթներից մեկը եկեղեցիների միության խնդիրն էր, որն արտաքուստ, թեև կրոնական-դավանաբանական հարց էր, բայց ըստ բովանդակության՝ քաղաքական նպատակների հետապնդող խնդիր։

Թե՛ Շնորհալուց առաջ և թե՛ մանավանդ Շնորհալու ժամանակ Բյուզանդիան իր տիրակալական գաղափարախոսությունը տարածելու համար հաճախ առաջ է քաշել այսպես կոչված Հայ և Հույն եկեղեցիների միության խնդիրը։ Միության այդ խնդիրը միշտ քաղաքական խնդիր է եղել։ Առաջնորդում և Կիլիկիայի հարկական իշխանության ժամանակ, եկեղեցական միության խնդրով ոչ այնքան բյուզանդական հոգևոր հայրերն էին զբաղվում, որքան կայսրերն ու նրանց աշխարհիկ ներկայացուցիչները։ Բյուզանդիան ամեն միջոցի դիմում էր Հայ և Հույն եկեղեցիների միության խնդիրը դյուրս բերելու համար, որպեսզի կարողանա Հայ եկեղեցու և ժողովրդի վրա իր գերիշխանությունը տարածել։

Ներսես Շնորհալու ժամանակ նորից է արծարծվում եկեղեցիների միության հարցը։

Այս խնդրի շուրջը Շնորհալին գրել է իր հռչակավոր «Գիր հաւատոյ» դավանաբանական գրվածքը, 1165 թվականին Մանվել կայսեր խնդրանքով, երբ հատուկ հանձնարարությամբ նրա փեսա Ալեքս իշխանն ուղարկել էր Կիլիկիայի Մամեստիա քաղաքը։ Շնորհալին դավանաբանական իր բոլոր գրվածքներում շերմորեն պաշտպանել է Հայ

---

[14] Կլայեցի բառը առաջ է եկել թաթարական «գալա», «կալա» բառից, որ նշանակում է բերդ։ Իսկ Հռոմկլա նշանակում է հույների կամ հռոմների բերդ։ Թուրք թաթարները, սելջուկները, թուրքերը մինչև օրս էլ հույներին, լատիններին անվանում են ռում, ուստի՝ Թուրքերի այժմյան լեզվի մեջ էլ «գալա» կամ «կալա» նշանակում է բերդ, ամրոց, ինչպես Հասանգալա (Հասանի բերդ), Բաշկալա (գլխավոր բերդ), Թոփրակկալա (հողաբերդ) և այլն։ Հռոմկլան նշանավոր բերդ է, շատ մեծ դեր է կատարել հայկական Կիլիկիայի պատմության մեջ։ «Հռոմկլայի գաղառակը ձգվում է Մարաշի և Անթաբի արևելքում, Եփրատ գետի երկու ափերի վրա ... Դղյակի դիրքն է մի ցից սարավանդի վրա՝ երեք կողմից շրջապատված լինելով Եփրատի հոսանքից և սրա հետ խառնվող Մերզմեն գետակից։ Մի ժայռափոր փոս, 60 ոտք լայնությամբ, բաժանում է դղյակը իր լեռնադաշտից։ Ժայռի ցցվածներն այն ձևով են տաշվել, որ աշտարակների և պարիսպների խարիսխ են կազմում։ Աշտարակները քառակուսի հերկար ձև ունեն։ Պարսպի պատի վրա անշրպետների մեջ ճեղքված շարվում էին որմածերպերը։ Դղյակի գլխավոր մուտքը, որ Մերզմեն գետակի հովտում էր, ներքև հայրդական դռներից էր առաջնորդվում։ Միջնաբերդի հարավ-արևելքում տեսնվում է կաթողիկոսական վանքի ավերակը, որի տեղ մզկիթ է շինվել այժմ... Դղյակի վերին մասում կան երկու եկեղեցիների հետքեր, առաջինը բյուզանդական ոճով երեք թև ուներ, իսկ երկրորդը հայկական լեռնադակերտ մի շինվածք էր... ճոխաքանդակ խոյակներով պսակված» («Կիլիկիա», 1894 թ., էջ 372—373)։

Հռոմկլան հայոց կաթողիկոսական Աթոռ է եղել 1150 թվականից մինչև 1295 թիվը, երբ եգիպտացիները վերցրին այն, ավերեցին, այրեցին և գերի տարան հայոց Ստեփանոս կաթողիկոսին Լուսավորչի Աջի հետ։

եկեղեցու դավանության ճշմարիտությունը, ուղղափառությունը, ազգային նկարագիրը և հմտորեն առարկել մտացածին մեղադրանքների դեմ։

Շնորհալին Կիլիկիայի Հայ իշխանությունն ու Հայ Եկեղեցին բուն Հայաստանից անջատ ու կտրված չի պատկերացրել։ Դեռ ավելին, եկեղեցական որևէ նոր ձեռնարկումների և բարեկարգումների ժամանակ միշտ էլ նախապատվությունը տվել է բուն Հայաստանին, հայ ժողովրդին ու նրա եկեղեցուն։

Այդպես վարվեց նա ժամակարգության եղանակները ընտրելիս, երբ հատուկ մարդիկ ուղարկեց բուն՝ այսինքն Արևելյան Հայաստան Մաքենյաց և Թեղինյաց վանքերի կանոններն ու ավանդությունները Կիլիկիայի հայ եկեղեցիներում փոխադրելու և ապագային ավանդները ամրապնդելու համար։ Այժմ էլ, երբ Բյուզանդիայի կայսրերի կողմից առաջ էր քաշվում եկեղեցական միության խնդիրը, Շնորհալին հաշվի էր առնում Մեծ Հայքի ժողովրդի՝ բուն Հայաստանի ժողովրդի, վանքերի կարծիքն ու դանկությունները։ Կիր Մանվելի թղթին պատասխանելիս, ուր խոսում է «Վասն ճշմարիտ դաւանութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» նյութի շուրջը, նա ոչ միայն ցույց է տալիս Հայ Ազգային Եկեղեցու ճշմարիտ դավանությունը, այլև հրաժարվում է քննելուց միության խնդիրը, քանի որ այդ խնդիրը քննելու և որոշելու համար միայն Կիլիկիայի Կաթողիկոսարանն ու հոգևորականները ի վիճակի և իրավազոր չէին։ Դրա համար անհրաժեշտ է ամբողջ Հայաստանի, Մեծ Հայքի կարծիքը։ Եվ քանի որ այդ կարծիքը չկա, ուստի հնարավոր էլ չէ որևէ պատասխան տալ միության վերաբերյալ։

«Բայց քանզի աթոռ թագաւորութեան մերոյ որով և քահանայապետականն իշխանութիւն յառաջանայ, թարձեալ է այժմ ի բռնակալութենէ այլազգեաց, նորին յաղագաւ և հայրապետութեանս հալածեալ ի հայրենին աշխարհէ և Աթոռոյ յօտար աշխարհ տարաբերի պանդխտութեամբ, յորոց պատճառէ ոչ ունիմք մերձ գոր ըստ ժամանակիս եպիսկոպոսունք են Հայաստանեայց և վարդապետք, և առանց խորհրդակցութեան նոցա անմարդ է գկատարեալն տալ պատասխանի ճարցմանց ձերոց, զի մի՛ փոխանակ միաբանութեան զանազան պատճառս տացուք բաժանմանց. և շարժուն և փոփոխական երևեսցին բանք մեր»։

«Յաղագս այսորիկ,—բացատրում է Շնորհալին,— ոչ պատշաճ համարեցաք միայն մերս մերձակցիք գրել պատասխանիլ մեծի խորհրդոյս, մինչև առաքեսցուք ի Միածն Հայի և ասեն՝այն կողմանս, և ժողովեսցուք զամենեսեան յարս իցէ զորութիւն իմաստութեան, և առաջի դիցուք նոցա զոր խնդրէս ի մէնջ զհաւատոյ և զկարգաց եկեղեցւոյ բան՝ և մեք յելադիր և յորդորիչ ի պատասխանս սիրոյն և խաղաղութեանն»[15]։

Եկեղեցիների միության գաղափարի շուրջ պաշտպաններից մեկն էր Շնորհալին, բայց նա պահանջում էր հույներից հարցը քննել ոչ որպես «Տէր ընդ ծառայի» հրամայելով, այլ «հաւասար ընդ հաւասարի» ճանաչելով վիճաբանությունների սեղանի շուրջ, ոչ թե բանի կամ իշխանության սաստով, այլ փոխադարձ հասկացողությամբ և դիջումներով։

Օտար ու նվաճողական գաղափարախոսությունների դեմ մղվող դավանաբանական պայքարի ընթացքում ԺԲ դարում ընդհանուր մշակույթի հետ զարգացավ նաև մեր հոգևոր երգը։ Շնորհալու ժամանակ առանձին մտահոգության առարկա էր դարձել եկեղեցու բարեկարգության և ուժեղացման գործը, որովհետև օտար գաղափարախոսությունների դեմ պայքարի ամենաուժեղ զենքերից մեկն էլ այն ժամանակ հանդիսանում էր Հայ եկեղեցին։ Ազգի ինքնուրույնության, նրա հոգևոր մշակույթի պաշտպանության հարցում մեծ դեր էր խաղում եկեղեցին։

Դավանաբանական բնույթի արձակը ԺԲ դարում ուժեղացավ և արտահայտվեց նամակների ու թղթերի ձևով, իսկ չափածոն՝ պխավորապես դրսևորվեց շարականների ձևով, որն իր զարգացման գագաթնակետին հասավ հանձին շարականների բացառիկ բեղմնավոր ու բարձր արվեստով հեղինակ Ն. Շնորհալու։

ԺԲ դարում գրված շարականների մի մասը դավանաբանական բնույթի գործեր են, բայց նրանց մեջ կան շատ արժեքավոր գործեր էլ, որոնք ունեն ազգային ու եկեղեցական բնույթ՝ հայրենասիրական մոտիվներով, գրված գեղեցիկ, բարձր արվեստով։

Այժմ փորձենք ծանոթանալ այն շարականներին, որոնք ըստ պատմական փաստերի ու հիշատակարանների վերագրվում են Ներսես Շնորհալուն։

15 «Թուղթ ընդհանրական», Ս. Էջմիածին, 1865 թ., էջ 200—201։

(Շարունակելի)

Ս. ԲԱՂԻՐՅԱՆ

ՀՈՒԹԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ*

Ճեմարանում, սովորաբար հանդեսները կազմակերպվում էին տոների կապակցությամբ։ Բացի Վարդանանց և Ճեմարանի հիմնադրության տարեդարձի տոներից, հանդեսներ կազմակերպվում էին նաև նոր տարվա առթիվ, Բարեկենդանին, Ս. Մեսրոպի տոնին և Կաթողիկոսի (Խրիմյան Հայրիկն էր այն ժամանակ) անվանակոչության առթիվ և այլն։ Հանդեսները սովորաբար բացվում էին «Տէ՛ր, կեցո՛ զու զհայսս մաղթերգով, խմբի կատարմամբ և Կոմիտասի դեկավարությամբ։ Հետո կատարվում էր զեկուցում որևէ դասատուի կողմից օրվան պատշաճ, ապա երգեր, արտասանություններ կամ ներկայացում, հետո խմբական պարեր և մենապարեր։ Մեծ տոները վերջանում էին նաև հանդիսավոր ճաշկերույթով վանքի մեծ սեղանատանը։ Երբեմն, հանդեսների կամ ճաշկերույթի ժամանակ, ներկաների խնդրանք, Կոմիտաս վարդապետը երգում էր որևէ երգ, որը լսվում էր մեծ ուշադրությամբ և գոհունակությամբ։

Այդ հանդեսներին, բացի Ճեմարանի վարչությունից և բարձրաստիճան հոգևորականներից, ներկա էին լինում նաև պատվավոր հյուրեր ուրիշ քաղաքներից և արտասահմանից։ Եթե պատահեր, որ Խրիմյան Հայրիկն էլ ներկա լիներ հանդիսավոր ճաշկերույթին, մեծ սեղանատանը, Կոմիտաս վարդապետն անպայման երգում էր «Հայաստան, երկիր դրախտավայրս»-ը, Հայրիկի սիրած երգը։ Հայրիկը սիրելագույն անձն էր, որին խորին ակնածությամբ ու անկեղծությամբ հարգում էր Կոմիտաս վարդապետը։

***

1903 թվականի աշնան սկիզբն էր։ Կովկասյան փոխարքա Գալիցինի հրամանով Երևանի նահանգապետը զորքերով շրջապատել էր Էջմիածնի Վեհարանը և պահանջում էր Խրիմյան Հայրիկից զանձարանի բանալիները և եկեղեցական կալվածների հանձնումը ցարական պետությանը։

Դեպքը հուզել էր ամբողջ հայությանը և Կովկասի քաղաքներից, մանավանդ Արարատյան դաշտի քաղաքներից և գյուղերից հազարավոր հայեր էին հավաքվել Էջմիածնում՝ իրենց բողոքը հայտնելու ցարին։

Խրիմյան Հայրիկը մերժում է հանձնել բանալիները և հրաժարվում ցարի հրամանը կատարելուց։ Կաթողիկոսի այդ անվեհերությունը հուզում է դուրսը ալեկոծվող բազմությանը, որը բացականչում է. «Կեցցե՛ Հայրիկը, կեցցե՛ մեծ հայրենասերը»։ Ի վերջո նահանգապետը հրամայում է ջարդել զանձարանի դուռը և պարունակությունը շտապով տեղափոխել Երևան։

Նահանգապետի հեռանալուց հետո Վեհարանից սկսեցին մեկ-մեկ դուրս գալ միաբանները և տխուր, գլխիկոր ցրվել դեպի իրենց բնակարանները։

Այդ օրը մենք, մի քանի ճեմարանականներ, նորաշեն Թանգարանի պատշգամբն էինք բարձրացել և դիտում էինք բոլորը, ինչ կատարվում էր վանքի բակում, Վեհարանի առաջ։ Տեսանք, թե ինչպես Կոմիտաս վարդապետն էլ դուրս եկավ Վեհարանից և գլխիկոր ու անսովոր քայլերով ուղղվեց դեպի իր բնակարանը։ Երևում էր, որ նա իր կյանքի թախծալից և հուզումնալից օրերից մեկն է ապրում։

* Տարունակված ամսագրի 1957 թվականի № է—Ը-ից։

Պատանի հասակից նրան որոնգրել, խնամել և մինչև տվյալ ասոիճանը խնամատար էր եղել Խրիմյան Հայրիկը։ Դրա համար էլ, բացի խորին երախտապարտությունից, Կոմիտաս վարդապետը վեհ ակնածությամբ սիրում և հարգում էր Ծերունի Կաթողիկոսին որպես հարազատի, ուստի, բնականորեն, Կաթողիկոսի այդ օրվա վիշտը խորապես հուզել էր նաև Կոմիտաս վարդապետի զգայուն հայրենասերի հոգին։

Մի քանի երգիչներ ցանկություն հայտնեցին գնալ Կոմիտաս վարդապետին այցելության։ Բայց խորհելով, որ այդ օրվա դեպքերը չափազանց վատ ազդած կլինեն նրա արամադրության վրա, հետաձգեցինք մեր այցը հետևյալ օրվան։

Հաջորդ օրը չորս հոգով՝ Խոսրով Ֆախչանյանը, Հակոբ Հարությունյանը, Սուրեն Տեր-Գրիգորյանը և ես գնացինք Կոմիտաս վարդապետի մոտ։ Նրը մտանք պարտեզ-բակը և սանդուղքներով բարձրացանք պատշգամբ, լսեցինք ներսից խոսակցության ձայներ։ Անժամանակ համարելով, ուզում էինք հետդառնալ, երբ լսեցինք Կոմիտաս վարդապետի ձայնը.

— Հր՛, դուռնայինե՛ր, էդ ո՞ւր եք փախչում։

— Վա՜յ, հայր սուրբը նկատեց,— քլքլացինք մենք և մնացինք շվարած սանդուղքների վրա։ Մինչ մենք մտածում էինք, թե ինչ անենք, Կոմիտաս վարդապետը պատուհանից մեզ կանչեց և ներս հրավիրեց։

Բարեբախտաբար ներսում օտար մարդիկ չէին, այլ մեր մեծ ընկերները՝ նորավարտ և Կոմիտաս վարդապետի սիրելի աշակերտ Սպիրիդոն Մելիքյանը, լսարանցիներ Վ. Տեր-Առաքելյանը, Արշավիր Տեր-Մկրտչյանը, բարձր դասարանցի Սիմոն Տեր-Մինասյանը և Միհրան Թերլեմեզյանը՝ առաջին լսարանից։ Բոլորն էլ սեղանի շուրջը նստած, միմի բաժակ թեյ առաջները դրած զրույց էին անում։

Մենք, որպես կրտսերներ, ամաչում էինք մասնակցել խոսակցության, միայն լսում էինք և կում-կում խմում մեր թեյը։

Խոսակցության նյութը այդ օրերի դեպքերն էին։ Այդ խոսակցությունից մինչև օրս էլ շեմ մոռացել Կոմիտաս վարդապետի հետևյալ խոսքերը.

«...Մեր երկիրը շատ զարմանքներ է տեսել։ Եղել են դարեր, երբ լռել են եկեղեցիներն ու դպրոցները, աշխարհական իշխանությունները, բայց հնչել են հայ շինականի աշխատանքի զլե-լեռ-ները, որոնց մեջ պահվել են մեր ժողովրդի կենսունակության տեմեռ սաղմերը...»։

Եվ պատահական չէ, որ Կոմիտաս վարդապետը եղավ այդ զլե-լեռ-ների հանճարեղ թարգմանիչն ու իմաստի մեկնաբանը։

Մի ժամի չափ մնալուց հետո մենք չորս հոգով ներողություն խնդրեցինք և դուրս եկանք։ Սանդուղքներից իջնելիս նկատեցինք, որ պարտեզի բազմապիսի ծաղիկները չունեին իրենց ամեն օրվա տեսքն ու թարմությունը. կարծես թե նրանք էլ էին մի վիշտ զգացել ու գլուխները կախել... Պատճառը պարզ էր. երեք-չորս օր էր ինչ ծաղիկները չէին ջրվել և խնամվել։ Մենք որոշեցինք առանց Կոմիտաս վարդապետից հարցնելու ջրել ամբողջ պարտեզը, մաքրել մարգերը, և այնպես հեռանալ, որ ինքը չիմանա։ Մեկը ցնցուղը վերցրեց, մյուսը՝ ավելը, երրորդը՝ ջուրը բաց արեց, չորրորդը՝ դեղնած, թոռոմած տերևները սկսեց հավաքել։ Հանկարծ, աշխատանքի լարված բոպեին, լսեցինք Կոմիտաս վարդապետի ձայնը.

— Ապրե՞ք, տղաներ, շա՜տ ապրեք. քանի օր է ես մոռացել եմ պարտեզը։

Պատուհանի առաջ կանգնած, մեր սիրելի ուսուցիչը շնորհակալական տոնով իրախուսում էր մեր աշխատանքը։

***

Էջմիածնից դեպի հյուսիս-արևելք, Ս. Հռիփսիմեի վանքից ոչ հեռու, կար մի մեծ վանքապատկան այգի։ Վանքապատկան այգիների մեջ ամենամեծ և լավ մշակված այգին էր այդ։ Ամեն տեսակի պտղատու ծառերից բացի, հսկայական տարածություն էին բռնում լավագույն տեսակի որթատունկերը։ Ղոի այգու խաղողներից էին պատրաստվում վանքի ընտիր գինիները։ Այդ տարիներին այդու մշակումը և խնամքը գտնվում էր հայտնի գյուղատնտես Կոստանդին Մելիք-Շահնազարյանի (դրական մականունը՝ Տմբլաչի Խաչան) հսկողության տակ։

Ամեն տարի, պտուղների ամենալավ ժամանակը, սովորություն կար ճեմարանցիներին տանելու Ղոի այգին զբոսանքի։

Մի օր էլ, Կոմիտաս վարդապետի պլանավորությամբ, միայն երգչիկ խմբի անդամներս գնացինք Ղոի այգին։ Որոշված էր ամբողջ օրը, մինչև արևամուտը, անցկացնել այգում. դրա համար էլ կարգադրված էր Երգիչների ճաշը տեղափոխել այգին։

Ճեմարանում արեցինք նախաճաշը և առավոտյան ժամը 10-ին, խմբովին, Կոմիտաս վարդապետի հետ միասին, ոտքով գնացինք Դոի այգին։

Խաղողի, դեղձի, տանձի և խնձորի ամենայավ ժամանակն էր։ Այգու գյուղատնտեսի կարգադրությամբ մեզ հյուրասիրեցին ամենաընտիր պտուղներով սեղան բաց անելով հինավուրց հոյակապ բարդիների ստվերի տակ։

Պտուղները անուշ անելուց հետո, մի կես ժամ զրոսանք կատարեցինք այգում Տմբլաշի Խաչանի առաջնորդությամբ, որը հումորով և կատակաբանությամբ բացատրում էր խաղողի տեսակները, պատմում նրանց մշակման մասին։

Պտուղից հետո կրկին հավաքվեցինք բարդիների տակ և կանաչ խոտերի վրա քիչ հանգստանալուց հետո, Կոմիտաս վարդապետի հավանությամբ սկսեցինք խաղերն ու երգ ու պարը։

Ճեմարանում, ընդհանրապես, ուրեմն և երգեցիկ խմբի մեջ, կային տղաներ զանազան հեռավոր ու մոտավոր գավառներից— Կոտայքից, Շիրակից, Ապարանից, Արարատյան դաշտից, Ղարաբաղից, Զանգեզուրից, Արևմտյան Հայաստանից և այլ վայրերից։ Կոմիտաս վարդապետի առաջարկությամբ մեզանից յուրաքանչյուրը երգեց իր ծննդավայրի երգերից մի որևէ երգ, առանց փոխելու բարբառը և ժանրը, լինի հարսանեկան, աշխատանքի, տխրության, ուրախության կամ այլ բնույթի։ Շատերը քաշվում էին մի-ներդելուց և Կոմիտաս վարդապետը չստիպեց նրանց, իսկ մոտ 25—30 հոգի երգեցին իրենց միջավայրի երգերից, ոմանք էլ արտասանեցին երգիծական ոտանավորներ իրենց բարբառով։ Բոլոր ելույթները լսում էինք լուրջ ուշադրությամբ, իսկ Կոմիտաս վարդապետը լսում և մատիտով ծոցատետրի մեջ արագորեն հայկական ձայնանիշներով նշումներ էր անում։ Ես իմ հերթին երգեցի Զանգեզուրի Խնձորեսկ գյուղի, իմ ծննդավայրի հոռովելը՝ գութաներգը, որը լսել էի մեր գյուղի դաշտերում վար ու ցանքի ժամանակ։ Կոմիտաս վարդապետին ո՛ր երգը որ դուր էր գալիս, այն կրկնել էր տալիս և անմիջապես ձայնագրում։ Իմ երգածն էլ կրկնել տվեց և ձայնագրեց։

Մենք երգներից հետո սկսեցինք ժողովրդական կլոր պարերը երգելով, և ապա շարժական խաղերը։

Այս բոլորի ժամանակ Կոմիտաս վարդապետը բարձր տրամադրությամբ մեկին խրախուսում, մյուսին կատակով պախարակում, երրորդին մեղմ կշտամբում էր և առհասարակ մասնակցում մեր ուրախ ժամանցին։

Երբ մեր բոլորի տրամադրությունը բարձրացավ համարձակության աստիճանին, շրջապատեցինք մեր սիրելի ղեկավարին և համառորեն խնդրեցինք, որ մի բան էլ ինքը երգի մեզ համար։

— «Մոկաց Միրզեն»,— ձայնեցին մի քանի հոգի։

— «Միրանի ծառ»-ը,—կոչեցին ուրիշները։

— Հայր սո՛ւրբ, որը Դուք կկամենաք,— ասաց մեծամասնությունը։

Հենց այդ րոպեին Ճեմարանի տնտես Մեսրոպ Արովյանը, որը մեզ հետ եկել էր, հայտարարեց, որ ճաշի սեղանը պատրաստ է։

— Ո՛չ, ո՛չ, չենք ուզում։ Մինչև հայր Կոմիտասը չերգի, մենք ճաշի չենք նստելու,— բացականչեցինք բոլորս։

Կոմիտաս վարդապետը տեսնելով, որ մենք համառ կերպով խնդրում ենք, սկսեց երգել «Հով արեք, սարեր ջան, հով արեքս»-ը։ Նրա հարուստ ձայնի ալիքները տարածվելով Դոի այգու բուրավետ օդում, հուզմունքով արձագանքում լին նաև բոլորիս սրտում...

Ճաշի ժամանակ, ուրախ և առատ սեղանի շուրջը մեր զվարճախոսությունների մասնակցում էր նաև հայր Կոմիտասը։

Ճաշից հետո, մի ժամ էլ հանգստացանք կանգլավետ այգում, ապա ճանապարհ ընկանք դեպի Ճեմարան։

Ճանապարհին, Կոմիտաս վարդապետի թույլտվությամբ և նրա տաղանդավոր աշակերտ Խոսրով Փախչանյանի ղեկավարությամբ, քայլելիս երգում էինք «Լո-լոռ»-ն։ Շրջակա այգիներից և տներից դուրս էին եկել լսելու և դիտելու Ճեմարանցիների ուրախ շքերթը։

Այդ օրը անմոռանալի մի օր էր մեծ Կոմիտասի հետ միասին...։

***

Ինչպես ամեն մի ժողովուրդ, այնպես էլ հայ ժողովուրդը ունեցել է, և մինչև այսօր էլ ունի զանազան տոնական օրեր, որոնց ընթացքում կատարվում են համապատասխան հանդեսներ, ուխտագնացություն, ճաշկերույթներ, խնջույքներ, ծիսակատարումներ և խաղեր։ Բոլոր դեպքերումն էլ տոնակատարման հանդեսի էական մասը կազմում են խոսքը, երգը, նվագը և պարը, որոնց միջոցով ժողովուրդն արտահայտում, դրսևորում է իր վշտի կամ ցնծության, սիրո և այլ ապրումները։ Սակայն արտահայտման այդ միջոցները չեն մնում քարացած իրենց ձևով ու յուվանդակությամբ, այլ ժամանակի ընթացքում ժողովուրդը նորանոր ստեղծագործություններով հավելումներ է անում հնի վրա, ձևափոխում, նոր իմաստ մտցնում, հա-

մապատասխան իր դարաշրջանի ոգուն, կենցաղին և պահանջներին։

Նման ավանդական սովորությունների շարքին են պատկանում Բարեկենդանը, Նավասարդը, Վարդանանց և Թարգմանչաց տոները, Աստվածածնի, Համբարձման և Վարդավառի տոները, որոնցից ոմանք իրենց ծագմամբ գալիս են մեր ժողովրդի դեռևս հեթանոսական դարերից։

Բացի կրոնական բնույթ կրող այդ տոնակատարություններից, հայտնի են բոլորին նաև կենցաղային բնույթ կրող տոնակատարումներ, ինչպես օրինակ, հարսանիքի, բերքահավաքի, սար գնալու, խոտհարի, վար ու դանքի, հաղթանակի և այլ տոները։ Ահա այդ ժողովրդական տոնակատարումները և կենցաղային դեպքերն էին այն աղբյուրները, որոնցից հագեցնում էր իր ստեղծագործական ծարավը Կոմիտաս վարդապետը։

***

Աստվածածնի տոնն էր, էջմիածնից տասներկու կիլոմետր դեպի հարավ, Խաթունարխ գյուղի մոտ գտնվող հինավուրց վանքի շորս բոլորը բռնված էր հազարավոր ուխտավորների բազմությամբ։ Ամենուրեք մատաղների օջախների շուրջը լսվում էին բացականչություններ, երգ ու պարեր, նվագ, խմբական յալլիներ։ Մի տեղ երգում և պարում էին երիտասարդ հարսներն ու աղջիկները, մի տեղ տղամարդիկ, մի ուրիշ տեղ՝ տղա և աղջիկ խառը խմբերով։ Նվագում էին զուռնաչիները, թաուլներն ու քամանչիստները, դուդուկիստները, մինչև իսկ կային պարկապզուկ նվագողներ։ Մի այլ տեղ էլ կույր աշուղին շրջապատած, լսում էին նրա երգն ու հեքիաթը։

Այդ ուխտագնացության մասին մենք գիտեինք նախօրոք և իմացել էինք, որ Կոմիտաս վարդապետն ու Սպիրիդոն Մելիքյանը պետք է գնային այդ տոնակատարմանը ներկա լինելու։ Հինգ ճեմարանականներ՝ Փախչանյան Խոսրովը, Տեր-Գրիգորյան Սուրենը, Հարությունյան Հակոբը, Ալավերդյան Նշանը և ես գնացինք Կոմիտաս վարդապետի մոտ և խնդրեցինք մեզ էլ միասին տանել։ Նա չմերժեց և մենք յոթ հոգով երկու ձիակառք նստած, երեկոյան ժամը 8-ին հասանք Խաթունարխի ուխտատեղին, երգի ու պարի և յալլիների ամենաեռուն ժամին։

Կոմիտաս վարդապետի կարգադրությամբ մենք բաժանվեցինք երկու խմբակի։ Նա մեզ պատվիրեց մտնել ուխտավորների հոծ շարքերի մեջ, լսել, դիտել և մինչև իսկ մասնակցել նրանց երգ ու պարին, ուրախությանը։ Ամբողջ դիշերը, մինչև լուսա, մենք անցկացրինք ուխտավորների մեջ. դիտում էինք, լսում երգն ու պարը և մասնակցում, ուր հարմար էինք գտնում։

Կոմիտաս վարդապետն իր խմբի հետ անցնում էր օջախից օջախ, խմբից խումբ, լարված ուշադրությամբ լսում երգերն ու նվագները, դիտում պարերն ու խաղերը և քարի վրա նստած, գրի էր առնում լսածները։ Մի այլ տեղ նա զրուցում էր ուխտավորների հետ, կատակախոսում, երբեմն էլ ընդմանում մատաղի հյուրասիրությունը, որպեսզի վիրավորած չլինի ուխտավորների զգացմունքը։

Գիշերվա ժամը 1-ին մեր խումբը հանդիպեց Կոմիտաս վարդապետի խմբին։ Հոգնել էինք, նստեցինք վանքի բակի գերեզմանաքարերի վրա, մի ամբողջ ժամ հանգստացանք։

Կոմիտաս վարդապետի միտքն զբաղված էր իր տեսածներովն ու լսածներովը և մեզ բազմաթիվ հարցեր էր տալիս.

— Հը՞, պարեցի՞ք այն խառը խմբի հետ... Լսեցի՞ք այն երիտասարդ աղջկա երգն ու պարը. ինքն էր հորինում տեղն ու տեղը և պատասխանում երիտասարդին... Հավանեցի՞ք ծերունիների խմբին։ Տեսա՞ք ինչպես էին ռիթմով կլոր պարը պարում։

Այս հարցերից հետո, նա ավելացրեց.

— Իմացե՛ք, տղանե՛ր, որ այս պարողների ու երգողների ճնշող մեծամասնությունը, մանավանդ կանայք ու աղջիկները, բացվում են միայն այսպիսի տոնակատարումների ժամանակ։ Գիտեք, որ ընտանեկան, պապականտատական սովորությունների համաձայն, հարսն ու հարսնացուները, նույնիսկ մանկանց տեր մայրերը մեծերի առաջ կամ նրանց ներկայության չեն համարձակվում խոսել, ձայն հանել, ո՛չ մնաց երգել և պարել։ Իսկ նման դեպքերում, ինչպես այսօր է, նրանք իրավունք են ստանում խախտելու այդ ավանդությունը, որովհետև, կեսարար ու կեսուր, տատ ու պապ, քավոր ու խնամի, հարևան ու բարեկամ, բոլորն էլ այսօր ուխտի են եկել՝ իրենց մուրազին հասնելու նպատակով։ Ահա թե ինչու նրանք բացվում են այսօր։

Եվ իրոք, ամենից աշխույժն ու հետաքրքիրը 20—30 տարեկանների երկսեռ խմբերն էին։ Այս խմբերի մեջ երիտասարդ տղա ու աղջիկ, հարս ու փեսա երգում, պարում, զվարճանում էին անընդհատ և որ դիպավորն է, հենց տեղում ստեղծագործելով, մանավանդ երբ մրցում էին հարսնացու աղջիկները փեսացու տղաների հետ։ Այս խմբերի մեջ երգելիս և պարելիս հորինում էին միաժամանակ և զանազան վարիանտներով կատարում սառյակներ ու երկյակներ սիրո, գովքի, աշխատանքի, հեգնանքի կամ երգիծանքի թեմաներով, իսկ ավելի տարիքավորները՝ ըն-

տանեկան բարքերի, անցած հերոսական դեպքերի շուրջը և այլն։ Մի տեղ մատաղի օջախի շուրջը, գետնին փռած սփռոցի շուրջ կողմը, մատաղի խաշն առաջները, նստոտած ուխտավորներն ուտում-խմում էին ու լսում երիտասարդ տղայի ու աղջկա մենակները։ Մի այլ տեղ, զուռնայի ու դհոլի նվագի տակ, հասակավորները պարում էին հայտնի «քոչարիս»-ն, մի երրորդ տեղ, աղջիկներով ու հարսներով շրջապատված, երիտասարդների մի խումբ փորձում էր իր ֆիզիկական ուժը՝ ծանր քարեր վերցնելով կամ գոտեմարտելով։

Ահա այսպես անցավ Աստվածածնի ուխտի դիշերը մինչև առավոտյան ժամը 9—10-ը, երբ ուխտավորներն սկսեցին կամաց-կամաց ցրվել, իսկ մենք էլ ճանապարհ ընկանք դեպի էջմիածին՝ լի տպավորություններով։

Ճանապարհին, Սև-ջուր գետի կանաչ ափին կառքերը կանգ առան։ Մինչ կառապանները կջրեին և կիճամեին ձիերին, մենք մի կես ժամի չափ նստեցինք Սև-ջրի դալար ափին և սկսեցինք իրար հետ փոխանակել մեր ստացած տպավորությունները։

Ամենից շատ լսում էինք, իհարկե, Կոմիտաս վարդապետի ասածները։ Նրա կարծիքներն այս կամ այն երգի և պարի մասին միմի հոգեբանական կամ ազգագրական վերլուծություն էին։ Նրա ուշադրության կենտրոնումն են եղել նույնպես 18—30 տարեկան ուխտավորների երգերն ու պարերը սիրո, աշխատանքի, գովքի, երգիծանքի և այլ թեմաներով։

Կոմիտաս վարդապետը ցույց տվեց մեզ իր հատ ծոցատետրում նշված քառասունից ավելի երգերի ու պարերի անուններ, որոնց համարյա կեսից ավելին ձայնագրել էր հայկական նոտաներով։ Մինչև այսօր էլ հիշում եմ այդ ծոցատետրում նշած մի քանի երգերի ու պարերի անունները, նույնիսկ քառյակների խոսքերը, որովհետև հաճախ դրանք երգել ենք Ճեմարանում տոների ժամանակ։

***

Ամռան սկզբներին, երբ տրվում էին արձակուրդները, Ճեմարանի ուսանողներից շատեր, իրենց ծննդավայրի հեռավորության պատճառով, մնում էին էջմիածնում։ Բայց շոգերի պատճառով շատերին ուղարկում էին ամառանոց՝ Սևան, Գեղարդ, Ղրլաղ, Բյուրական և այլ վանստանները։ Պատահում էր, որ բարձր դասարաններից ու լսարաններից մի քանի հոգի խումբ էին կազմում և ճանապարհորդում դեպի Հայաստանի պատմական վայրերը, մինչև անգամ Արևմտյան Հայաստանի գավառները։

1904 թվականի ամառը մի խումբ ուսանողներով այդպիսի մի արշավ կազմակերպեցինք դեպի Ալագյազի ու Ապարանի կողմերը։ Անցանք Օշական, Աշտարակ, Մողնի, Օհաննավանք, Ալիքուշակ, բարձրացանք Արայի լեռան կատարը հյուսիսային կողմից, այդտեղից դիտելու Արարատյան դաշտը։

Էջմիածնից դուրս էինք եկել երեքշաբթի օրը ուտքով, իսկ շաբաթ օրը ցերեկվա ժամը 2-ին գտնվում էինք Արայի լեռան կատարին։

Մեր աչքերի առաջ փռվել էր Արարատյան դաշտի սքանչելի համայնապատկերը։

Հովիվներից լսեցինք, որ հաջորդ օրը, կիրակի, Ծաղկավանքի տոնն է և բազմաթիվ ուխտավորներ պետք է գան։ Այդ մասին բոլորովին մոռացել էինք մենք և վճռեցինք գիշերել հովիվների մոտ ու առավոտյան լուսաբացին իջնել Ծաղկավանք, որը գտնվում էր Արայի լեռան հարավային ստորոտում։

Մեր խումբը Արայի սարից Ծաղկավանք իջավ առավոտյան ժամը 10-ին, երբ ուխտավորների բազմությունը փռվել էր արդեն Ծաղկավանքի դալարապատ հովտում։ Մատաղի կրակների ծուխը կապտագույն շղարշով հովանի էր կապել հովտի ու բլուրների վրա։ Մատաղացու գառների ու ոչխարների մայուները, ձիերի խրխնջյունը, դհոլի ու զուռնայի, երգի ու պարի հնչյունները լսվում էին շատ հեռվից։

Որքա՜ն մեծ եղավ մեր ուրախությունը, երբ Մողնի վանքի վանահորից իմացանք, որ Բյուրականից այդտեղ գալու էր նաև Կոմիտաս վարդապետը։

Այդ տարիներին, ամառվա շոգ ամիսներին, Բյուրականում հանգստանում էր Խրիմյան Հայրիկը, որին այցելության էր գնում նաև Կոմիտաս վարդապետը։ Այս ամռանն էլ գտնվելով Բյուրականում, Ծաղկավանքի տոնը առիթ էր դառնում Կոմիտաս վարդապետին՝ այդտեղ գալու։

Ցանցած երկու ժամ, Կոմիտաս վարդապետը նկավ ուտքով իր չորս ուղեկիցների հետ։ Մենք ընդառաջ գնացինք։ Մեզ տեսնելով և իմանալով մեր պտույտի նպատակը, Կոմիտաս վարդապետը շատ ուրախացավ և ասաց.

— Ապրե՛ք, տղանե՛ր, լավ միտք եք հղացել շրջագայելու մեր պատմական վայրերում, ծանոթանալու մեր ժողովրդի նիստ ու կացին. գովում եմ ձեր եռանդը։ Այսօրվա տոնախմբության հետաքրքրական կողմը մեզ համար ոչ թե կերուխումն է, այլ այն երգերն ու պարերը, նվագները ու խաղերը, որոնց միջոցով հայ գեղջուկն արտահայտում է իր կենսական ապրումները։ Ահա տեսե՛ք, ինչպե՛ս են խմբեր կազմել ահել, ջահել, հարս ու աղջիկներ, երիտասարդ տղաներ, երդում

ԼԼ ու պարում, սրտերը բաց անում։ Եթե բոլորս միասին խմբովին սկսենք շրջել դիտելու համար, շատերը նկատելով մեզ, գեղեցկական ամոթխածությունից պետք է կամ դադարեցնեն երգն ու պարը, կամ այնպես պզաս չզգան իրենց, ինչպես կարող են զգալ առանց մեր ներկայության։ Իսկ մեզ համար հետաքրքիր է լսել և տեսնել նրանց առանց կաշկանդումների, ազատ, համարձակ ու սրտաբաց։ Ուստի, հարկավոր է, որ մենք բաժանվենք երկյակների՝ ու աննկատելիորեն մոտենանք ուխտավորների խմբերին, նրանց ուրախ ժամանցը դիտելու, լսելու համար։ Իսկ ժամը 5-ի մոտ կհավաքվեք ա՛յ, է՞ն խաչքարի մոտ, որտեղ աշտարակցի Օհաննեսի մատաղի օջախն է. այնտեղ կհանդստանանք և ապա կճանապարհվենք դեպի տուն։

Այդպես էլ արինք։ Կոմիտաս վարդապետը, Տաճատ սարկավագի և լսարանցի Վ. Տեր-Առաքելյանի հետ միասին. իսկ մնացածներս երկյակներով ցրվեցինք ուխտավորների ծով բազմության մեջ։

Այստեղ էլ այնպես էր, ինչպես Աստվածածնի տոնին. ամեն կողմ օջախների շուրջը երգ ու պար, նվագ ու խաղ, մրցումներ և այլն։ Երկու ժամից ավելի մենք Եռանդագին, ամենայն հետաքրքրությամբ դիտեցինք, լսեցինք ու մասնակցեցինք ուխտավորների ժամանցին։ Երբեմն-երբեմն էլ դիտում էինք Կոմիտաս վարդապետին. թե ինչպես նա լարված ուշադրությամբ (նման առիթներով վեղար չէր դնում, որ աչքի չընկնի), մատիտն ու տետրակը ձեռին, մոտենում էր այս կամ այն խմբին և նշումներ անում, գրի առնում լսածի ու տեսածի մասին։

Ժամը 5-ին բոլորս հավաքվեցինք աշտարակցի Օհաննեսի օջախի մոտ։ Օհաննեսը պատրաստել էր ճոխ, առատ մատաղասեղան։

Արևն արդեն թեքվել էր դեպի մայրամուտ, երբ մենք թողինք Ծաղկավանքի հովիտը և Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ հասանք մինչև Մողնի, որտեղից բաժանվեցինք. նա իր ուղեկիցներով գնաց դեպի Թյուրքական, իսկ մենք, Օշականի ու Աշտարակի միջով, ուղղվեցինք դեպի Էջմիածին։

***

Կոմիտաս վարդապետը միայն տոնակատարություններ ժամանակ չէր, որ հավաքում, ուսումնասիրում և մշակում էր ժողովրդական երգերն ու պարերը։ Նա շատ շրջագայություններ է կատարել Հայաստանի զանազան գավառներում։ Նրան ծանոթ էին ոչ միայն հայ շինականի կենցաղի, նիստ ու կացի, սովորությունների ավանդությունները, այլև հարևան եղբայրակից ազգերի՝ քրդերի, եզիդիների, տաճիկների, ասորիների երգերն ու պարերը, սովորությունները։ Նշանդրեքի, Հարսանիքի, սարվորների, դաշտային աշխատանքների և ուրիշ դեպքերը չէին վրիպում նրա ուշադրությունից։ Ամեն դեպքումն էլ նա նյութ էր գտնում իր ստեղծագործական աշխատանքի համար։

Ճեմարանում և վանքում ծառայում էին շատ տաճկահայեր, որոնք 1896 թվականի Թյուրքական ջարդերից փախչելով ապաստան էին գտել Հայաստանում։ Նրանցից շատերը տարիքավոր մարդիկ էին, գաղթած Մոկաց աշխարհից, Սասունի, Շատախի, Վանի, Մշո գավառներից, և որոնք գիտեին շատ հեքիաթներ, ավանդություններ, առածներ, պատմություններ ու երգեր։ Ես շատ լավ եմ հիշում քեռի Նախոյին, քեռի Մանուկին և ուրիշներին, որոնց արած պատմությունները հետաքրքրությամբ էինք լսում Ճեմարանի ուսանողներս։

Կոմիտաս վարդապետն ու Մանուկ Արեղյանը (այն ժամանակ մեր դասատուն) շատ անգամ հրավիրում էին այդ ծերունիներին և լսում նրանց պատմածները։ «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի մի վարիանտը Մանուկ Արեղյանը դրանց պատմածից է գրի առել ու մշակել։

(Շարունակելի)

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԼԸՁՈՐԻ ԴԳՐՈՑԻ ՄԵԾ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՑ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻՆ*

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում 439ը—440ա էջերի խորանները։ Նրանցից առաջինի վրա, վերին ձախ անկյունում, պատկերված է նստած դիրքում՝ ձեռագրի պատվիրատուն, մեզ ծանոթ Նսայի Նշեցին, որի գլխավերևը կարդում ենք «ԾՍԱՑԻ ՎՐԴ» (նկար 5)։ Երկրորդի վրա նկարված է, ինչպես կարծում ենք, արվեստագետի՝ նկարիչ Թորոս Տարոնացու ինքնանկարը, բայց ոչ մի դեպքում Հովհաննես Երզնկացի գրչի դիմանկարը, ինչպես կարծում է Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը[14]։ Մեր ենթադրության օգտին է խոսում այն հանգամանքը, որ նաև 1317 թվականի ձեռագրում (Մատենադարան, № 6897), նկարազարդված նույնպես Թորոս Տարոնացու կողմից, էջ 2ա, կա գրեթե նման մի նկար[15], միայն առանց տիրամարդի, և պատվիրատուի գլուխը, առնված լուսապակի մեջ։ Այստեղ կարելի էր տարակուսել, լուսապակի պատճառով, 1317 թվականի ձեռագրի նկարչի ինքնանկարի առթիվ, բայց, բարեբախտաբար, մենք ունենք Թորոս Տարոնացու ևս մեկ արժանահավատ ինքնանկար—դա 1307 թվականի «Նսայի Նշեցու Ավետարան»-ումն է, որտեղ նա իրեն պատկերել է լուսանցքում, Հիսուս Մանկան հետ Աստվածամոր բուն մանրանկարի առջև ծունր դրած։ Պատկերի տակ կարելի է կարդալ՝ «անարժան... Թորոս...»[16]։ Այստեղ նրա գլուխը նույնպես առնված է լուսապակի մեջ։ Գեղարվեստական ձեռագրերի մեջ կարելի է գտնել ոչ սակավ օրինակներ, որտեղ ոչ միայն պատվիրատուների, այլ նաև գրիչների, նկարիչների և ուրիշ անձանց պատկերված նկարների գլուխները շրջանակված են լուսապակով։ «Նսայի Նշեցու Աստվածաշունչ»-ը չունի լուսապակով մանրանկար. նկարիչը լուսապակ չի նկարել հավանաբար տեղի սղության պատճառով։

Եթե քննարկված Աստվածաշնչում Թորոս Տարոնացին տվել է ձեռագրի գրիչներից մեկի դիմանկարը, ապա ավելի քան տարօրինակ կլիներ, որ այդ նույն դիմանկարը նա կրկներ մի այլ, 1317 թվականի ձեռագրում, որի գրիչը այս անգամ եղել է ոչ թե Հովհաննես սարկավագը, այլ Կարապետ վարդապետը։ Մեր ենթադրությամբ, երկու դեպքում էլ մենք ունենք իր՝ նկարչի ինքնանկարը, որտեղ նա երիտասարդ է երևում, փոքրիկ մորուքով։ Եվ իրոք, որ մեր Թորոս Տարոնացին այդ տարիներում պետք է երիտասարդ լիներ, ապացուցում են տվյալնե-

* Շարունակված ամսագրի 1957 թվականի № է—Ը-ից։

14 Թե ինչի հիման վրա է անում Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը իր այդ պնդումը, պարզ չէ։ Տե՛ս նրա «Հաղբատայանց կամ Գոռշյանց հայոց պատուրվյան մեջ», մասն Բ, Երուսաղեմ, 1944 թ., էջ 237։

15 Նկարի վրա՝ քավոց սրտի, ուրիշ գրչի կողմից։ Հետագայում երկարացված է մորուքը։

16 Տե՛ս Սիրարքի Տեր-Ներսեսյան, «Վենետիկի Մխիթարյան հայերեն մատենադարանի ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերը», ալբոմ, Փարիզ, 1937, Pl. LIV. 119։

ը. Թորոս Տարոնացու գրած և նկարազարդած մեզ հայտնի ամենավաղ՝ 1307 թվականը կրող ձեռագիրը և ամենուշը՝ 1346 թվականի ձեռագիրը իրարից անջատվում են 40-ամյա գործունեության ժամանակաշրջանով։ Նշանակում է, նկարիչ Թորոս Տարոնացին 1317—1318 թ. թ. չէր կարող երիտասարդ չերևալ։ Այդ է հաստատում նաև նրա 1307 թվականի անառարկելի ինքնադիմանկարը, որտեղ նա դեռ մորուք չունի։

Երկու դիմանկարների գեմքերը, որոնց տրված են անհատականացման գծեր, արտահայտչականություն ունեն, ձևերի ճշգրտություն, իսկ ստվերների առկայությունը նրանց տալիս է տարածականություն։ Սակայն չնայած դրան, նկարի մեջ զգացվում է որոշ գրաֆիկականություն։ Եսայի Նչեցու անձնավորությունը հաստատվում է նրա մի այլ պատկերով, որ գտնվում է 1323 թվականի Ավետարանի խորաններից մեկում, որտեղ կա նաև Ներսես Մշեցու պատկերը (էջ 141ա)։ Ընդհանրապես այդ դիմանկարները խոսում են այն մասին, որ նկարիչը շատ լավ է իմացել և ճանաչել նկարվելիքը և համարձակ ու հմտորեն կարողացել է աշխարհիկ այդ մոմենտները ներդնել խորանների գեղազարդման մեջ։

Ավետարանների անվանաթերթերը Թորոս Տարոնացու մոտ, սովորաբար, ինչպես ընդունված է, բաղկացած են կիսախորաններից, գլխագրերից, հարուստ լուսանցազարդումներից։ Հիմնականում ուղղանկյուն խորանները ունեն բարդ, բազմաթիվ կտրվածք իրենց ներքևի միջին մասում, բացառությամբ 2-րդ թերթի Ռ-ի նման խորանի։

Մատթեոսի Ավետարանի անվանաթերթի կիսախորանը ծածկված է զսպանակի ձև ունեցող բուսական մոտիվների համատարած զարդանկարներով և գլխավորապես կազմված է կիսաարմավներից և բաժակաթերթերից։ Խորանի վրա տրված են զույգ թռչուններ, խալաձև ծաղկի կողքերին կանգնած։ Երկրորդ անվանաթերթի կիսախորանի մեջ մտցված են նույնպես բուսական զարդանկարներով մարդու դիմակներ և առյուծներ։ Վերևում տրված են շղթայված երկու թևավոր առյուծներ, կանգնած դեմ առ դեմ։ Նման առյուծներ, միայն առանց թևերի, քանդակված են նաև Գեղարդի վանքի ներքին պատերից մեկի վրա։ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի կարծիքով, առյուծների այդ պատկերները հանդիսանում են Պռոշյան իշխանների իշխանական տոհմանշանը[17]։

[17] Տե՛ս Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Ռաղբակյանք կամ Պռոշյանք...», մաս Ա, Վաղարշապատ, 1938 թ., էջ 87։

Նկար 5

Ղուկասի Ավետարանի անվանաթերթի (նկար 6) կիսախորանի մեջ՝ կողքերին նկարված են հուշկապարիկներ, միջին մասում, ուղիղ հնգաթերթ կտրվածքի վրա տրված է ավետարանչի խորհրդանիշը՝ թևավոր եզը, որը որպես թե հենարան է ծառայում գահի համար, որի վրա էլ նստած է Աստվածամայրը՝ իր ծնկների վրա առած Մանուկ Հիսուսին։ Աստվածամոր և Մանուկ Հիսուսի ֆիգուրաները դուրս են գալիս կիսախորանի սահմաններից, բայց շնորհիվ թագի կողքերին տրված ծնրադիր թիկնապահ հրեշտակների հաջող դասավորության, պահպանված է խորանի ամբողջականությունը։ Նույնպես հետաքրքիր է լուծված Հովհաննու Ավետարանի անվանաթերթի կիսախորանը, որն ամբողջովին լցված է Հովհաննես ավետարանչի խորհրդանիշ արծիվներից։

Մեծ ուշադրություն է դարձված նկարչի կողմից նաև զարդաբանքային մոտիվներին, որոնք գեղազարդում են ձեռագրի անվանաթերթը և մյուս էջերը։ Այդ լուսանցազարդումները ներկայացնում են որպես բարդ հյուսվածք կամ զուգակցված բուսականություն՝ բաժակաթերթերից և այլն, որոնք սովորաբար վերևի մասում վերջանում են ոսկի խաչերով։ Ծաղիկների, տերևների և երևա-

Նկար 6

կայական բույսերի պտուղների մեջ կան մարդկային դիմակներ, կենդանիների գլուխներ, թռչուններ, իսկ առաջին անվանաթերթի լուսանցքներում թռչունների մի ամբողջ երամ, որոնք կտցում են մրգերը։ Հրաշալի լուսանցազարդումներ կան նաև 370ր էջում և այլն։ Անվիճելի է, որ նկարիչ Թորոս Տարոնացին օժտված է բազմակողմանի ձիրքով։ Նա ոչ միայն հրաշալիորեն պատկերել է թռչունների և կենդանիների աշխարհը, այլև ցուցաբերել է մեծ նուրարարություն և հարուստ երևակայություն գլխագիր տառեր ստեղծելու գործում, որոնք նրա մոտ վազմը-ված են հնարավոր բոլոր կերպարանքներից և հյուսված շատ գեղեցիկ նկարի նուրբ գծերից, ըստ որում բացակայում է միևնույն տառերի կրկնությունը[18]։

Օրինակի համար, եթե վերցնենք «Ե» կամ «Յ» տառերը, որոնց թիվը անցնում է մի քանի ուսանյակից, ապա կտեսնենք, որ նրանցից ոչ մեկը չեն կրկնում իրար։ Այդ տեսակետից հատկապես լավ են անվանաթերթերի վրա գտնվող տառերը (նկար 7)։ Այսպես, օրինակ, Մատթեոսի Ավետարանի անվանաթերթի վրա տառերը տրված են մարդկային ֆիգուրաների՝ երկարափեշ կրոնավորների հագուստով, իսկ առաջին «Ի» գլխագիր տառը պատկերում է ձեռքը առաջ մեկնած հրեշտակի։ Ավետարանի այդ նույն անվանաթերթի նախնական տեքստի երկրորդ տողը բաղկացած է թռչուններից, որոնք տրված են ամենատարբեր դիրքերով։

Անվանաթերթի առաջին գլխագիր տառերի մեջ հատկապես օրինակելի և օրիգինալ է «Ի» տառը։ Նա ամբողջովին կազմված է ավետարանիչների խորհրդանիշներից. ներքևից տրված է հետևի ոտքերի վրա նստած, կարծես թե վարժեցրած մի եզ, որի գլխին ձգված կանգնած է առյուծը, վերը սուրբն է, որը որպես ատլանտ լռնել է դահը, որի վրա նստած է Քրիստոսը։ Այդ ֆիգուրաները կազմում են տառի ուղղահայաց մասը, իսկ նրա փոքր մասը հանդիսանում է արծիվը՝ գլուխը ներքև և ամբողջ մարմնով կռացած. արծվի պոչը կպած է առյուծի բերանին։ Քրիստոսը ներկայացված է պատանու տեսքով, առանց մորուքի և օրհնող աջ ձեռքով, իսկ ձախ ձեռքում պահում է Սուրբ Գիրքը։ Այդպիսի Սուրբ Գրքեր բռնած ունեն նաև կենդանիները։ Վերը նկարագրված գլխագիր տառը Թորոս Տարոնացու մոտ մենք գտնում ենք նաև նրա ուրիշ ստեղծագործությունների մեջ։ Եթե համեմատենք այն «Ենայի Նեցու Ավետարան»-ում գտնվող տառի հետ, նույնպես տրված Հովհաննու ավետարանի անվանաթերթի վրա[19], ապա դժվար չէ նկատել ոչ միայն նկարի վարպետության, այլ նաև նկարչի վերջին աշխատանքի հորինվածքի զարգացումը։ Հատկապես բացահայտորեն երևում է վարպետության աճը 1307 թվականի և 1318 թվականի ձեռագրերի «Ա» գլխագիր տառի նկարի մեջ (բայց դեղանկարչության նսեմացմամբ)։ Նույնը կարելի է ասել մյուս տառերի կապակցությամբ։

Սիրարփի Տեր-Ներսեսյանի կարծիքով «Ի» գլխագիր տառը հանդիսանում է, եթե կարելի է այդպես ասել, Գլաձորի մանրանկարչական դպրոցի առանձնահատկությունը[20], «Ի» տառի նման հորինվածքի մասին ակնարկները կարելի է հանդիպել Հովհաննու ավետարանի անվանաթերթի վրա՝ նկարիչ Մոմիկի 1302 թվականի «Ստեփանոս Օրբելյանի Ավետարան»-ում (Մատենադարան,

---

18 Նկարիչ Թորոս Տարոնացու այդ հրաշալի առանձնահատկությունը նշվել է Գ. Լևոնյանի և ուրիշ հետազոտողների կողմից։ Տե՛ս Գարեգին Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը. պատմական տեսություն սկզբից մինչև 20-րդ դարը», Երևան, 1946 թ., էջ 35։

19 Տե՛ս Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Վեհեստիկի Մխիթարյան հայրերի ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերը», արում, Pl. LXIII, 137։

20 Նույն տեղում (բնագիր), էջ 116։

№ 6792), որտեղ տառի ուղղահայաց մասը կազմված է նույնպես ավետարանիշների խորհրդանիշ կենդանիներից։ Կարելի է ենթադրել, որ նկարիչ Թորոս Տարոնացին «Ի» տառի համար ձևեր փնտռելիս եղել է ինչպես Մոմիկի հիշված ձեռագրերից, այնպես և Տյուբինգենի համալսարանի գրադարանի Ավետարանի նախատիպ հանդիսացող ձեռագրից, որը շատ մոտիկից առնչվում է 1232 թվականի «Թարգմանչաց Ավետարան»-ին (Մատենադարան, № 2743)։

Ղուկասի Ավետարանի անվանաթերթի առաջին տողը ամբողջովին կազմված է ավետարանիշների խորհրդանիշներից, որտեղ իր համամասնություններով հատկապես աչքի է ընկնում «Ի» տառը։ Բացի Ավետարանի անվանաթերթից, տառերի հանդիպում ենք նաև Աստվածաշնչի շատ ուրիշ այլ էջերում։ Յուրահատուկ է, օրինակ, «Ե» տառը (էջ 260ա, նկար 8), որը բաղկացած է աստվածաշնչական Դավիթ արքայից, արծվից և բացված երախով առյուծից։ Դավթի ձեռքին մենք տեսնում ենք հայկական ազգային երաժշտական լարային գործիք՝ սաղ։ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը հատկապես ընդգծում է այդ երևույթը, ցույց տալով, որ արքայի ձեռքին սաղը փոխարինում է սովորական ընդունված Սաղմոսագիրքը։ Այստեղ, ի միջի այլոց, արտահայտվում է նկարչի ազգային յուրահատկությունը։ Սակայն Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը ճիշտ չէ այն հարցում, թե սաղը փոխարինել է Սաղմոսագրքին։ Ինչպես հայտնի է, Դավիթ մարգարեի անձնավորությունը կապված է եղել երաժշտության, երգեցողության հետ, որը կարող է «Իր շուրջը հավաքել նրա քնարի ձայնով ու հնչյուններով հափշտակված գազաններին ու թռչուններին»[21]։ Այդ իմաստով էլ Թորոս Տարոնացու կողմից Դավթին այդպես պատկերելը մեզ զարմանալի չպիտի թվա. նա, ինչպես երևում է, ծանոթ է եղել վաղեմի ավանդությանը և արքայի շուրջը «հավաքելով» գազաններին ու թռչուններին»— առյուծին ու արծվին—Դավթի ձեռքը դրել է ոչ թե քնարը, այլ հայ գուսանների սիրած երաժշտական գործիքը։

Զարմանալի հետաքրքրական են ուրիշ այլ տառերի հորինվածքային մտահղացումները, որն արտահայտվում է, օրինակ, երկու սիրամարգների հաջող միացմամբ՝ «Ց» կամ, սրբի և երկու ձկների՝ «Հ», ինչպես և թռչունի ու ձկների համակցմամբ՝ «Պ»։ Իր

Նկար 7

նկարով և հատկապես համամասնություններով գեղեցիկ է նաև «Պ» տառը, որը ներկայացնում է առյուծ, և ուրիշ շատերը։

Հաճելի և հարուստ գունային դամման,— լաջվարդը, երկնագույնը, կանաչը, կարմիրը, դարչնագույնը, շուշանագույնը, սևի և սպիտակի ներմուծմամբ և ոսկով, ընդգծված տառերին տալիս են հատուկ շքեղություն, որոնք կարող են հանդես գալ որպես արվեստի ինքնուրույն ստեղծագործություններ, ինչպես իրենց համամասնություններով, այնպես և մանրամասների դեղարվեստական մշակմամբ։

Անվանաթերթերի, լուսանցազարդումների, ինչպես և գլխագիր տառերի մասին վերը բերված տվյալները խոսում են նկարչի մեծ երևակայության և միևնույն ժամանակ կենդանի բնության նկատմամբ ունեցած նրա դիտողականության մասին, ինչպես և նրա նուրբ վարպետության մասին։

Ձեռագրի մեջ Ավետարանի անվանաթերթի հետ միասին պատկերված են նաև չորս ավետարանիչները՝ Մատթեոսը (նկար 9), Մարկոսը (նկար 10), Ղուկասը (նկար 11) և Հովհաննեսը իր աշակերտ Պրոխորիոսի հետ միասին (նկար 12)։ Առաջին երեք

21 Иосиф Орбели. «Киликийская серебряная чаша конца XII в.». См. сборник «Памятники эпохи Руставели». Ленинград. 1938. «Гос. Эрмитаж». стр. 262.

Նկար 8

ավետարանիչները նստած են բազմոցների վրա մի փոքր հակված դրվանների, ձախ ձեռքում բռնած են մագաղաթի թերթերը, իսկ աջով գրում են սրած եղեգնյա գրչածայրով։ Ավետարանիչների տոգերի տակ կա հենատախտակ, որը շատ նման է փոքրիկ գորգի։ Ավետարանիչները տրված են «վանքի պարապիտ» ֆոնի վրա։ Այդ «պարապիտ» հետևից երևում են հայկական գրքերով ճարտարապետական կառուցվածքներ։ Այլ կերպ ասած, նկարիչը ցանկացել է պատկերել գրող ավետարանիչների ինչպես ներքին, այնպես և արտաքին պարագաները։ Ըստ որում, Թորոս Տարոնացու ստեղծագործություններում չկան այն պարզությունը և հասարակությունը, որ նկատվում են նրա վաղ շրջանի գործերում կամ նրա նախորդի՝ Մոմիկի մոտ։ Ի տարբերություն վերջինի, Թորոս Տարոնացին ավելի շատ է ծանրաբեռնում իր մանրանկարները, կարծես թե վախենալով փոքր ինչ ազատ տեղ թողնել[22]։

Ավետարանիչների ֆիգուրաները ընդհանրապես ճիշտ համամասնություններով են տրված, դեմքերը լավ են մշակված մուգ երանգներով, որոնք արտահայտում են Հայաստանի բնակիչների տիպերը։

Մանրանկարների դունային գամման, խորանների ու անվանաթերթերի զեղազարդումների մեջ, հարուստ ու գեղեցիկ է։

Ավետարանիչների մանրանկարները հետաքրքրություն են ներկայացնում նաև իրենց կենցաղային բովանդակությամբ։ Առաջին երեք ավետարանիչների մանրանկարների վրա կարելի է տեսնել գործիքներ, գրչի պատկանող պարագաներ՝ դանակ, մկրատ, մախաթ, ներկեր, իսկ ներքևի անկյունում, որպես թե պատի խորշում, ինչպես Անիի շրջանի հայ ճարտարապետության մեջ[23], գեղեցիկ սափոր։ Առաջին երկու մանրանկարներում կա նաև սեղան, փակված մեծ ու բարդ կողպեքով և այլն։

Եթե համեմատենք վերը քննված նկարիչ Թորոս Տարոնացու ավետարանիչների պատկերումները նրա վաղ շրջանի նույնպիսի գործերի հետ, ապա կարելի է նկատել, որ նկարչի վաղ շրջանի գործերը, որպես կանոն, աչքի են ընկնում իրենց գեղանկարչությամբ, իսկ ուշ շրջանինը՝ չորու-

Նկար 9

22 Այդ առումով նկարիչ Թորոս Տարոնացին նման է Սարգիս Պիծակին, որը նույնպես ծանրաբեռնում է իր ավետարանիչների մանրանկարները զանազան առարկաներով, ճարտարապետական ձևերով և զարդանկարներով։

23 А. Л. Якобсон, «Очерк истории армянского зодчества V—XVII веков», Гос. издательство архитектуры и градостроительства», М.—Л., 1950, стр. 95, 96, 97.

թյամբ, հասած որոշ աստիճանի գրաֆիկականության, որը տեղ-տեղ (ինչպես օրինակ, մարդկանց հագուստի վրա) հասել է մինչև գծերի, ծալքերի գեղազարդման խաղերի։

«Եսայի Նչեցու Աստվածաշնչ»-ում ինչպես և 1323 թվականի ձեռագրում արդեն չկա այն սահունությունը, ծալքերի գծերի բնականությունը ավետարանիչների և տիպիկ ֆիգուրաների հագուստների վրա, որոնք կարելի էր տեսնել «Եսայի Նչեցու Ավետարան»-ում կամ թե № 8936 ձեռագրում։ Հիշյալ Աստվածաշնչից մի տարի առաջ պատրաստված ձեռագրում նույնիսկ և այն էլ հագուստի ծալքերը, ճիշտ է չոր, բայց անատոմիական տեսակետից ճշմարտացի ընդգծում է մարմնի այս կամ այն մասը։ Սակայն, Թորոս Տարոնացու վաղ շրջանի ստեղծագործություններում, դրանց ուշադիր ուսումնասիրության դեպքում, կարելի է նշմարել չորության այն նշանները, որոնք նկարչին հանգեցրին գրաֆիկայնության։ Այլ կերպ ասած, Թորոս Տարոնացու աշխատանքների համեմատության ժամանակ նրանց մեջ կարծես թե նկատվում է փոփոխություն՝ ծալքերի բնական ձևերից դեպի գծերի խաղ, անցում հյութաթանձրությունից չորության։ Բայց դրա հետ մեկտեղ չի կարելի չնշել նաև այն, որ նկարչի սկզբնական, վաղ շրջանի աշխատանքներում, որոնք աչքի են

Նկար 11

Նկար 10

ընկնում իրենց գեղանկարչությամբ, մարդկային ֆիգուրաների կառուցման մեջ առատում են անճշտություններով։ Թորոս Տարոնացու հետագա շրջանի աշխատանքներն, ընդհակառակը, ուժեղ են և մարդկային ֆիգուրաների մեջ սակավ են անատոմիական խեղաթյուրումները և այլն, այսինքն, նկարչի ձեռքի վարժության, վարպետության բարձրացման հետ մեկտեղ նրա ոճի մեջ նկատվում է անկում դեպի չորության փողմը։ Նկարչի ոճը, որ հեռացել էր բուն Հայաստանի մանրանկարչության ավանդական, տեղական վարպետների ոճից, արդեն «Եսայի Նչեցու Աստվածաշունչ»-ը նկարազարդելու շրջանում, մոտենում է այն ոճին, որը տիրապետող էր ԺԴ դարում Կիլիկիայի Հայաստանում, այսինքն «գրքա-մանրանկարային» ոճին, արտահայտված նրբացվածությամբ ու մանրատվածությամբ։ Այնուհետև, եթե Թորոս Տարոնացու վաղ շրջանի գործերում ավետարանիչների և «ավետարանական նշանները»-ի սյուժեների կերպարանքային պատկերումները հորինվածքները կապված են բուն Հայաստանի մանրանկարչության ավանդություններին, Սյունիքի վարպետների արվեստի հետ, ապա նկարչի ուշ շրջանի ստեղ-

Նկար 12

ծագրությունների դա հիշեցնում է ավելի շատ այն օրինակները, որոնք ուժեղ զարգացում են գտել Կիլիկիայում։ Վաղ շրջանի գործերի համար բնորոշ օրինակ կարող է ծառայել ավետարանիչների հորինվածքը աենայի Նշեցու Ավետարան-ում, որը շատ մոտիկից առնչվում է Տյուբինգենի համալսարանի գրադարանի 1113 թվականի Ավետարանին[24], իսկ ուշ շրջանի համար բնորոշ է աենայի Նշեցու Աստվածաշունչ-ը և 1323 թվականի Ավետարանը։

Դրազարկի 1113 թվականի Ավետարանի և Գլաձորի 1307 թվականի աենայի Նշեցու Ավետարան-ի ավետարանիչները իրենց պատկերմամբ նման են իրար, միայն նրանց գեղազարդումները ընդհանուր ոչինչ չունեն իրար հետ։ Ավետարանիչների դրությունը, դիրքը, տիպերը, ֆոնը և այլն երկու ձեռագրերում էլ միատեսակ են։ Այդ երկու ձեռագրերում նույնիսկ համընկնում են աղավաղումներն ու սխալները, ինչպես ցույց է տալիս Սիրարփի Տեր-Ներսեսյանը[25]։ Թորոս Տարոնացու վաղ շրջանի աշխատանքը ցույց է տալիս հակում դեպի անցած դարերի ձեռագրերի գեղազարդման արվեստը։ Այդ հակումը խոսում է հայկական ձեռագրերի գեղազարդման հնագույն արվեստի վերածնունդի մասին։

Նկարիչ Թորոս Տարոնացու հասուն շրջանի ստեղծագործությունների մեջ արդեն այլ պատկեր ենք տեսնում։ Հնի նկատմամբ եղած միտումների հետ միասին հիմնականում տրված է այն սխեման, որը վայելում տարածված էր այդ շրջանում ոչ միայն Գլաձորի և կամ բուն Հայաստանի, այլ նաև Կիլիկյան Հայաստանի նկարիչների մոտ։

Սակայն չնայած հասուն շրջանի աշխատանքներում ավետարանիչների մանրանկարների որոշ առանձնահատկություններին, նրանց հորինվածքը շատ ընդհանուր գծեր ունի ծաղկող Մոմիկի և 1309 թվականի Ավետարանի (Մատենադարան, № 3393) անհայտ նկարչի նման տեսարանների հորինվածքների հետ։

Նկարիչ Թորոս Տարոնացու ստեղծագործությունները խոսում են այլ վարպետների մանրանկարների նկատմամբ նրա ստեղծագործական մոտեցման մասին։ Նա ինչպես իր բազմաթիվ զարդանկարներում, այնպես էլ պատկերագրական տեսարաններում իրեք չի կրկնում իրենց։ Այդ ապացուցելու համար բավական է համեմատել Հովհաննես ավետարանչի մանրանկարը իր աշակերտ Պրոխորիոսի հետ նրա բոլոր ձեռագրերում։ Թեև այդ նկարները տուգրին հայացքից թվում են միօրինակ, սակայն նրանք ինչոր գծերով՝ ձեռքի ժեստով, միմիկայով, գլխի թեքումով և այլ նրբություններով տարբերվում են։ Նկարիչը, մանրանկարների որոշ կոմպոզիցիաների անշեղ փոփոխություններով, հասել է էական տարբերությունների՝ նրանց միջև։ Թորոս Տարոնացու մանրանկարների այդ գծերը և նրա ստեղծագործական մոտեցումը անցյալի ժառանգության ու ժամանակակիցների ստեղծագործություններին ոչ միայն նրան են հատուկ, այլ նաև Գլաձորի մանրանկարչական դպրոցի մյուս վարպետներին։

[24] 1113 թվականի Ավետարանը, չնայած որ պատրաստված է եղել Կիլիկիայում (Դրազարկ), սակայն այն իր բնույթով վերաբերում է բուն Հայաստանի ձեռագրերի արվեստին, քանի որ այդ Ավետարանի նախատիպը եղել է պատրաստված Մեծ Հայքում։ Տե՛ս Սիրարփի Տեր-Ներսեսյան, «Լենինգրադի Մխիթարյան հայերի ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերը» (բնագիր), էջ 212—213։

[25] Այստեղ բնդունելի է Սիրարփի Տեր-Ներսեսյանի դիտողությունն այն մասին, որ նկարիչ Թորոս Տարոնացին լավ ծանոթ է եղել ոչ թե 1113 թվականի Ավետարանին, այլ նրա օրիորինակին։ Տե՛ս Սիրարփի Տեր-Ներսեսյանի հիշված աշխատությունը, էջ 212—213։

(Շարունակելի)

Պ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

(Հոգեոր ճեմարանի
հայոց լեզվի դասախոս)

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Դանկավարժությունը հասարակական գիտությունների թվին պատկանող մի գիտություն է, որն զբաղվում է երիտասարդ սերնդի դաստիարակության գործով։ Դաստիարակությունն— ահա գլխավորը մանկավարժության մեջ։ Իսկ ո՞րն է դաստիարակության գլխավոր առարկան։ Դաստիարակության գլխավոր առարկան բոլոր ժամանակներում եղել է և մնում է մարդը։ Մարդը իր էությամբ գերազանցապես հասարակական էակ է։ Հասարակությունից դուրս մարդը դադարում է մարդ լինելուց։ Դաստիարակել մարդուն, նշանակում է պատրաստել նրան հասարակականորեն, ցույց տալ նրա տեղն ու դերը հասարակության մեջ, ճշտել նրա իրավունքներն ու պարտավորությունները հասարակության մեջ։

Ո՞րն է բնորոշը մարդու համար որպես հասարակական էակի։ Մարդը որպես հասարակական էակ կենդանական աշխարհից զատորոշվում է իր աշխատանքի ունակությամբ։ Աշխատանքը հատուկ է միա՛յն մարդուն։ Իսկ աշխատել նշանակում է մեզ շրջապատող իրականությունը ենթարկել մեր կամքին՝ մեր առաջադրած նպատակի իրականացման համար։ Աշխատել նշանակում է բացահայտվել և բացահայտվելով՝ կատարելագործվել։ Մարդը աշխատանքի պրոցեսում բացահայտվում ու ճանաչում է իրեն։

Աշխատանքի պրոցեսում մենք մարդուն կրթում ենք, այսինքն՝ կրթելով դաստիարակում ենք և, փոխադարձաբար, դաստիարակելով կրթում ենք։ Իսկ կրթել նշանակում է տալ նրան գիտելիքներ, որոնցով նա ի վիճակի լինի ճանաչել իրեն շրջապատող իրականությունը՝ այն անհրաժեշտության դեպքում իրեն ենթարկելու համար։ Ուրեմն, կրթել նշանակում է գիտելիքներ տալ։ Եվ այս ինքնանպատակ ձևով չի կատարվում. աշխարհի և մեզ շրջապատող իրականության ճանաչումը ինքնանպատակ չէ։ Մենք ճանաչում ենք աշխարհը՝ այն ենթարկելու համար մեզ։

Մարդը, հնազանդելով իր հասարակական բնապդին, աշխատում է ոչ միայն գոյատևելու համար, այլ իր գոյությունը հավերժացնելու համար։ Մարդը աշխատելով և իրագործելով իր հասարակական էությունը, փոխակերպվում է նոր տրակի, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդկայնություն։ Այստեղից հետևում է, որ մեր հասարակական գործունեության նպատակը հասարակության գոյատևման խնդրի իրականացումն է։ Հասարակությունը գոյատևելու համար ստեղծում է սկզբունքներ, որոնք ապահովում են այդ խնդրի իրականացումը։

Մարդկային էակի դաստիարակման, այսինքն հասարակականորեն դաստիարակման գլխավոր գործոններից մեկը գեղար-

վեստական գրականությունն է, որը ոչ այլ բան է, եթե ոչ հասարակական գիտակցության դրսևորման ձևերից մեկը։ Իսկ հասարակական գիտակցությունը գիտակցված իրականությունն է։ Գրականությունը միայն դեպքերի ու փաստերի չոր արձանագրությունը չէ։ Գրականությունը կյանքում գոյություն ունեցող փաստերի, դեպքերի, իրադարձությունների, նրանց փոխադարձ կապերի և պայմանավորվածության ստեղծագործորեն վերամշակված դրսևորումն է։ Գրականությունը մեր ձեռքին մի հզոր միջոց է, որով ոչ միայն ճանաչում ենք մենք մեզ և մեզ շրջապատող իրականությունը, այլև այդ բոլորը գիտակցում ենք։ Այստեղից պարզ պետք է դառնա գրականության հսկայական դերն ու նշանակությունը մարդու դաստիարակման գործում։ Սովետական խոշորագույն մանկավարժ Մակարենկոն հետևյալ կերպ է դնում մարդու դաստիարակման խնդիրը. «Դաստիարակության նպատակն է ցույց տալ այն հեռանկարը, որի վրա պետք է հիմնված լինի դաստիարակվող էակի վաղվա ուրախությունը»։

Գեղարվեստական գրականությունը ոչ միայն վերարտադրում է կյանքը այնպես, ինչպես նա կա, այլ նաև այն վերստեղծում և սրբագրում է, ցույց է տալիս այն վեհ նպատակներն ու իդեալները, որոնց իրականացման ուղղված պետք է լինի մարդու հասարակականորեն կազմակերպված աշխատանքային գործունեությունը։ Գրականությունը միմիայն հայելի չէ, որտեղ արտացոլվում է կյանքը։ Գրականությունը վերամշակված և վերստեղծված իրականությունն է, այսինքն գիտակցված և իմաստավորված իրականությունը։ Իսկ վերստեղծել, իմաստավորել նշանակում է զատորոշել, սահմանազատել, ցույց տալ լավն ու վատը, գեղեցիկն ու տգեղը, անցողիկն ու հավիտենականը, ազնիվն ու անազնիվը, վեհն ու ստորը, մի խոսքով՝ կյանքը ցույց տալ իր դիալեկտիկական միասնության մեջ։ Այստեղից՝ հասարակական գիտակցության կազմավորման գործում այն հսկայական ներգործությունը, որ ունի գրականությունը։ Գրականության ներգործությունը կայանում է ընդգծելու արարքի մեջ, այսինքն ընդունելու և մերժելու, հաստատելու և ժխտելու, սիրելու և ատելու արարքի մեջ։

Մենք գեղեցկի ճաշակը մարդու մեջ դաստիարակում ենք ոչ միայն ցույց տալով գեղեցիկը իր ամբողջ ներդաշնակությամբ, ձգողական հրապույրով, այլ նաև ցույց տալով տգեղը իր ամբողջական ահավորության մեջ, իր այլանդակությամբ։ Մենք մարդու մեջ հերոսություն ենք դաստիարակում ոչ միայն հերոսական կերպարների պատկերումով, այլ նաև ոչ հերոսական արարքների պատկերման հակազդեցությամբ։

Գրականությունը կյանքի պատկերավոր արտահայտությունն է, որովհետև կյանքի արտահայտությունը կարող է լինել նաև նկարագրական, այսինքն ոչ կապակցված և ոչ հուզական։ Իսկ մարդու վրա ազդում է միայն պատկերավոր խոսքը, որովհետև պատկերի մեջ միայն դրսևորվում է ընդհանուրը՝ անձնականացված մասնակիի միջոցով։ Գրականությունը կյանքը վերարտադրում է պատկերներով, այսինքն տիպերով, տիպական կերպարներով, որոնք որպես արձան մի տեղում կանգնած չեն մնում, այլ շարժվում, գործում են և իրենց գործունեությամբ բացահայտում են ողջ մարդկայինը իր անհուսափելի հակասություններով, այսինքն խոյանքներով և ընկրկումներով, բարձրացումներով և անկումներով, բացահայտում են կյանքը իր մակերեսվոր խորություններով, մեկ խոսքով՝ իր ամբողջական միասնությամբ։

Հետևելով գեղարվեստական որևէ մեկ երկի մեջ պատկերված այս կամ այն հերոսի գործունեությանը, մենք ճանաչում ենք գիտակցում ենք կյանքը իր զարգացման, իր շարժվող պրոցեսում. նրանից վերցնում ենք այն, ինչ համահնչյուն է մեր էությանը հետ, զգվանքով ետ ենք վանում այն, ինչ չի հաշտվում մեր էության, մեր հասարակական եսի հետ։ Գրականության առավելություններից մեկն էլ այն է, որ նա կյանքը վերարտադրում է ժամանակի ամբողջության մեջ։ Գրականության մեջ մարդու գործունեության սահմանները անհամեմատորեն ընդարձակվում են, ժամանակի երեք բաժանումները միաձուլվելով, կազմում են մի ամբողջական ներկա, որի մեջ մենք կյանքը տեսնում և ընկալում ենք իր անսահման մեծությամբ։

Շնորհիվ գրականության մոգական ուժի, հայ ժողովրդի ազատագրական պայքարը Ե դարում դարձել է մեզ համար մի ամբողջական ներկա, որի մեջ շատ հստակ գծերով մեզ պատկերանում է մեր նախնիների գործունեությունը։ Երբ բաց ենք անում սովետահայ մեծանուն գրող Դ. Դեմիրճյանի «Վարդանանց վեպը և այն կարդում, մեր աչքի առաջ իր վիթխարի հասակով, իր ողջ հերոսական գործունեությամբ արձանանում է Վարդանի՝ հայրենասեր զորավարի վսեմ կերպարը։ Վարդանը շնչում և ապրում է իր ժողովրդի կյանքով։ Նա սուր ի ձեռին, իր կործանման գնով պաշտպանում է այն բոլոր սրբությունները, որոնցով պայմանավորված էր հայ ժողովրդի կյանքը որպես

դարերաբաղաքական միասնությամբ ապրող ժողովրդի կյանքը։ Գործողությունից գործողություն, արարքից արարք, խոհից խոհ, ապրումից ապրում, զգացումից զգացում հետևելով Վարդանի ամբողջ գործունեությանը, մեզնից ամեն մեկը պիտի ուզենար ապրել նման կյանքով, մեռնել նման մահով։ Վարդանը մի ոգեշնչող օրինակ է, որ միշտ օրս էլ մեզ համակում և ոգևորում է և՝ հերոսականությամբ, և՝ հայրենասիրությամբ։ Վարդանը, շնորհիվ գեղարվեստական խոսքի հզոր ներգործության, պատկանում է ոգիների թվին, որոնք մեզ հետ միասին շնչում, ապրում և գործում են։ Նույն շրջանից ահա և Վասակ Սյունիի դավաճանական գործունեությունը։ Նրա անփառունակ վախճանը միթե բավական չէ՞, որ յուրաքանչյուր ոք իրենից դեն վանի վասն փառասիրության գործված դավաճանության, ազգադավության զզվելի արարքը։ Այս երկու տիպերի (դրական և բացասական) հակադրությունից բացահայտվում է միայն մեկ ճշմարտություն. այն է՝ պետք է լինել ազնիվ և հայրենասեր, պետք է անձնական զոհել հասարակականին՝ ապրելու համար զերծ գալու ուրախությամբ։ Արդյոք կարիք կա՞ ընդգծելու այն հսկայական դերն ու նշանակությունը, որ ունի և կունենա «Վարդանանք» վեպի ընթերցումը մեր երիտասարդ սերնդի հայրենասիրության դաստիարակության գործում։ Ինչ կարժենար աշխարհի ամեն տեսակ գիտելիքներով պատրաստված մարդը, եթե նա գործեր այնպես, ինչպես գործել է Վասակը և մեռներ նրա անփառունակ մահով։ Բավական չէ միայն գիտելիքներ ձեռք բերելը. դա դաստիարակության գործի մեկ կողմն է միայն. ավելի կարևոր է այն, որ ձեռք բերված գիտելիքները ի սպաս դրվեն վեհ գործի, ազնիվ նպատակների համար։

«Օթելլո» ողբերգության մեջ հանանում հերոսի՝ նախանձի թույնով մրրկած ապրումներին ծանոթանալուց հետո, արդյոք կլինե՞ր այնպիսի ընթերցող, որ հանձն առներ այրվել նման կրակով։ Այստեղ Շեքսպիրը մեզ պատկերելով նախանձը, դվսավոր հերոսի չղանիգ գալարումների մեջ իր ողջ ահավորությամբ, մեզ ապահով է դարձնում նրա կործանիչ ոտնձգությունների դեմ։ Եվ այսպես կարելի է շատ ու շատ օրինակներ բերել զանազան հեղինակների գործերից, որոնցում ամեն մի հերոս, իրագործելով իր ճակատագիրը, ազդում է մեր վրա և մեզ կողմնորոշում կյանքում։

Գեղարվեստական երկը ոչ միայն ծառայում է կյանքի պատկերմանը, այլ նաև նպաստում է հասարակության բարքերի, անհատական զգացմունքների ազնվացմանը։ Նա ներգործուն օրինակներով մեզ դուրս է տալիս այն, ինչ պետք է ընդունենք և այն, ինչ պետք է մերժենք։ Նա մեզ դուրս է տալիս այն լուսավոր կիսաները, այն ուղիները, որոնցով առաջնորդվելով՝ մենք հասնում ենք ուրախության։ Գեղարվեստական գրականությունը մեզ ծանոթացնում է ոչ միայն մարդկային գործունեության բոլոր ծալքերին, այլ նաև մեզ վերահաստատում է այն գաղափարության մեջ, որ մենք ունենք մեզ շրջապատող իրականության հետ։ Գեղարվեստական կենդանի խոսքը ամբողջ համադույզը դարձնում է մի կենդանի իրականություն, որից առկայծում, արտածորվում է տիպերական ուրախությունը, որը մեզ վերցնելով իր ալիքների վրա, մեզ օրորում է մեր ինքնաճանաչման, մեր ամբողջացման անհուն ուրախությամբ, մեզ օրորում է այն անանձնական ուրախությամբ, որ Մեծարենցը քաղում էր ամեն մի ծառից, ամեն մի ծաղկից, ամեն մի երգիքից։

Գեղարվեստական գրականության առաջին նպատակը դաստիարակման գործում այն է, որ նա ծառայում է մարդու լեզվական կուլտուրայի զարգացմանը։ Գեղարվեստական խոսքի ուսումնասիրությամբ մենք սովորում ենք գեղեցիկ բաների, գեղեցիկ ու թեավոր դարձվածքների ու արտահայտությունների ճիշտ ու տեղին գործածությունը։ Մենք ծանոթանում ենք այն արտահայտչական միջոցներին՝ էպիտետներին, համեմատություններին, փոխաբերությունների, որոնց շնորհիվ լեզվական ընդհանրությունը անհատականացվելով՝ դառնում է պատկերավոր և ավելի ներգործուն։ Իսկ լեզվական կուլտուրայի զարգացումը միաժամանակ մտածողության զարգացում է, որովհետև մենք մտածում ենք լեզվական մատերիայի վրա։ Գեղարվեստական խոսքը, որ իր դրսևորման ձևերի մեջ բազմազան է, մեզ ծանոթացնում է այն բոլոր մանրամասներին, որոնց օրգանապես կապակցված կառուցվածքով մեզ տրվում է կյանքի ռեալ և իմաստավորված պատկերը։ Գիտելիքները թեև մեզ տալիս են նույնպես կյանքի ճանաչումը, վերացական հասկացողություններ են, խիստ մասնակի, միմիայն այս կամ այն ընդգավառին հատուկ։ Գեղարվեստական խոսքով տրված իրականությունը կյանքում գոյություն ունեցող երևույթների (մասնակի կամ ընդհանուր) կապակցված, իմաստավորված դրսևորումն է, ուստի կյանքի ռեալ և ամբողջական ճանաչումը կատարվում է միայն գեղարվեստական խոսքի, գեղարվեստական երկի միջոցով։

Աշխարհի մասին մեր ունեցած գիտելիքները իմաստավորվում են միայն գեղարվես-

տակտն խոսքի ներգործությամբ մեկ ամբողջական կյանքի ռեալ պատկերման մեջ։ Կյանքը գործունեության երկարատև շղթա է։ Գիտելիքները մեզ տալիս են այն միջոցները, որոնցով մենք գործում ենք։ Իսկ մեր գործունեության նպատակը բացահայտվում է մեր անձնականության դրսևորմամբ և իմաստավորմամբ։ Մենք մեր առաջ նպատակներ ենք դնում, որոնց իրականացմանն ենք ծառայեցնում մեր ձեռք բերած գիտելիքները։ Գեղարվեստական խոսքի ներգործությունը նրանումն է, որ իր կերտած հերոսների գործունեությամբ մեզ տալիս է այն հեռանկարները, այն նպատակները, որոնց գիտակցումով միայն մեր ապրելու պրոցեսը դառնում է իմաստալի, նպատակասլաց։ Գեղարվեստական երկը մեզ սովորեցնում է ապրել այնպես, ինչպես պետք է հասարակության մեջ։ Իսկ առանց նպատակի առկայության, մարդկային գործունեությունը բովանդակազուրկ է և ձանձրալի։

Կյանքում չկա մի երևույթ, որը այս կամ այն չափով, այս կամ այն ձևով, գեղարվեստական խոսքի առարկան եղած չլինի։ Կյանքի բոլոր երևույթների ընկալումը արվեստագետ ստեղծագործողի կողմից կյանքի գեղեցիկ և ընտրության ընկալումն է։ Ուստի հաջողված գեղարվեստական երկի ընթերցումը մարդում և աղնվացնում է մեր զգայարանները, որոնցով մենք մեզ շրջապատող իրականությունը տեսնում ենք ոչ այնպես, ինչպես թվում է, այլ այնպես, ինչպես նա կա բոլորի հանդեպ ունեցած իր հարաբերակցության մեջ։ Գեղարվեստական երկը ոչ միայն մեզ ծանոթացնում է մեզ շրջապատող իրականությանը, այլ նաև մեզ սովորեցնում է այն սիրել՝ այդ իրականությունը մեզ վերարտադրելով իր ամբողջական, ներդաշնակ, միասնական գեղեցկության մեջ։

Հայրենի քնությունից վերցված այս կամ այն բնանկարի գեղարվեստորեն հաջողված վերարտադրությունը մեզ տրամադրում է սիրել մեր հայրենիքը, իսկ սիրել մեր հայրենիքը նշանակում է աշխատել ու պայքարել նրա համար։ Մարդ պաշտպանում է միայն այն, ինչ սիրում է։ Արդյոք Թումանյանի, Իսահակյանի գեղարվեստական ստեղծագործությունների մեջ մեր հայրենի գեղեցկությունների վերարտադրությունը քիչ դե՞ր կարող է կատարել մեր հայրենասիրական զգացումների մշակման ու զարգացման գործում։ Նրանց երկերը կարդալիս մեկի սիրտը հուզվում է այն գեղեցկության զգայնությամբ, որով շնչում են մեր հայրենիքի ամեն մի քարը, ամեն մի ծաղիկը, ամեն մի ծառը, ամեն մի հովիտը։ Մենք տարվում ենք մեր լեռնային արշալույսների, մեր ծիածանավառ երփներանգ վերջալույսների, մեր աստղածորան գիշերների շռայլ գեղեցկություններով։ Առանց գեղարվեստական խոսքի մոգական ուժին, մենք չենք կարող տեսնել ծառը այնպես, ինչպես նա կա, ծաղիկը՝ ինչպես նա կա ողջ ստեղծագործության ներդաշնակ կառուցվածքի մեջ, մարդը՝ ինչպես նա կա, ապրում է, շնչում է։ Հենց սրանով է, այսինքն ստեղծագործորեն վերարտադրված ռեալ ու ամբողջական կյանքի միջոցով է, որ գեղարվեստական գրականության դերն անհուն ու անգնահատելի է դաստիարակության գործում։ Մեկանից ամեն մեկը, ինչպես մեծ Գորկին է ասել, իր մեջ եղած ողջ լավագույնի համար պարտական է գրքերի հարուստ աշխարհին։ Ի՞նչ կարժենային մեր գիտելիքները, եթե մենք չգիտակցեինք այն նպատակները, որոնց համար ապրում ենք ու գործում։ Իսկ ոչ մի տեղ այդ նպատակները այնքան պայծառ ու ամբողջական մեզ չեն տրվել, որքան գեղարվեստական գրականության մեջ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ կյանքի ամբողջական, համայնապարփակ արտացոլումը։ Շնորհիվ գեղարվեստական խոսքի հզոր ներգործության, այսօր մեկանից ամեն մեկը ապրում է հազարամյակների կյանքով։ Շնորհիվ գեղարվեստական գրականության՝ դարերի ընթացքում ինքն իրեն բացահայտող մեծատառով գրված Մարդու փորձն ու գիտությունը մեզ են հասել։ Երբ կարդում ենք հունական գրականության խոշորագույն կլասիկների երկերը, նրանց ապրած ժամանակաշրջանը՝ իր բոլոր մանրամասներով, մարդկանց ապրումներով և արարքներով, դադարում է մեզ համար անցյալ լինելուց և միախառնվելով մեր ներկային, մեր ներկան դարձնում է ավելի ամբողջական, ավելի հարուստ, ավելի բովանդակալից։ Մարդը որպես առանձին էակ ժամանակավոր է և անցողիկ. բայց մարդը վերածված մարդկայնության՝ հավիտենական է ու անվիրջ։ Եվ գրականությունը այդ անանց հավիտանականության օվկիանոսանման հայելիացումն է և մեծագույն դպրոցը, որտեղ սովորում ենք այն արվեստը, որ պետք է իմանալ և գիտենալ՝ որպես մարդ գործելու, աշխատելու և ապրելու համար։

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
(1864—1957)

Հուլիսի 11-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, 93 տարեկան հասակում, Սուխումիում ի Տեր հանգչավ բաղմավաստակ Տ. Կարապետ քահանա Կարապետյանը։

Հանգուցյալը ծնվել է Ախալքալակի շրջանի Մաջարդյա գյուղում 1864 թվականին։ Սկզբնական կրթությունը նա ստանում է Ախալքալակի շրջանի Արագվա գյուղի ծխական դպրոցում, որն ավարտելուց հետո 1888 թվականին ուղարկվում է Ս. Էջմիածին, առաջնորդարան հմտանալու հայ եկեղեցական արարողությունների և ծիսակատարությունների կատարման մեջ։ 1892 թվականին նա վերադառնում է հայրենի գյուղը և Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ընդունություն անում։ 1907 թվականին Սանահին վանքում Մաջարդյա գյուղի համար ձեռնադրվում է քահանա։ 1936 թվականին տեղափոխվում է Սուխումի քաղաքը, որտեղ պաշտոնավարում է մինչև իր մահը։

Հանգուցյալը իր հոտից սիրված քահանաներից էր։ 1951 թվականին Արջանիկ-հիշատակ Տ. Տ. Գևորգ Զ. Կաթողիկոսի սրբատուր կոնդակով նա պարգևատրվել է քահանայական լանջախաչով, իր արդյունավետ և եկեղեցաշեն գործունեության համար։

Հանգուցյալը, իր նահապետական տարիքով հանդերձ, իսկական ներկայացուցիչն էր անցյալ սերնդի հայ քահանայության։

Հանգի՜ստ և խաղաղություն՝ իր հոգուն։

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ